«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ԲՆԱԳԻՏԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №1

«21» օգոստոսի 2025թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին ՄՄ հետևյալ անդամները՝

1. Անուշ Դաջունց (մ/մ նախագահ)
2. Սիրուշ Բաղդասարյան
3. Արփինե Մարտիրոսյան
4. Ալլա Զեյնալյան
5. Հերմինե Ալավերդյան
6. Օլյա Ղուլյան
7. Արմանուշ Բակունց
8. Շահանե Ակլունց
9. Մերի Մկրտչյան
10. Մարետա Հարությունյան
11. Կարինե Արզումանյան
12. Ալեքսանդր Հայրապետյան

Նիստին ներկա էր տնօրենի պաշտոնակատար Սերգեյ Ավանեսյանը, տնօրենի տեղակալ Արաքսյա Առստամյանը, ուսուցչի օգնական Արփինե Ծատրյանը:

Ո Ր Ա Կ Ա Ր Գ

1. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատում:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

2. 2025-2026 ուսումնական տարվա բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախագահի ընտրություն և կազմի հաստատում:

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

3. 2024-2025 ուսումնական տարվա կատարած աշխատանքների ամփոփում և նոր ուսումնական տարվա անելիքներն ու խնդիրները:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

4. 4-րդ և 9-րդ դասարաններում ՀՊՉ ներդրման և նոր դասագրքերի վերաբերյալ հարցերի քննարկում:

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

5. 2025-2026 ուսումնական տարվա բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման ժամաբաշխման քննարկում:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

6. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախագահի 2025-2026 ուսումնական տարվա աշխատանքային պլանի, առարկայական ծրագրերի, ուսումնական պլանի, օրացուցային-թեմատիկ պլանների, արտադասարանական խմբակների օրացուցային-թեմատիկ պլանների քննարկում:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

7. Նախագծային աշխատանքների թեմաների, պլանների, թեմատիկ պլանների, ղեկավարների, մատյանների և հանձնաժողովների կազմի քննարկում:

(զեկուցող՝ Ա.Առստամյան)

8. Բնագիտամաթեմատիկական առարկաներից տրվող թեմատիկ գրավոր աշխատանքների, լաբորատոր աշխատանքների, գործնական աշխատանքների և թեմաների ամփոփումների քանակի ու տեսակների քննարկում:

(զեկուցող՝ Ա.Դաջունց)

9. Ըստ նոր ՀՊՉ-ների 2-9-րդ դասարաններում գնահատման չափանիշների հաստատում:

(զեկուցող՝ Ա.Առստամյան)

10. Աշակերտների ընդգրկվածություն երկարօրյա խմբերում։

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

11. 2025-2026 ուսումնական տարվա ԱՈՒՊ-ների քննարկում։

(զեկուցող՝ Ա. Ծատրյան)

12. Բնագիտամաթեմատիկական առարկաների մասնախմբերում ցուցադրական դասերի, դաս-միջոցառումների կազմակերպման հարցերի քննարկում:

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

13. 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում բնագիտամաթեմատիկական մեթոդմիավորման մասնախմբի դասալսումների, փոխադարձ դասալսումների իրականացում:

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Լսեցին 1. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա.. Դաջունց)

Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

Արտահայտվեցին՝ Մ/մ անդամները

Որոշեցին՝ Հաստատել 2025-2026 ուսումնական տարվա բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 1-ին նիստի օրակարգը:

Լսեցին 2. 2025-2026 ուսումնական տարվա բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախագահի ընտրության և կազմի հաստատման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա.Առստամյան)

Զեկուցողն առաջարկեց փոփոխություն չկատարել և շարունակել պահպանել գործող կազմը՝ բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախագահ նշանակելով Անուշ Դաջունցին։ Նա ընդգծեց, որ մեթոդմիավորման կազմում ընդգրկված են հետևյալ առարկաները՝ «Մաթեմատիկա», «Հանրահաշիվ», «Երկրաչափություն», «Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Աշխարհագրություն», «Հայաստանի աշխարհագրություն», «Բնություն», «ԹԳՀԳ», «Տեխնոլոգիա» և «Շախմատ»։

Զեկուցողը նշեց, որ գործող կազմն ապահովում է առարկայական փոխկապակցվածություն, արդյունավետ համագործակցություն և մեթոդական աշխատանքների շարունակականություն՝ նպաստելով ուսումնական գործընթացի որակի բարձրացմանը։

Արտահայտվեցին՝ Ա. Մարտիրոսյանը

Հաշվի առնելով նախորդ ուսումնական տարում կատարված արդյունավետ աշխատանքները և մեթոդական գործունեության բարձր մակարդակը՝ Արփինե Մարտիրոսյանն առաջարկեցին 2025-2026 ուսումնական տարում բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախագահը՝ Անուշ Դաջունցին, թողնել անփոփոխ։

Որոշեցին՝ Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախագահ ընտրել Անուշ Դաջունցին և հաստատել մեթոդմիավորման նոր կազմը՝ ընդգրկելով «Մաթեմատիկա», «Հանրահաշիվ», «Երկրաչափություն», «Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Աշխարհագրություն», «Հայաստանի աշխարհագրություն», «Բնություն», «ԹԳՀԳ», «Տեխնոլոգիա» և «Շախմատ» առարկաները դասավանդող ուսուցիչներին։

Լսեցին 3. 2024-2025ուսումնական տարվա բնագիտամաթեմատիկական մեթոդմիավորման կատարած աշխատանքների ամփոփման և նոր ուսումնական տարվա անելիքների ու խնդիրների մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը ներկայացրեց 2024-2025 ուսումնական տարում բնագիտամաթեմատիկական մեթոդմիավորման կատարված աշխատանքների ամփոփ հաշվետվությունը, ինչպես նաև նոր՝ 2025-2026 ուսումնական տարում նախատեսվող անելիքները։ Քննարկվեցին նախորդ տարվա ընթացքում արձանագրված թերությունները, դրանց վերացման ուղիները և մեթոդական աշխատանքի արդյունավետության բարձրացման հնարավոր ուղղությունները։ Զեկուցողն անդրադարձավ նաև առաջիկա ուսումնական տարում սպասվող փոփոխություններին և դրանց իրականացման համար անհրաժեշտ կազմակերպչական ու մասնագիտական քայլերին։

Արտահայտվեցին՝ Ս. Բաղդասարյանը, Հ. Ալավերդյանը։

Արտահայտվողները նշեցին, որ, հիմք ընդունելով բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախագահի հաշվետվությունը, 2024-2025 ուսումնական տարում մեթոդմիավորման անդամ ուսուցիչների աշխատանքը գնահատում են լավ։ Նրանք ընդգծեցին, որ ուսուցիչները ցուցաբերել են պատասխանատու վերաբերմունք, նպաստել են ուսումնառության որակի բարձրացմանը և նպաստավոր պայմաններ են ստեղծել աշակերտների գիտելիքների ամրապնդման ու զարգացման համար։

Որոշեցին՝ Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 2024-2025 ուսումնական տարվա կատարողականն ընդունել ի գիտություն։

Լսեցին 4. 4-րդ և 9-րդ դասարաններում ՀՊՉ ներդրման և նոր դասագրքերի հետ կապված հարցերի քննարկում։

(զեկուցող՝ Ա.Առստամյան)

Զեկուցողը տեղեկացրեց, որ 2025-2026 ուսումնական տարում 4-րդ և 9-րդ դասարաններում ուսուցումը կիրականացվի նոր հանրակրթական պետական չափորոշչով։ Նա ընդգծեց, որ նշված դասարաններում ուսուցումը պետք է կազմակերպվի նոր դասագրքերով՝ հիմնվելով երաշխավորված նոր ծրագրերի վրա։ Այդ նպատակով անհրաժեշտ է նախապես մանրակրկիտ ուսումնասիրել նոր դասագրքերն ու ծրագրերը, դրանց հիման վրա մշակել օրացուցային-թեմատիկ պլանները և ուսումնական գործընթացը կազմակերպել չափորոշչային պահանջներին լիովին համապատասխան։

Արտահայտվեցին՝ Օլ. Ղուլյանը, Ա. Մարտիրոսյանը։

Արտահայտվողները կարևորեցին նախորդ ուսումնական տարվա ընթացքում իրականացված աշխատանքներն ու դրանց արդյունքների ամփոփումը, որոնք առնչվում էին նոր Հանրակրթական պետական չափորոշչի ներդրման գործընթացին՝ 2-3-րդ և 5-8-րդ դասարաններում։ Նշվեց, որ ձեռքբերված արդյունքները կարևոր հիմք են առաջիկա ուսումնական տարվա արդյունավետ կազմակերպման և շարունակական զարգացման համար։

Օլյա Ղուլյանը շեշտեց գնահատման ձևերի փոփոխության կարևորությունը՝ ընդգծելով ամփոփումների պատշաճ կազմակերպման և գնահատման բոլոր ձևերի նպատակային ու հավասարակշռված կիրառման անհրաժեշտությունը։

Քննարկման ընթացքում ուշադրություն դարձվեց նաև նոր և երաշխավորված դասագրքերի ուսումնասիրությանն ու դրանց արդյունավետ կիրառման հարցերին՝ նպատակ ունենալով ապահովել ուսումնական գործընթացի որակական առաջընթաց։

Միաժամանակ կարևորվեց նախապատրաստական աշխատանքների ժամանակին իրականացումը՝ կապված քննությունների կարգի փոփոխությունների հետ, որպեսզի ինչպես ուսուցիչները, այնպես էլ սովորողները լիարժեքորեն պատրաստ լինեն առաջիկա փոփոխություններին և նոր պահանջներին։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 4-րդ և 9-րդ դասարաններում ՀՊՉ ներդրման և նոր դասագրքերի հետ կապված հարցերի մասին քննարկման արդյունքները։

Լսեցին 5. 2025-2026 ուսումնական տարվա բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման ժամաբաժանման քննարկման մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը նշեց, որ 2024-2025 ուսումնական տարվա վերջին՝ 11-րդ նիստի ընթացքում, ներկայացվել և քննարկվել է բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման կազմում ընդգրկված առարկաների նախնական ժամաբաժանումը։ Նա ընդգծեց, որ քննարկման ընթացքում դիտարկվել են առաջարկները՝ ուղղված ժամաբաժանման առավել արդյունավետ բաշխմանը և ուսումնական գործընթացի կազմակերպման բարելավմանը։

Արտահայտվեցին՝ Ա.Առստամյանը, Ա. Մարտիրոսյանը, Կ. Արզումանյանը։

Արաքսյա Առստամյանը մանրամասն ներկայացրեց 2025-2026 ուսումնական տարվա ուսումնական պլանը, մանրամասն ներկայացրեց առարկայացանկը, շաբաթական ժամերի առավելագույն քանակը։ Արաքսյա Առստամյանը նաև խոսեց դպրոցական և անհատական (ընտրովի) բաղադրիչների տրամադրման մասին, առաջարկեց դպրոցական բաղադրիչը տրամադրել հետևյալ սկզբունքով.

- 1-ին դասարանում դպրոցական բաղադրիչի 4 դասաժամը հատկացվում է՝ «Մայրենի» առարկային՝ 1 դասաժամ, «Մաթեմատիկա» առարկային՝ 1 դասաժամ, «Կերպարվեստ» առարկային՝ 1 դասաժամ, «Ֆիզկուլտուրա» առարկային՝ 1 դասաժամ։
- 2-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 5 դասաժամը հատկացվում է՝ «Մայրենի» առարկային՝ 1 դասաժամ, «Մաթեմատիկա» առարկային՝ 1 դասաժամ, «Ես և շրջակա աշխարհը» առարկային՝ 2 դասաժամ, «Տեխնոլոգիա» առարկային՝ 1 դասաժամ։
- 3-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 4 դասաժամը հատկացվում է՝ «Մայրենի» առարկային՝ 1 դասաժամ, «Ռուսաց լեզու» առարկային՝ 1 դասաժամ, «Մաթեմատիկա» առարկային՝ 1 դասաժամ, «Ես և շրջակա աշխարհը» առարկային՝ 1 դասաժամ։
- 4-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 4 դասաժամը հատկացվում է՝ «Մայրենի» առարկային՝ 1 դասաժամ, «Ռուսաց լեզու» առարկային՝ 1 դասաժամ, «Մաթեմատիկա» առարկային՝ 1 դասաժամ, «Ես և շրջակա աշխարհը» առարկային՝ 1 դասաժամ։
- 5-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 5 դասաժամը հատկացվում է՝ «Անգլերեն» առարկային՝ 2 դասաժամ, «Մաթեմատիկա» առարկային՝ 1 դասաժամ, «ԹԳՀԳ» առարկային՝ 1 դասաժամ, «Տեխնոլոգիա» առարկային՝ 1 դասաժամ։
- 6-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 6 դասաժամը հատկացվում է՝ «Անգլերեն» առարկային՝ 2 դասաժամ, «Մաթեմատիկա» առարկային՝ 1 դասաժամ, «ԹԳՀԳ» առարկային՝ 1 դասաժամ, «Տեխնոլոգիա» առարկային՝ 1 դասաժամ, «Ֆիզկուլտուրա» առարկային՝ 1 դասաժամ։
- 7-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 4 դասաժամը հատկացվում է՝ «Անգլերեն» առարկային՝ 2 դասաժամ, «Հայոց լեզու» առարկային՝ 1 դասաժամ, «Ռուսաց լեզու» առարկային՝ 1 դասաժամ։
- 8-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 3 դասաժամը հատկացվում է՝ «Անգլերեն» առարկային՝ 2 դասաժամ, «Գրականություն» առարկային՝ 1 դասաժամ։
- 9-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 2 դասաժամը հատկացվում է՝ «Անգլերեն» առարկային՝ 2 դասաժամ։

Արաքսյա Առստամյանն առաջարկեց նաև 1-9-րդ դասարաններում անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել հետևյալ սկզբունքով.

- 1-ին դասարանում անհատական (դպրոցական) բաղադրիչից ժամաքանակ չի հատկացվում
- 2-րդ դասարանում շաբաթական 6 դասաժամ (3 դասարան, յուրաքանչյուրը՝ 2-ական դասաժամ) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել արտադասարանական խմբակների իրականացմանը
- 3-րդ դասարանում շաբաթական 6 դասաժամ (3 դասարան, յուրաքանչյուրը՝ 2-ական դասաժամ) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել արտադասարանական խմբակների իրականացմանը
- 4-րդ դասարանում շաբաթական 6 դասաժամ (3 դասարան, յուրաքանչյուրը՝ 2-ական դասաժամ) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել արտադասարանական խմբակների իրականացմանը
- 5-րդ դասարանում շաբաթական 3 դասաժամ (3 դասարան, յուրաքանչյուրը՝ 1-ական դասաժամ) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել արտադասարանական խմբակների իրականացմանը, այդ թվում՝ «Առողջ ապրելակերպ» պարտադիր խմբակին՝ յուրաքանչյուր դասարանում շաբաթական 0,5 դասաժամ (կիսամյակի ընթացքում՝ 1 դասաժամ)։
- 6-րդ դասարանում շաբաթական 6 դասաժամ (3 դասարան, յուրաքանչյուրը՝ 2-ական դասաժամ) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել արտադասարանական խմբակների իրականացմանը, այդ թվում՝ «Առողջ ապրելակերպ» պարտադիր խմբակին՝ յուրաքանչյուր դասարանում շաբաթական 0,5 դասաժամ (կիսամյակի ընթացքում՝ 1 դասաժամ)։
- 7-րդ դասարանում շաբաթական 12 դասաժամ (3 դասարան, յուրաքանչյուրը՝ 4-ական դասաժամ) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել՝
  - արտադասարանական խմբակների իրականացման համար՝ շաբաթական 6 դասաժամ, այդ թվում՝ «Առողջ ապրելակերպ» պարտադիր խմբակին՝ յուրաքանչյուր դասարանում շաբաթական 0,5 դասաժամ (կիսամյակի ընթացքում՝ 1 դասաժամ)։
  - նախագծային աշխատանքների իրականացման համար՝ շաբաթական 6 դասաժամ։
- 8-րդ դասարանում շաբաթական 12 դասաժամ (3 դասարան, յուրաքանչյուրը՝ 4-ական դասաժամ) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել՝
  - արտադասարանական խմբակների իրականացման համար՝ շաբաթական 6 դասաժամ, այդ թվում՝ «Առողջ ապրելակերպ» պարտադիր խմբակին՝ յուրաքանչյուր դասարանում շաբաթական 0,5 դասաժամ (կիսամյակի ընթացքում՝ 1 դասաժամ) և «Մասնագիտական կողմնորոշման ակումբ» պարտադիր խմբակին՝ յուրաքանչյուր դասարանում շաբաթական 1 դասաժամ (երկու կիսամյակների համար)։
  - նախագծային աշխատանքների իրականացման համար՝ շաբաթական 6 դասաժամ։
- 9-րդ դասարանում շաբաթական 12 դասաժամ (3 դասարան, յուրաքանչյուրը՝ 4-ական դասաժամ) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել՝

- արտադասարանական խմբակների իրականացման համար՝ շաբաթական 6 դասաժամ, այդ թվում՝ «Առողջ ապրելակերպ» պարտադիր խմբակին՝ յուրաքանչյուր դասարանում շաբաթական 0,5 դասաժամ (կիսամյակի ընթացքում՝ 1 դասաժամ) և «Մասնագիտական կողմնորոշման ակումբ» պարտադիր խմբակին՝ յուրաքանչյուր դասարանում շաբաթական 1 դասաժամ (երկու կիսամյակների համար)։
- նախագծային աշխատանքների իրականացման համար՝ շաբաթական 6 դասաժամ։

Որոշեցին՝ 1. Հաստատել 2025-2026 ուսումնական տարվա Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման կազմում ընդգրկված առարկաների ժամաբաժանումը (կցվում է)։

2. Դպրոցական բաղադրիչը տրամադրել հետևյալ սկզբունքով.
   - 1-ին դասարանում դպրոցական բաղադրիչի 4 դասաժամը հատկացվում է՝ «Մայրենի» առարկային՝ 1 դասաժամ, «Մաթեմատիկա» առարկային՝ 1 դասաժամ, «Կերպարվեստ» առարկային՝ 1 դասաժամ, «Ֆիզկուլտուրա» առարկային՝ 1 դասաժամ։
   - 2-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 5 դասաժամը հատկացվում է՝ «Մայրենի» առարկային՝ 1 դասաժամ, «Մաթեմատիկա» առարկային՝ 1 դասաժամ, «Ես և շրջակա աշխարհը» առարկային՝ 2 դասաժամ, «Տեխնոլոգիա» առարկային՝ 1 դասաժամ։
   - 3-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 4 դասաժամը հատկացվում է՝ «Մայրենի» առարկային՝ 1 դասաժամ, «Ռուսաց լեզու» առարկային՝ 1 դասաժամ, «Մաթեմատիկա» առարկային՝ 1 դասաժամ, «Ես և շրջակա աշխարհը» առարկային՝ 1 դասաժամ։
   - 4-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 4 դասաժամը հատկացվում է՝ «Մայրենի» առարկային՝ 1 դասաժամ, «Ռուսաց լեզու» առարկային՝ 1 դասաժամ, «Մաթեմատիկա» առարկային՝ 1 դասաժամ, «Ես և շրջակա աշխարհը» առարկային՝ 1 դասաժամ։
   - 5-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 5 դասաժամը հատկացվում է՝ «Անգլերեն» առարկային՝ 2 դասաժամ, «Մաթեմատիկա» առարկային՝ 1 դասաժամ, «ԹԳՀԳ» առարկային՝ 1 դասաժամ, «Տեխնոլոգիա» առարկային՝ 1 դասաժամ։
   - 6-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 6 դասաժամը հատկացվում է՝ «Անգլերեն» առարկային՝ 2 դասաժամ, «Մաթեմատիկա» առարկային՝ 1 դասաժամ, «ԹԳՀԳ» առարկային՝ 1 դասաժամ, «Տեխնոլոգիա» առարկային՝ 1 դասաժամ, «Ֆիզկուլտուրա» առարկային՝ 1 դասաժամ։
   - 7-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 4 դասաժամը հատկացվում է՝ «Անգլերեն» առարկային՝ 2 դասաժամ, «Հայոց լեզու» առարկային՝ 1 դասաժամ, «Ռուսաց լեզու» առարկային՝ 1 դասաժամ։
   - 8-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 3 դասաժամը հատկացվում է՝ «Անգլերեն» առարկային՝ 2 դասաժամ, «Գրականություն» առարկային՝ 1 դասաժամ։
   - 9-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 2 դասաժամը հատկացվում է՝ «Անգլերեն» առարկային՝ 2 դասաժամ։

3. Անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել հետևյալ սկզբունքով.
   - 1-ին դասարանում անհատական (դպրոցական) բաղադրիչից ժամաքանակ չի հատկացվում
   - 2-րդ դասարանում շաբաթական 6 դասաժամ (3 դասարան, յուրաքանչյուրը՝ 2-ական դասաժամ) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել արտադասարանական խմբակների իրականացմանը

- 3-րդ դասարանում շաբաթական 6 դասաժամ (3 դասարան, յուրաքանչյուրը՝ 2-ական դասաժամ) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել արտադասարանական խմբակների իրականացմանը
- 4-րդ դասարանում շաբաթական 6 դասաժամ (3 դասարան, յուրաքանչյուրը՝ 2-ական դասաժամ) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել արտադասարանական խմբակների իրականացմանը
- 5-րդ դասարանում շաբաթական 3 դասաժամ (3 դասարան, յուրաքանչյուրը՝ 1-ական դասաժամ) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել արտադասարանական խմբակների իրականացմանը, այդ թվում՝ «Առողջ ապրելակերպ» պարտադիր խմբակին՝ յուրաքանչյուր դասարանում շաբաթական 0,5 դասաժամ (կիսամյակի ընթացքում՝ 1 դասաժամ)։
- 6-րդ դասարանում շաբաթական 6 դասաժամ (3 դասարան, յուրաքանչյուրը՝ 2-ական դասաժամ) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել արտադասարանական խմբակների իրականացմանը, այդ թվում՝ «Առողջ ապրելակերպ» պարտադիր խմբակին՝ յուրաքանչյուր դասարանում շաբաթական 0,5 դասաժամ (կիսամյակի ընթացքում՝ 1 դասաժամ)։
- 7-րդ դասարանում շաբաթական 12 դասաժամ (3 դասարան, յուրաքանչյուրը՝ 4-ական դասաժամ) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել՝
  - արտադասարանական խմբակների իրականացման համար՝ շաբաթական 6 դասաժամ, այդ թվում՝ «Առողջ ապրելակերպ» պարտադիր խմբակին՝ յուրաքանչյուր դասարանում շաբաթական 0,5 դասաժամ (կիսամյակի ընթացքում՝ 1 դասաժամ)։
  - նախագծային աշխատանքների իրականացման համար՝ շաբաթական 6 դասաժամ։
- 8-րդ դասարանում շաբաթական 12 դասաժամ (3 դասարան, յուրաքանչյուրը՝ 4-ական դասաժամ) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել՝
  - արտադասարանական խմբակների իրականացման համար՝ շաբաթական 6 դասաժամ, այդ թվում՝ «Առողջ ապրելակերպ» պարտադիր խմբակին՝ յուրաքանչյուր դասարանում շաբաթական 0,5 դասաժամ (կիսամյակի ընթացքում՝ 1 դասաժամ) և «Մասնագիտական կողմնորոշման ակումբ» պարտադիր խմբակին՝ յուրաքանչյուր դասարանում շաբաթական 1 դասաժամ (երկու կիսամյակների համար)։
  - նախագծային աշխատանքների իրականացման համար՝ շաբաթական 6 դասաժամ։
- 9-րդ դասարանում շաբաթական 12 դասաժամ (3 դասարան, յուրաքանչյուրը՝ 4-ական դասաժամ) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել՝
  - արտադասարանական խմբակների իրականացման համար՝ շաբաթական 6 դասաժամ, այդ թվում՝ «Առողջ ապրելակերպ» պարտադիր խմբակին՝ յուրաքանչյուր դասարանում շաբաթական 0,5 դասաժամ (կիսամյակի ընթացքում՝ 1 դասաժամ) և «Մասնագիտական կողմնորոշման ակումբ» պարտադիր խմբակին՝ յուրաքանչյուր դասարանում շաբաթական 1 դասաժամ (երկու կիսամյակների համար)։

- նախագծային աշխատանքների իրականացման համար՝ շաբաթական 6 դասաժամ։

Լսեցին 6. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախագահի 2025-2026 ուսումնական տարվա աշխատանքային պլանի, օրացուցային-թեմատիկ պլանների, արտադասարանական խմբակների օրացուցային-թեմատիկ պլանների, առարկայական ծրագրերի, ուսումնական պլանի, քննարկման մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը ներկայացրեց 2025-2026 ուսումնական տարվա աշխատանքային պլանի հիմնական կետերն ու նախատեսվող անելիքները։ Նա ընդգծեց, որ օրացուցային-թեմատիկ պլանները մշակվել են առարկայական չափորոշիչներին և ծրագրերին համապատասխան՝ հատկապես նոր Հանրակրթական պետական չափորոշչով անցնող դասարանների առանձնահատկությունները հաշվի առնելով։ Պլաններում ներառվել են նաև գնահատման նոր ձևերն ու մոտեցումները՝ ապահովելով դրանց համապատասխանությունը գործող չափորոշիչներին։

Զեկուցողը հավելեց, որ արտադասարանական խմբակների ծրագրերը կազմվել են ուսուցիչների կողմից՝ հաշվի առնելով աշակերտների հետաքրքրությունները և դպրոցական միջավայրի հնարավորությունները։ Իսկ պարտադիր խմբակների՝ «Առողջ ապրելակերպ», «Նորարարական ջերմատուն» և «Մասնագիտական կողմնորոշում» ծրագրերը ներկայացվել են ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից՝ որպես միասնական մեթոդական ուղեցույցներ։

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը, Ա. Զեյնալյանը, Հ. Ալավերդյանը։

Ս. Ավանեսյանը նշեց, որ առարկայական օրացուցային-թեմատիկ պլանները, կազմվել են ոչ թե հիմք ընդունելով դասագրքերը, այլ նախարարության կողմից հաստատված ծրագրերով, հիմք ընդունելով նոր չափորոշչային պահանջները և ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2024 թվականի օգոստոսի 14-ի հրամանի պահանջները։

Որոշեցին՝ Հավանության արժանացնել բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախագահի 2025-2026 ուսումնական տարվա աշխատանքային պլանը, առարկայական ծրագրերը, օրացուցային-թեմատիկ պլանները, առարկայական խմբակների օրացուցային-թեմատիկ պլանները և ուսումնական պլանը։

Լսեցին 7. Նախագծային աշխատանքների թեմաների, պլանների, թեմատիկ պլանների, ղեկավարների, մատյանների և հանձնաժողովների կազմի քննարկման հարցը։

(զեկուցող՝ Ա.Առստամյան)

Զեկուցողը կարևորեց նախագծային աշխատանքների կազմակերպման փորձը 2024-2025 ուսումնական տարվա ընթացքում և առաջարկեց առաջնորդվել նախորդ տարի 7-րդ դասարաններում իրականացրած աշխատանքների կազմակերպման փորձով: Հիշեցրեց նախագծային աշխատանքներ կատարելու կարգը, նշեց, որ մասնախմբի անդամների կողմից 7-9-րդ դասարանների համար ներկայացվել են համապատասխան թեմաները: Զեկուցողը ներկայացրեց, որ ուսուցիչներն աշակերտական չաթերին են ուղարկել յուրաքանչյուր դասարանի համար նախատեսված թեմաները, ղեկավարներին, և արդեն իսկ աշակերտները բաժանվել են խմբերի, ընտրել են իրենց թեմաները և ղեկավարներին։

Զեկուցողը նաև նշեց Հանրակրթական հիմնական ընդհանուր և այլընտրանքային ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում ուսումնական խմբակների ձևավորման ու

գործունեության և ուսումնական նախագծերի իրականացման կարգը, ինչպես նաև առաջարկեց, հիմք ընդունելով վերոնշյալ կարգը նախագծային աշխատանքների պաշտպանություններն իրականացնել առարկայական հանձնաժողովներով, որի կազմում առաջարկեց ընդգրկել տվյալ առարկայի կամ առարկաների ուսուցիչները, մեթոդական միավորման նախագահը, նույն կամ հարակից առարկայի ուսուցիչները, տնօրենի տեղակալը։

Զեկուցողը ներկայացրեց նաև նախագծային աշխատանքների գնահատման կարգը, որը սահմանված է ՀՀ ԿԳՄՍ նախարարի նախագծային ուսուցման հայեցակարգի և ուսուցիչների վերապատրաստման մոդուլի հաստատման մասին հրամանում։

Արտահայտվեցին՝ Ա. Մարտիրոսյանը, Ա. Զեյնալյանը։

Արտահայտվողները կարևորեցին այն պահանջները, որոնք սահմանված են հանրակրթական հիմնական, ընդհանուր և այլընտրանքային ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում ուսումնական խմբակների ձևավորման, գործունեության և ուսումնական նախագծերի իրականացման կարգի վերաբերյալ։ Նրանք շեշտեցին, որ պահանջների պատշաճ իրականացումը ապահովում է կրթական գործընթացի բազմազանություն և սովորողների ակտիվ մասնակցություն։

Միաժամանակ ընդգծվեց նախագծային աշխատանքների կարգում կատարված փոփոխությունների կարևորությունը, որոնք նպատակ ունեն համակարգված և արդյունավետ կազմակերպել սովորողների հետազոտական և ստեղծագործական գործունեությունը, խթանել նրանց ինքնուրույնությունը և զարգացնել թիմային աշխատանքի հմտությունները, ապահովելով ուսումնական գործընթացի որակի և արդյունավետության բարձրացում։

Որոշեցին՝ Հավանության արժանացնել նախագծային աշխատանքների թեմաները, պլանները, թեմատիկ պլանները, ղեկավարներին, մատյանները և հանձնաժողովների կազմը (կցվում է)։

Լսեցին 8. Բնագիտամաթեմատիկական առարկաներից տրվող թեմատիկ գրավոր աշխատանքների, լաբորատոր, գործնական, ամփոփիչ աշխատանքների քանակի ու ձևերի քննարկման մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը նշեց, որ առարկային առանձնահատկություններից ելնելով, ուսուցիչը ինքն է որոշում թեմատիկ գրավոր աշխատանքների, գնահատվող լաբորատոր և գործնական աշխատանքների, ինչպես նաև ամփոփիչ աշխատանքների քանակը։ Ընդհանուր առմամբ, թեմատիկ գրավոր աշխատանքների քանակը հիմնականում համարվում է համարժեք առարկայի շաբաթական ժամաքանակին։ Յուրաքանչյուր կիսամյակում պարտադիր իրականացվում է առնվազն մեկ գործնական աշխատանք, որպեսզի ապահովվի ուսումնական նյութի ամրապնդումն ու գործնական հմտությունների զարգացումը։

Արտահայտվեցին՝ Ա.Առստամյանը , Կ. Արզումանյանը։

Արաքսյա Առստամյանը նշեց, որ յուրաքանչյուր թեմայի ամփոփման համար անհրաժեշտ է նախապես հստակ սահմանել ամփոփիչ աշխատանքի իրականացնելու ձևը։ Առաջին հերթին ուսուցիչը պետք է անցկացնի հայտորոշիչ և ձևավորող գնահատումներ, իսկ առաջարկվող ամփոփիչ աշխատանքները պարտադիր պետք է հաստատվեն մեթոդմիավորման նիստում՝ ապահովելու դրանց համապատասխանությունը ուսումնական չափորոշչին և գնահատման չափանիշներին։

Որոշեցին՝ Խիստ ուշադրության արժանացնել նախապես հաստատված թեմատիկ գրավոր աշխատանքների, գործնական, լաբորատոր, ամփոփիչ աշխատանքների քանակությանը, պահպանել այն և տալ ըստ հաստատված օրացուցային

թեմատիկ պլանների: Մ/մ նիստում հաստատված թեմատիկ գրավոր, գործնական, լաբորատոր, ամփոփիչ աշխատանքների ձևերն ու քանակը (կցվում է):

Լսեցին 9. Ըստ նոր ՀՊՉ-ների 2-9-րդ դասարանում գնահատման չափանիշների հաստատման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա.Առստամյան)

Զեկուցողը նշեց, որ պետք է հիմք ընդունել Պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների գնահատման չափանիշները և 2025-2026 ուսումնական տարում նոր ՀՊՉ-ներով դասավանդվող դասարաններում աշակերտների գնահատումն իրականացնել այդ չափանիշներին համապատասխան: Ըստ այդ չափանիշների 2025-2026 ուսումնական տարում 2-9-րդ դասարաններում ըստ նպատակի՝ կիրառվում է սովորողների գնահատման երեք տեսակ.

1) հայտորոշիչ գնահատում,
2) ձևավորող գնահատում,
3) ամփոփիչ գնահատում (միավորային և բնութագրող):

Հայտորոշիչ գնահատման ձևն ընտրում է ուսուցիչը: Հայտորոշիչ գնահատման համար կարող են օգտագործվել հետևյալ ձևերը՝

1) թեստ կամ գրավոր այլ աշխատանք.
2) բանավոր հարցում.
3) բաց հարցերով քննարկում.
4) և ուսուցչի ընտրությամբ ցանկացած այլ ձև:

Ձևավորող գնահատումն իրականացվում է ուսուցչի և սովորողի (ինքնագնահատում, փոխադարձ գնահատում) կողմից: Ձևավորող գնահատման համար կարող են օգտագործվել հետևյալ ձևերը.

1) գրավոր կարճ հարցում (թեստ).
2) բանավոր հարցում.
3) գրավոր աշխատանք.
4) գործնական (լաբորատոր) աշխատանք.
5) տնային աշխատանք.
6) նախագծային աշխատանք.
7) քննարկում, բանավեճ.
8) և ուսուցչի ընտրությամբ ցանկացած այլ ձև:

Ձևավորող գնահատում իրականացնելիս միավոր չի նշանակվում:

Ամփոփիչ (միավորային և բնութագրող) գնահատման ձևերը սահմանում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, իսկ մեթոդներն ընտրում է ուսուցիչը՝ հետևյալ առաջարկվող մեթոդներից.

1) թեստ կամ գրավոր այլ աշխատանք.
2) բանավոր հարցում.
3) բաց հարցերով քննարկում.
4) քննարկում, բանավեճ
5) գրավոր կարճ հարցում (թեստ).
6) գործնական (լաբորատոր) աշխատանք.
7) տնային աշխատանք.
8) նախագծային աշխատանք.
9) բնութագրող (այն դասարաններում, որտեղ ամփոփումն իրականացվում է բնութագրիչների միջոցով)
10) հնգյակի մեթոդ

11) ԳՈւՍ (Գիտեմ-Ուզում եմ սովորել-Սովորել եմ)
12) մտածիր-զույգ կազմիր-հաղորդիր
13) խճանկար
14) պրիզմա
15) Վենի դիագրամ
16) T-աձև աղյուսակ
17) ելքի քարտերի լրացում
18) ձնագնդի
19) մտածող գլխարկներ
20) մտագրոհ (մտքերի հոսք)
21) կենտրոններով աշխատանք
22) Ֆրայերի մեթոդ
23) գիտելիքի դոմինո
24) երկու բան
25) վարդ, փուշ, բողբոջ
26) տասը տարի անց
27) սկսել, դադարեցնել, պահել
28) մետաիմացության թերթիկ
29) ինձնից առաջ հարցրու երեք հոգու
30) դասի զեկուցող
31) Ես-Դու-Մենք
32) լուսակիր
33) կիսատ նախադասություն
34) «Խաթարված հերթականություն»
35) Միավորային գնահատման իրականացում Quizizz և առցանց այլն գործիքի միջոցով
36) և ուսուցչի ընտրությամբ ցանկացած այլ ուսուցման մեթոդներ ու հնարներ:
Ամփոփիչ (միավորային և բնութագրող) գնահատման մեթոդները կարող են լրացվել կամ փոփոխվել ուսումնական տարվա ընթացքում՝ ուսուցչի հայեցողությամբ:

Միավորային գնահատումը կարող է իրականացվել գնահատման հետևյալ ձևերով՝
1) թեստ.
2) բանավոր հարցում.
3) գրավոր աշխատանք.
4) գործնական (լաբորատոր) աշխատանք.
5) նախագծային աշխատանք.
6) և ուսուցչի ընտրությամբ ցանկացած այլ ձև:

Սովորողի կիսամյակային գնահատականը ձևավորվում է Պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների գնահատման չափանիշների 38-րդ կետում սահմանված և ուսուցչի կողմից ընտրված գնահատման ձևերից ստացած գնահատականների միջին թվաբանականով, ինքնաշխատ եղանակով:

Արտահայտվեցին՝ Ա.Զեյնալյան, Հ.Ալավերդյանը

Արտահայտվողները նշեցին, որ նախորդ ուսումնական տարում նոր ՀՊՉ-ներով ուսուցանվող դասարաններում կիրառված գնահատման չափորոշիչները եղել են արդյունավետ և իրենց արդարացրել են: Նա առաջարկեց, որ այս ուսումնական տարվա ընթացքում յուրաքանչյուր դասարանում ձեռքի տակ պահվեն Պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների գնահատման չափորոշիչները, որպեսզի

անհրաժեշտության դեպքում ուսուցիչները կարողանան կատարել որոշ փոփոխություններ՝ պահպանելով համապատասխան սկզբունքները։
Արտահայտվողները նաև առաջարկեցին հավանության արժանացնել առաջարկվող ձևերն ու մեթոդները և ընդգծեցին, որ այդ հարցը անհրաժեշտ է քննարկել մանկավարժական խորհրդի նիստում, ինչը կնպաստի գնահատման միասնական մոտեցման ապահովմանը և նոր մեթոդների արդյունավետ կիրարմանը ուսումնական գործընթացում։

Որոշեցին՝ Հաստատել նոր գնահատման կարգը, 2-9-րդ դասարաններում ՀՊՉ-ների համաձայն՝ հիմք ընդունելով Պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների գնահատման չափանիշները։ Բնագիտամաթեմատիկական առարկաների մասնախմբում ընդգրկված առարկաների համար կիրառել հետևյալ գնահատման ձևերը, մեթոդները, հնարները.

2025-2026 ուսումնական տարում 2-9-րդ դասարաններում ըստ նպատակի՝ կիրառվում է սովորողների գնահատման երեք տեսակ.
1) հայտորոշիչ գնահատում,
2) ձևավորող գնահատում,
3) ամփոփիչ գնահատում (միավորային և բնութագրող)։

Հայտորոշիչ գնահատման ձևն ընտրում է ուսուցիչը։ Հայտորոշիչ գնահատման համար կարող են օգտագործվել հետևյալ ձևերը՝
1) թեստ կամ գրավոր այլ աշխատանք.
2) բանավոր հարցում.
3) բաց հարցերով քննարկում.
4) և ուսուցչի ընտրությամբ ցանկացած այլ ձև։

Ձևավորող գնահատումն իրականացվում է ուսուցչի և սովորողի (ինքնագնահատում, փոխադարձ գնահատում) կողմից։ Ձևավորող գնահատման համար կարող են օգտագործվել հետևյալ ձևերը.
1) գրավոր կարճ հարցում (թեստ).
2) բանավոր հարցում.
3) գրավոր աշխատանք.
4) գործնական (լաբորատոր) աշխատանք.
5) տնային աշխատանք.
6) նախագծային աշխատանք.
7) քննարկում, բանավեճ.
8) և ուսուցչի ընտրությամբ ցանկացած այլ ձև։
Ձևավորող գնահատում իրականացնելիս միավոր չի նշանակվում։

Ամփոփիչ (միավորային և բնութագրող) գնահատման ձևերը սահմանում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, իսկ մեթոդներն ընտրում է ուսուցիչը՝ հետևյալ առաջարկվող մեթոդներից.
1) թեստ կամ գրավոր այլ աշխատանք.
2) բանավոր հարցում.
3) բաց հարցերով քննարկում.
4) քննարկում, բանավեճ
5) գրավոր կարճ հարցում (թեստ).
6) գործնական (լաբորատոր) աշխատանք.
7) տնային աշխատանք.
8) նախագծային աշխատանք.

9) բնութագրող (այն դասարաններում, որտեղ ամփոփումն իրականացվում է բնութագրիչների միջոցով)
10) հնգյակի մեթոդ
11) ԳՈւՍ (Գիտեմ-Ուզում եմ սովորել-Սովորել եմ)
12) մտածիր-զույգ կազմիր-հաղորդիր
13) խճանկար
14) պրիզմա
15) Վենի դիագրամ
16) T-աձև աղյուսակ
17) ելքի քարտերի լրացում
18) ձնագնդի
19) մտածող գլխարկներ
20) մտագրոհ (մտքերի հոսք)
21) կենտրոններով աշխատանք
22) Ֆրայերի մեթոդ
23) գիտելիքի դոմինո
24) երկու բան
25) վարդ, փուշ, բողբոջ
26) տասը տարի անց
27) սկսել, դադարեցնել, պահել
28) մետաիմացության թերթիկ
29) ինձնից առաջ հարցրու երեք հոգու
30) դասի զեկուցող
31) Ես-Դու-Մենք
32) լուսակիր
33) կիսատ նախադասություն
34) «Խաթարված հերթականություն»
35) Միավորային գնահատման իրականացում Quizizz և առցանց այլն գործիքի միջոցով
36) և ուսուցչի ընտրությամբ ցանկացած այլ ուսուցման մեթոդներ ու հնարներ:
Ամփոփիչ (միավորային և բնութագրող) գնահատման մեթոդները կարող են լրացվել կամ փոփոխվել ուսումնական տարվա ընթացքում՝ ուսուցչի հայեցողությամբ:

Միավորային գնահատումը կարող է իրականացվել գնահատման հետևյալ ձևերով՝
1) թեստ.
2) բանավոր հարցում.
3) գրավոր աշխատանք.
4) գործնական (լաբորատոր) աշխատանք.
5) նախագծային աշխատանք.
6) և ուսուցչի ընտրությամբ ցանկացած այլ ձև:

Սովորողի կիսամյակային գնահատականը ձևավորվում է Պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների գնահատման չափանիշների 38-րդ կետում սահմանված և ուսուցչի կողմից ընտրված գնահատման ձևերից ստացած գնահատականների միջին թվաբանականով, ինքնաշխատ եղանակով:

Լսեցին 10. Երկարօրյա խմբերում աշակերտների ընդգրկվածության մասին հարցը:
(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Զեկուցողը նշեց, որ երկարօրյա ուսուցումն իրականացվում է 2020 հոկտեմբերի 13-ի №38-Ն որոշման համաձայն, որով հաստատվել է Հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում երկարօրյա ուսուցման կազմակերպման կարգը: Համապատասխան այդ կարգի երկարօրյա ուսուցումը կազմակերպվում է երկարօրյա խմբերում, որոնք ստեղծվում են՝

- Երկարօրյա ուսուցումը կազմակերպվում է երկարօրյա խմբերում, որոնք ստեղծվում են՝
  1) սովորողի ծնողի դիմումի հիման վրա՝
  ա. ուսումնադաստիարակչական աշխատանքներում ընտանիքին համակողմանի օգնություն ցուցաբերելու.
  բ. դասապատրաստումներին աջակցելու.
  գ. ինքնուրույն սովորելու կարողությունները զարգացնելու նպատակներով:
- Երկարօրյա ուսուցումը կազմակերպվում է նաև հանրակրթության պետական չափորոշչի (այսուհետ՝ ՀՊՉ) ներդրման շրջանակներում ուսումնառության ցածր արդյունք արձանագրած սովորողների առաջադիմության բարելավման նպատակով:

Զեկուցողը բոլորի ուշադրությունը հրավիրեց ուսումնառության ցածր արդյունք արձանագրած սովորողների ներգրավվածության վրա, շեշտեց, որ համապատասխան կարգի ՀՊՉ-ի ներդրման ժամանակացույցով սահմանված դասարաններում ՀՊՉ-ի պահանջներին համապատասխան սովորողի ուսումնառության ցածր արդյունքների դեպքում առարկայական ծրագրի յուրացումը ապահովելու նպատակով կրթության կառավարման տեղեկատվական համակարգի տվյալների հիման վրա տվյալ առարկան դասավանդող ուսուցիչը կամ սովորողի դասղեկը երկարօրյա ուսուցում կազմակերպելու համար հիմնավորված գրավոր առաջարկով դիմում է տնօրենին՝

1) այն դասարաններում, որտեղ սովորողների որևէ առարկայի առաջադիմության գնահատումն իրականացվում է բնութագրող գնահատման արդյունքում՝ յուրաքանչյուր ամսվա ավարտին ձևավորող գնահատման հիման վրա արձանագրված ուսումնառության ցածր արդյունքներ ունենալու դեպքում.

2) այն դասարաններում, որտեղ իրականացվում է միավորային գնահատում, սովորողների կողմից որևէ առարկայից ուսումնառության փուլի (թեմա, ենթաթեմա, թեմաներ) ավարտին ձևավորող գնահատման արդյունքում արձանագրված ուսումնառության ցածր արդյունքներ ունենալու, ինչպես նաև ամփոփիչ գնահատման արդյունքում 1-3 միավոր գնահատվելու դեպքում:

Արտահայտվեցին՝ Ս. Բաղդասարյանը, Մ.Մկրտչյանը

Արտահայտվողները նշեցին, որ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել հետ մնացած աշակերտներին՝ հատկապես նրանց, ովքեր ուսումնառության ընթացքում ստացել են ցածր գնահատականներ ձևավորող գնահատումներից և բանավոր հարցումներից: Նման աշակերտներին առաջարկվեց ընդգրկել երկարօրյա խմբակներում, որպեսզի ապահովվի նրանց հմտությունների լրացում, գիտելիքների ամրապնդում և ուսումնական գործընթացում հավասար մասնակցություն:

Որոշեցին՝ Դպրոցում երկարօրյա ուսուցումն իրականացնել Հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում երկարօրյա ուսուցման կազմակերպման կարգի համաձայն:

Լսեցին 11. 2025-2026 ուսումնական տարվա ԱՈՒՊ-ների քննարկում:

(զեկուցող՝ Ա. Ծատրյան)

Զեկուցողը ներկայացրեց ԱՈՒՊ-ների լրացման նոր կարգը և 2025-2026 ուսումնական տարում ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ իրականացվելիք

հիմնական աշխատանքները: Նա ներկայացրեց նաև այդ աշակերտների համար կիրառվող պարզեցված մեթոդները և կոնկրետ օրինակներով ցուցադրեց ԱՈՒՊ-ների լրացման ընթացակարգերը, ընդգծելով դրանց կարևորությունը ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպման համար:

Զեկուցողը տեղեկացրեց, որ ուսումնական տարվա սկզբին դպրոցում առկա են 18 կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտներ, որոնց հետ աշխատանքը պետք է իրականացվի հատուկ սահմանված կարգով, հաշվի առնելով ինհատական հնարավորությունները և կրթական պահանջները: Նա առանձին անդրադարձ կատարեց յուրաքանչյուր աշակերտի հետ իրականացվող աշխատանքներին և ներկայացրեց նրանց հետ աշխատանքների մանրամասն գրաֆիկը, ինչը թույլ է տալիս համակարգված և արդյունավետ կազմակերպել ուսուցումը՝ պահպանելով անձնավոր մոտեցման սկզբունքը:

Արտահայտվեցին՝ Սերգեյ Ավանեսյանը

Սերգեյ Ավանեսյանը նշեց, որ դպրոցում ԿԱՊԿՈՒՀ աշակերտների հետ աշխատանքները միշտ պատշաճ են իրականացվել, և նախորդ ուսումնական տարին նույնպես բացառություն չի կազմել: Նա առանձնահատուկ անդրադարձ կատարեց ծանր խնդրով աշակերտներին, որոնց հետ աշխատանքն պահանջում է հատուկ հմտություններ և մոտեցումներ:

Արտահայտվողը կարևորեց, որ ԱՈՒՊ-ները լրացվեն նոր կարգին համապատասխան, իսկ պարզեցումները կատարվեն՝ հիմնվելով ԿԱՊԿՈՒՀ աշակերտների կարողությունների և ընդունակությունների վրա: Սերգեյ Ավանեսյանը նաև շեշտեց դիտարկման թերթիկների լրացման, ինչպես նաև ուսուցչի օգնականների, հատուկ մանկավարժի և հոգեբանի հետ համատեղ և համագործակցային աշխատանքի կարևորությունը, ինչը ապահովում է կրթության առանձնահատուկ կարիք ունեցող աշակերտների արդյունավետ աջակցություն և ուսուցման համակարգված կազմակերպում:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն ԱՈՒՊ-ների լրացման նոր կարգը, աշխատանքներն ու պարզեցումներն իրականացնել սահմանված պահանջներին համապատասխան, սահմանված կարգով կիրառել դիտարկման թերթիկները:

Լսեցին 12. Բնագիտամաթեմատիկական մասնախմբում ցուցադրական դասերի, դաս-միջոցառումների կազմակերպման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա.Առստամյան)

Զեկուցողը նշեց ցուցադրական դասերի և դաս-միջոցառումների կազմակերպման անհրաժեշտությունը, ընդգծելով, որ այս դասերի տեսակները լինում են օրինակելի և ուսուցանող, որտեղ հաշվի են առնվում դասապրոցեսի կազմակերպման բոլոր անհրաժեշտ մանրուքները:

Կարևորվեց նաև բաց դասերի կազմակերպումը, քանի որ դրանք հնարավորություն են տալիս տարածել ուսուցիչների ձեռք բերած դրական փորձը և մասայականացնել լավ ուսումնառական պրակտիկաները:

Զեկուցողը ներկայացրեց նաև բաց դասերի, բաց դաս-միջոցառումների և միջոցառումների ժամանակացույցի նախագիծը, որը ծառայում է որպես հստակ ծրագիր արդյունավետ ուսուցման և փորձի փոխանակման ապահովման համար:

Արտահայտվեցին՝ Օլ. Ղուլյանը:

Արտահայտվողն առաջարկեց, որ, ինչպես նախորդ ուսումնական տարիների ընթացքում, այնպես էլ 2025-2026 ուսումնական տարում պահպանվեն նույն սկզբունքները և բաց դասերը ու բաց դաս-միջոցառումները իրականացվեն ըստ նախապես սահմանված ժամանակացույցի: Նա ընդգծեց, որ այս մոտեցումը հնարավորություն է տալիս ապահովել դասերի կազմակերպվածությունը, բաց

դասերի և միջոցառումների արդյունավետությունը, ինչպես նաև ուսուցիչների փորձի փոխանակումը և մասնագիտական առաջընթացը։

Որոշեցին՝ Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման անդամ ուսուցիչների կողմից անցկացնել բաց դասեր, բաց դաս-դաս միջոցառումներ՝ ժամանակացույցի համաձայն, որը կցվում է:

Լսեցին 13. 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում դասալսումների, փոխադարձ դասալսումների իրականացման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա.Առստամյան)

Զեկուցողը նշեց, որ 2021-2022 ուսումնական տարվանից սկսած դպրոցում բոլոր դասալսումները, այդ թվում՝ փոխադարձ դասալսումները, արձանագրվում են հատուկ արձանագրությունների թղթերում, որտեղ սահմանված են համապատասխան չափանիշներ, որոնց հիման վրա գնահատվում են դասալսվող ուսուցիչները։

Արաքսյա Առստամյանը հավելեց, որ արձանագրության ձևանմուշը համապատասխանում է կարգի պահանջներին։ Նա առաջարկեց, որ յուրաքանչյուր ուսուցչի մոտ 1 կիսամյակի ընթացքում իրականացվեն նվազագույնը 3 դասալսում, ներառյալ՝ փոխադարձ դասալսումներ դպրոցի ձևանմուշի պահանջներին համապատասխան և մեկ նմուշ՝ ԹԻՉ դասալսման պահանջներին համապատասխան։

Դասալսումների արդյունքները պետք է արձանագրվեն համապատասխան ձևանմուշներում, իսկ կիսամյակի ավարտին դրանք պետք է արխիվացվեն սահմանված կարգով, ինչը թույլ է տալիս պահպանել դասալսումների որակյալ հետևողականությունը և տրամադրել հստակ մեթոդական տեղեկություններ ուսուցչական կազմի համար։

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները,

Արտահայտվողները նշեցին, որ նախորդ երկու ուսումնական տարիների ընթացքում ձեռք բերված փորձը տվել է դրական արդյունքներ և արդյունավետ է եղել։ Հաշվի առնելով դա, նրանք համարեցին նպատակահարմար, որ 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում նույնպես պահպանվի նույն սկզբունքը, ինչը կնպաստի ուսուցման որակի բարձրացմանը և ուսումնական գործընթացի շարունակական բարելավմանը։

Որոշեցին՝ 2025-2026 ուսումնական տարվա ընթաքցում դասալսումները, այդ թվում՝ փոխադարձ դասալսումներն արձանագրել հատուկ արձանագրությունների թղթում, որտեղ սահմանված են չափանիշներ, որոնց համապատասխան գնահատվում են դասալսվողները, 1 կիսամյակի ընթացքում յուրաքանչյուր ուսուցչի մոտ իրականացնել նվազագույնը 3 դասալսում դպրոցի կողմից մշակված ձևաթղթով, այդ թվում՝ փոխադարձ դասալսում: Կիսամյակների և ուսումնական տարվա ավարտին ամփոփել դասալսումները և ներկայացնել մանկավարժական խորհրդի ամփոփիչ նիստում:

Մ/Մ նախագահ՝ Ա. Դաջունց

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ԲՆԱԳԻՏԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №2

«26» սեպտեմբերի 2025թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին ՄՄ հետևյալ անդամները՝

1. Անուշ Դաջունց (մ/մ նախագահ)
2. Սիրուշ Բաղդասարյան
3. Արփինե Մարտիրոսյան
4. Ալլա Զեյնալյան
5. Հերմինե Ալավերդյան
6. Օլյա Ղուլյան
7. Արմանուշ Բակունց
8. Հայկ Օհանյան
9. Շահանե Ակլունց
10. Մերի Մկրտչյան
11. Մարետա Հարությունյան
12. Կարինե Արզումանյան
13. Ալեքսանդր Հայրապետյան

Նիստին ներկա էր տնօրենի Ժ/Պ Մերգեյ Ավանեսյանը, տնօրենի տեղակալ Արաքսյա Առստամյանը, ՄԿԱ համակարգող Արմիդա Գևորգյանը:

Ո Ր Ա Կ Ա Ր Գ

1. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատում:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

2. 2025-2026 ուսումնական տարվա Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 1-ին նիստի ընդունած որոշումների կատարման մասին հաղորդում:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

3. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման ուսուցիչների կողմից նոր ՀՊՉ-ներով տրվող ամփոփիչ, գործնական, լաբորատոր աշխատանքների տեսակների և քանակների մասին հարցերի քննարկում:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

4. Էլեկտրոնային դասամատյանների լրացման փոփոխությունների հարցերի քննարկում:

(զեկուցող՝ Ա.Առստամյան)

5. Դասալսումների և փոխադարձ դասալսումների իրականացման հետ կապված հարցերի քննարկում:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

6. 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի սեպտեմբեր ամսվա աշխատանքներ:

(զեկուցող՝ Ա. Գևորգյան)

Լսեցին 1. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա.. Դաջունց)

Զեկուցողը ներկայացրեց Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 2-րդ նիստի օրակարգի կետերը:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Հաստատել 2025-2026 ուսումնական տարվա Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 2-րդ նիստի օրակարգը:

Լսեցին 2. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 2025-2026 ուսումնական տարվա 1-ին նիստում ընդունած որոշումների կատարման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը ներկայացրեց Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստում ընդունված որոշումների իրականացման ընթացքը: Նշվեց, որ զգալի մասի որոշումները կատարված են, իսկ որոշ աշխատանքներ արդեն ընթացքի մեջ են՝ շարունակելով մեթոդմիավորման ծրագրային առաջընթացն ու նպատակների իրականացումը:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման մասին տեղեկատվությունը:

Լսեցին 3. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման ուսուցիչների կողմից նոր ՀՊՉ-ներով տրվող ամփոփիչ, գործնական, լաբորատոր աշխատանքների տեսակների և քանակների մասին հարցերը:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը ներկայացրեց 2-9-րդ դասարաններում պարապող ուսուցիչների կողմից, նոր ՀՊՉ-ներին համապատասխան, ամփոփիչ, գործնական և լաբորատոր աշխատանքների տեսակների պլանավորումը: Նա մանրամասն անդրադարձավ բանավոր հարցումների, թեստային առաջադրանքների և գրավոր աշխատանքների կազմակերպման ձևերին և կազմակերպված աշխատանքների քանակին յուրաքանչյուր կիսամյակում, ինչը ապահովում է ուսուցման գործընթացի նպատակային և չափորոշչային համահունչ իրականացումը:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները:

Արտահայտվողները նշեցին, որ, կախված դասավանդվող առարկաների առանձնահատկություններից, աշխատանքների կատարելու ժամանակները տարբեր են, և որոշ դեպքերում գործնական աշխատանքների քանակը գերակշռում է: Բնագիտական առարկաների դեպքում լաբորատոր աշխատանքները իրականացվում են խմբերով, ինչը նպաստում է արդյունավետ համագործակցության և ուսուցողական հմտությունների զարգացմանը:

Որոշեցին՝ Քննարկված հարցերը ընդունել ի գիտություն և 2025 -2026 ուսումնական տարում առաջնորդվել դրանով:

Լսեցին 4. Էլեկտրոնային դասամատյանների լրացման փոփոխությունների հարցերը:

(զեկուցող՝ Ա.Առստամյան)

Զեկուցողը հիշեցրեց մատենավարության իրականացման կարգը, ընդգծելով, որ 2025-2026 ուսումնական տարում այն անհրաժեշտ է կազմակերպել՝ համապատասխանեցնելով նոր պահանջներին և ընթացիկ կարգավորումներին: Նա կարևորեց պատասխանատվության բարձր մակարդակի պահպանումը մատենավարության ընթացքում՝ նշելով, որ գործընթացը պետք է իրականացվի համակարգված և հստակ ժամկետներով:

Նա նաև շեշտեց, որ նոր չափորոշչային դասարաններում գնահատման համակարգում կատարված փոփոխություններին հետևելը կարևոր է՝ ապահովելու գնահատման օբյեկտիվությունը, թափանցիկությունը և սահմանված չափորոշիչներին համապատասխանությունը:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները:

Արտահայտվողները ընդգծեցին, որ գրանցումները պետք է կատարվեն հաստատված և ներբեռնված ՕԹՊ-ների պահանջներին համապատասխան՝ ապահովելով փաստաթղթերի միասնականություն և ճշգրտություն։

Նշվեց, որ մեթոդմիավորման նախագահը պետք է իրականացնի շաբաթական ստուգումներ, իսկ դրանց ամփոփ տվյալները ներկայացվեն ուսումնական մասին, որպեսզի վերահսկվի աշխատանքների կատարման ընթացքը և որակը։

Արտահայտվողները կարևորեցին աշխատանքի կարգապահությունը և պատասխանատվությունը, կոչ անելով լինել ուշադիր և ներկայացնել աշխատանքները սահմանված ժամկետներում։ Նա նաև առաջարկեց, որ առաջացած խնդիրների կամ անորոշությունների դեպքում անմիջապես դիմել ուսումնական մասին, որպեսզի ստացվեն ժամանակին և ճիշտ խորհրդատվություններ։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն մատյանների ընթացիկ ստուգման արդյունքները։ Մեթոդմիավորման նախագահին պարտավորեցնել իրականացնել էլեկտրոնային մատյանների ամենշաբաթյա ստուգումներ, դրանց արդյունքներով ի հայտ եկած խնդիրները ներկայացնել տնօրենի պաշտոնակատարին։ Կազմակերպել խորհրդատվություն և անհրաժեշտ աջակցություն ուսուցիչներին՝ առաջացած խնդիրների արդյունավետ լուծման նպատակով։

Լսեցին 5. Դասալսումների և փոխադարձ դասալսումների իրականացման հետ կապված հարցերը։

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը նշեց, որ դասալսումները և փոխադարձ դասալսումները կարևոր դեր ունեն մեթոդմիավորման աշխատանքներում։ Դասալսումների հիմնական նպատակը ուսուցիչներին աջակցելն է, իսկ փոխադարձ դասալսումների միջոցով տեղի է ունենում փորձի և դասավանդման նոր մեթոդների փոխանակում։

Զեկուցողը շեշտեց, որ հատկապես կարևոր է ուշադրություն դարձնել սկսնակ ուսուցիչներին։ Դասալսումների քննարկման ընթացքում պետք է հաշվի առնվեն նոր ՀՊՉ-ներով աշխատելու առանձնահատկությունները, որոնք մանրամասն ներկայացվել են նախորդ նիստում, ինչպես նաև ուշադրություն դարձնել կիրառվող ձևերին և մեթոդներին։

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը, Մ. Հարությունյանը։

Սերգեյ Ավանեսյանը կարևորեց, որ 4-րդ և 9-րդ դասարաններում իրականացվող դասալսումների նկատմամբ ցուցաբերվի առավելագույն ուշադրություն։ Նա առաջարկեց աջակցել ուսուցիչներին՝ հատկապես դասագրքերի և ծրագրային պահանջների արդյունավետ իրականացման հարցում։ Ավանեսյանը շեշտեց, որ փոխադարձ դասալսումները պետք է ծառայեն համագործակցային աշխատանքի ամրապնդմանը, որի արդյունքում ուսուցիչները համատեղ քննարկում են առաջացած խնդիրները և կազմակերպում աշխատանքները՝ հիմնված ընդհանուր և հիմնավորված որոշումների վրա։

Մարետա Հարությունյանը նշեց, որ դասալսման հիմնական նպատակն է փորձի փոխանակումն ու մասնագիտական աջակցությունը, ինչը կնպաստի ուսուցչի ինքնազարգացմանը և ստեղծագործական մոտեցումների ձևավորմանը դասի ընթացքում։ Նա կարևորեց դասալսումների արդյունավետությունը, հատկապես 2-9-րդ դասարաններում, ընդգծելով նոր չափորոշչային պահանջներին հետևելու անհրաժեշտությունը։ Հարությունյանը հավելեց, որ անհրաժեշտ է շարունակել աշխատել նախորդ ուսումնական տարում ձևավորված համագործակցային սկզբունքներով։

Որոշեցին՝ 2025-2026 ուսումնական տարվա յուրաքանչյուր կիսամյակի ընթացքում յուրաքանչյուր ուսուցչի մոտ իրականացնել նվազագույնը երեք դասալսում՝ մշակված դասալսման թերթիկի պահանջներին համապատասխան, հաճախակի կազմակերպել փոխադարձ դասալսումներ, կատարել քննարկումներ հատկապես ուշադրություն դարձնելով 4-րդ, 9-րդ դասարաններում ուսումնասիրվող առարկաներին։

Լսեցին 6. 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի սեպտեմբեր ամսվա աշխատանքների քննարկման մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Գևորգյան)

Զեկուցողը մանրամասն ներկայացրեց 2025–2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի (ՈւԴԱՏՊ) շրջանակում սեպտեմբեր ամսվա ընթացքում նախատեսված և իրականացված միջոցառումները։ Նա ընդգծեց, որ ինչպես սեպտեմբեր, այնպես էլ նախորդ՝ օգոստոս ամսվա ընթացքում, բոլոր պլանային աշխատանքները կատարվել են սահմանված կարգով՝ ըստ հաստատված ժամանակացույցի և նախանշված նպատակների։

Բոլոր ծրագրավորված գործողությունները իրականացվել են համակարգված, նպատակային և համագործակցային ձևով՝ ապահովելով ուսումնական տարվա արդյունավետ մեկնարկը, կրթական գործընթացի համաչափ կազմակերպումը և ուսուցման միջավայրի բնականոն զարգացումը։

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները

Արտահայտվողները նշեցին, որ ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանով (ՈւԴԱՏՊ) նախատեսված բոլոր գործառույթներն ու միջոցառումները, որոնք վերաբերում են մեթոդմիավորման կազմում ընդգրկված ուսուցիչներին, իրականացվել են պատշաճ և ժամանակին։ Նրանց խոսքով՝ աշխատանքների իրականացման ընթացքում բացթողումներ կամ թերակատարություններ չեն արձանագրվել, իսկ ուսուցիչները ցուցաբերել են բարձր պատասխանատվություն, նախաձեռնողականություն և համագործակցային մոտեցում, ինչն ապահովել է պլանի արդյունավետ և նպատակային իրականացումը։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի սեպտեմբեր ամսվա ընթացքում իրականացված աշխատանքները։

Մ/Մ նախագահ՝ Ա. Դաջունց

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ԲՆԱԳԻՏԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №3

«22» հոկտեմբերի 2025թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին ՄՄ հետևյալ անդամները՝

1. Անուշ Դաջունց (մ/մ նախագահ)
2. Սիրուշ Բաղդասարյան
3. Արփինե Մարտիրոսյան
4. Ալլա Զեյնալյան
5. Հերմինե Ալավերդյան
6. Օլյա Ղուլյան
7. Արմանուշ Բակունց
8. Հայկ Օհանյան
9. Շահանե Ակլունց
10. Մերի Մկրտչյան
11. Մարետա Հարությունյան
12. Կարինե Արզումանյան
13. Ալեքսանդր Հայրապետյան

Նիստին ներկա էր տնօրենի Ժ/Պ Սերգեյ Ավանեսյանը և տնօրենի տեղակալ Արաքսյա Առստամյանը:

Ո Ր Ա Կ Ա Ր Գ

1. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Ա. Դաջունց)
2. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի ընդունած որոշումների կատարման ընթացքի մասին տեղեկատվություն:
(զեկուցող՝ Ա. Դաջունց)
3. Տնօրենության կողմից տրվող գրավոր աշխատանքների նախապատրաստում:
(զեկուցող՝ Ա. Դաջունց)
4. Առարկայական օլիմպիադայի մասնակից երեխաների հետ աշխատանքների կազմակերպում:
(զեկուցող՝ Ա. Դաջունց)
5. Էլեկտրոնային մատենավարության ստուգում:
(զեկուցող՝ Ա. Դաջունց)
6. 4-րդ և 9-րդ դասարաններում ՀՊՉ ներդրման գործընթացի վերահսկողություն:
(զեկուցող՝ Ա. Առստամյան)
7. 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի հոկտեմբեր ամսվա աշխատանքներ:
(զեկուցող՝ Ա. Գևորգյան)

Լսեցին 1. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատման մասին հարցը:
(զեկուցող՝ Ա. Դաջունց)
Զեկուցողը ներկայացրեց Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 3-րդ նիստի օրակարգի կետերը:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Հաստատել 2025-2026 ուսումնական տարվա Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 3-րդ նիստի օրակարգը:

Լսեցին 2. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 2025-2026 ուսումնական տարվա նախորդ նիստի ընդունած որոշումների կատարման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը ներկայացրեց Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստում ընդունված որոշումների կատարման ընթացքը՝ նշելով, որ ընդունված որոշումները հիմնականում կատարվել են սահմանված ժամկետներում:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման մասին տեղեկատվությունը:

Լսեցին 3. Տնօրենության կողմից տրվող գրավոր աշխատանքների նախապատրաստում:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը առաջարկեց, որ տնօրենությունը կազմակերպի գրավոր աշխատանքներ՝ 5-6-րդ դասարաններում «Մաթեմատիկա» առարկայից, իսկ 7-9-րդ դասարաններում՝ «Հանրահաշիվ» առարկայից, ընդգծելով, որ աշխատանքի ընթացքում պետք է խստորեն պահպանվեն առարկայական չափորոշչային պահանջները:

Նա կարևորեց նախորդ ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում ձեռք բերված փորձը՝ առաջարկելով այս տարի գրանցումը իրականացնել էլեկտրոնային ձևաչափով: Զեկուցողը հիշեցրեց էլեկտրոնային աշխատելու հիմնական սկզբունքները՝ նշելով, որ աշակերտները պատասխանները գրելու են թղթի վրա, սակայն արդյունքները պետք է փոխանցվեն էլեկտրոնային թեստերի համակարգում:

Թեստերը բաղկացած կլինեն 10 հարցից, որոնցից յուրաքանչյուրը կունենա 1 միավորի կշիռ: Յուրաքանչյուր հարցում աշակերտը կընտրի ճիշտ պատասխանը՝ տրամադրված ճիշտ և սխալ տարբերակներից: Աշխատանքն ավարտելուց հետո, սեղմելով «Ուղարկել» կոճակը, աշակերտը անմիջապես կտեսնի իր գրավոր աշխատանքի արդյունքը, ապահովելով թափանցիկություն և արագ հետադարձ կապ:

Արտահայտվեցին՝ Ս. Բաղդասարյանը, Ա. Մարտիրոսյանը, Ա. Զեյնալյանը:

Արտահայտվողները ընդգծեցին, որ տնօրենության կազմակերպած գրավոր աշխատանքների էլեկտրոնային ձևաչափը իրեն արդարացրել է և ցույց է տվել բարձր արդյունավետություն: Նրանց կարծիքով՝ այս մոտեցումը ոչ միայն խթանել է աշակերտների ուսումնական մոտիվացիան, այլև ստեղծել է հետաքրքիր ու ժամանակակից ուսումնական միջավայր:

Նրանք նշեցին, որ աշակերտները ավելի ոգևորված և ներգրավված էին գործընթացում, քանի որ էլեկտրոնային ձևաչափը թույլ է տալիս մնահաս ժամանակին տեսնել աշխատանքի արդյունքը, ինչը խրախուսում է նրանց ինքնավերլուծությունն ու սեփական առաջընթացի գնահատումը:

Որոշեցին՝ 1. 5-9-րդ դասարաններում «Մաթեմատիկա», «Հանրահաշիվ» առարկաներից տնօրենության կողմից գրավոր աշխատանքները տալ նոր սկզբունքով՝ էլեկտրոնային տարբերակով:

2. Թեստերը կազմել քննարկված պահանջներին համապատասխան:

Լսեցին 4. Առարկայական օլիմպիադայի մասնակից երեխաների հետ աշխատանքների կազմակերպման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողն առաջարկեց, որ օլիմպիադայի դպրոցական փուլին մասնակցող աշակերտների հետ տարվող աշխատանքները կազմակերպվեն ճիշտ,

համակարգված և շարունակական ձևով: Նա ընդգծեց, որ նպատակահարմար է շաբաթվա ընթացքում առնվազն երկու անգամ վերահսկել տրված հանձնարարությունների կատարման ընթացքը՝ ապահովելով աշակերտների պատրաստության որակը և առաջադիմությունը:

Զեկուցողի խոսքով՝ աշխատանքները պետք է իրականացվեն նախապես մշակված պլանի համաձայն, որը կներառի ինչպես թեմատիկ պատրաստություն, այնպես էլ փորձնական աշխատանքների անցկացում: Նա հավելեց, որ առարկայական օլիմպիադաների դպրոցական փուլի կազմակերպումը կիրականացվի 2024-2025 ուսումնական տարվա ընթացքում հաստատված նոր կարգի համաձայն՝ ապահովելով մրցույթի թափանցիկություն և արդյունավետություն:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները:

Արտահայտվողները կարևորեցին աշակերտների հետ տարվող աշխատանքների պատշաճ կազմակերպումն ու արդյունավետ իրականացումը, ինչպես նաև դրանց արդյունքում նշանակալի ձեռքբերումների արձանագրումը: Նրանք ընդգծեցին, որ դպրոցական փուլում ձևավորված հաջողությունները հիմք են աշակերտների հետագա մասնակցության համար օլիմպիադայի տարածքային փուլում, ինչը կարևոր հնարավորություն է իրենց գիտելիքներն ու կարողությունները ներկայացնելու և ամրապնդելու համար:

Որոշեցին՝ Տալ հանձնարարականներ բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախագահին և անդամ ուսուցիչներին՝ աշակերտների հետ աշխատանքները կազմակերպել ըստ մշակված անհատական պլանի:

Լսեցին 5. Էլեկտրոնային մատենավարության ստուգման մասին հարցի մասին:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը ներկայացրեց ստուգումների արդյունքները, անդրադառնալով հայտնաբերված դիտարկումներին և տրված առաջարկություններին: Նա ընդգծեց էլեկտրոնային մատենավարության իրականացման կարգի պահպանման կարևորությունը՝ նշելով, որ անհրաժեշտ է մշտապես հետևել մատենավարական համակարգում կատարվող փոփոխություններին և դրանք ճիշտ կիրառել աշխատանքում:

Զեկուցողը շեշտեց, որ մատենավարության ընթացքում անհրաժեշտ է ստանալ հստակ և մասնագիտական խորհրդատվություն, որպեսզի բացառվեն սխալ մեկնաբանություններն ու գրառումները: Նա նաև հիշեցրեց, որ գրանցումները պետք է կատարվեն ՕԹՊ-ների համաձայն, պահպանելով սահմանված ժամկետները և թույլ չտալով որևէ խախտում: Այս մոտեցումը, ըստ զեկուցողի, ապահովում է աշխատանքների թափանցիկություն և գնահատման միասնական մոտեցումներ:

Արտահայտվեցին՝ Ս. Բաղդասարյանը, Հ. Ալավերդյանը:

Սիրուշ Բաղդասարյանը նշեց, որ անհրաժեշտ է պահպանել շարունակական վերահսկողություն ուսուցիչների կողմից մատենավարության ոլորտում կատարվող ամենօրյա աշխատանքների նկատմամբ՝ նպատակ ունենալով կանխել միգուցեացած թերացումները և խուսափել հետագա խնդիրներից:

Նա ընդգծեց, որ անհրաժեշտության դեպքում պետք է ցուցաբերել աջակցություն ուսուցիչներին, տրամադրելով խորհրդատվություն և մասնագիտական աջակցություն մատենավարության ճիշտ վարման հարցում: Բացի այդ, կարևոր է իրականացնել կոնկրետ դիտողություններ և առաջարկություններ, ինչը հնարավորություն կտա ապահովել էլեկտրոնային մատենավարության կարգի ամբողջական պահպանումը և աշխատանքների որակի բարձրացումը:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն նախորդող շրջանում էլեկտրոնային մատենավարության ստուգման արդյունքները, կատարել էլեկտրոնային մատենավարության պարտադիր կատարողականի վերահսկում:

Լսեցին 6. 4-րդ և 9-րդ դասարաններում ՀՊՉ ներդրման գործընթացի վերահսկողության մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Զեկուցողը ներկայացրեց, որ Բնագիտամաթեմատիկական առարկաների և մյուս մեթոդմիավորումների անդամների կողմից իրականացված դասալսումների և դասերի դիտարկումների արդյունքներով պարզվել է, որ 4-րդ և 9-րդ դասարաններում ուսուցիչները հիմնականում ապահովում են նոր ՀՊՉ-ների պահանջները: Դասալսումների ընթացքում նկատվել է, որ ուսուցիչները ունեն օրացուցային-թեմատիկ պլաններ, համակարգում առկա են օրվա դասի պլաններ, որոնք ձևավորվել են ինքնաշխատ եղանակով, իսկ մատենավարությունը կազմակերպված է դրանց համապատասխան:

Զեկուցողը նշեց, որ թեմատիկ պլաններում հստակ սահմանված են տվյալ թեմայի նպատակն ու վերջնարդյունքը, ինչը նպաստում է ուսուցիչների գիտակցված և նպատակային աշխատանքին: Քանի որ յուրաքանչյուր օրվա պլանում նշված է դասի ակնկալվող վերջնարդյունքը, ուսուցիչները հստակ պատկերացնում են, թե ինչ գիտելիքներ և հմտություններ պետք է ապահովվեն դասի ավարտին, և այս նպատակին մեծ մասամբ հաջողությամբ հասնում են:

Զեկուցողը ընդգծեց, որ առանձնակի ուշադրություն է դարձվել աշակերտների ներգրավվածությանը և գնահատման գործընթացին: Նշվեց, որ որոշ խնդիրներ դիտվում են այն աշակերտների մոտ, ովքեր ունեն առաջադիմության բացեր: Այդ աշակերտները հիմնականում ընդգրկվում են երկարօրյա խմբերի աշխատանքներում, որտեղ նրանց աջակցում են ուսուցիչներն ու ուսուցչի օգնականները:

Անդրադառնալով գնահատմանը՝ զեկուցողը նշեց, որ անհրաժեշտ է կիրառել նախորդ տարվա հաջողված փորձը, ինչը հնարավորություն կտա արդյունավետորեն իրագործել գնահատման նոր համակարգի պահանջները: Նա կարևորեց ձևավորող, ամփոփիչ և հայտորոշիչ գնահատման գործիքների կիրառումը, որոնք թույլ են տալիս ստանալ ամբողջական պատկերացում աշակերտի առաջընթացի մասին:

Ամփոփելով՝ զեկուցողը առաջարկեց, որ ուսուցիչները հատուկ ուշադրություն դարձնեն՝

- Առարկայական ծրագրով նախատեսված կարողությունների զարգացմանը,
- Դասի ընթացքում սահմանված վերջնարդյունքների իրագործմանը,
- Աշակերտների ներգրավվածության բարձրացմանը,
- Եվ գնահատման նոր համակարգի արդյունավետ կիրառմանը:

Նա նաև կոչ արեց կազմակերպել մեթոդական քննարկումներ՝ փորձի փոխանակման և աշխատանքի որակի բարելավման նպատակով:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները:

Արտահայտվողները համաձայնություն հայտնեցին զեկուցողի դիտարկումների հետ՝ նշելով, որ դրանք լիովին արտացոլում են ուսումնական գործընթացի իրական պատկերը: Նրանք ընդգծեցին, որ նպատակահարմար է պարբերաբար կազմակերպել մեթոդական քննարկումներ և փորձի փոխանակումներ, որոնք կնպաստեն ուսուցիչների գիտելիքների բարելավմանը, մասնագիտական հմտությունների զարգացմանը և նոր մոտեցումների յուրացմանը:

Նրանք հավելեցին, որ նման քննարկումները հնարավորություն կտան ուսուցիչներին թարմացնել մասնագիտական գիտելիքները, ծանոթանալ նոր

կրթական մեթոդներին և պահանջներին, ինչպես նաև ապահովել դասապրոցեսի ավելի արդյունավետ և ժամանակակից կազմակերպում։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն նախորդող ժամանակահատվածում կատարված փորձը և աշխատանքները կազմակերպել ՀՊՉ պահանջների համապատասխան։

Լսեցին 7. 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի հոկտեմբեր ամսվա աշխատանքների քննարկման մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Գևորգյան)

Զեկուցողը ներկայացրեց 2025–2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի շրջանակում հոկտեմբեր ամսվա ընթացքում իրականացված և ընթացիկ միջոցառումների ամփոփ պատկերը։ Նա նշեց, որ ամսվա ընթացքում պլանով նախատեսված բոլոր աշխատանքները իրականացվել են սահմանված կարգով՝ համաձայն հաստատված ժամանակացույցի և նախանշված նպատակների։

Զեկուցողը շեշտեց, որ իրականացված միջոցառումները կազմակերպվել են համակարգված, նպատակային և համագործակցային սկզբունքով՝ ընդգրկելով ուսուցիչների, սովորողների և ծնողների ակտիվ մասնակցությունը։ Այս մոտեցումը նպաստել է կրթական գործընթացի շարունակական զարգացմանը, արդյունավետ հաղորդակցությանը և դպրոցի համայնքային կյանքի աշխուժացմանը։

Արդյունքում, հոկտեմբեր ամիսը բնութագրվել է նպատակային և բովանդակալից աշխատանքներով, որոնք ապահովել են ուսումնական տարվա կայուն ընթացքը և կրթական ծրագրերի արդյունավետ իրականացումը։

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները

Արտահայտվողները նշեցին, որ ՈՒԴԱՏՊ նախատեսված բոլոր միջոցառումները և գործառույթները, որոնք վերաբերում են մեթոդմիավորման կազմում ընդգրկված ուսուցիչներին, իրականացվել են պատշաճ, ժամանակին և արդյունավետ ձևով։ Նրանց խոսքով՝ աշխատանքների իրականացման ընթացքում բացթողումներ կամ թերակատարումներ չեն արձանագրվել, ինչը վկայում է ուսուցիչների բարձր պատասխանատվության, նախաձեռնողականության և մասնագիտական նվիրվածության մասին։

Ավելին, ընդգծվեց, որ մեթոդմիավորման գործունեությունը կազմակերպվել է համագործակցային և ստեղծարար միջավայրում, ինչը նպաստել է փորձի փոխանակմանը, նոր մեթոդների ներդրմանը և կրթական գործընթացի շարունակական կատարելագործմանը։ Այս մոտեցումը ապահովել է տարեկան պլանի արդյունավետ իրականացումը և դպրոցի մանկավարժական համայնքի միասնական աշխատանքի ամրապնդումը ընդհանուր նպատակների շուրջ։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի հոկտեմբեր ամսվա ընթացքում իրականացված աշխատանքները։

Մ/Մ նախագահ՝ Ա. Դաջունց

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ԲՆԱԳԻՏԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №4

«26» նոյեմբեր 2025թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին ՄՄ հետևյալ անդամները՝

1. Անուշ Դաջունց (մ/մ նախագահ)
2. Սիրուշ Բաղդասարյան
3. Արփինե Մարտիրոսյան
4. Ալլա Զեյնալյան
5. Հերմինե Ալավերդյան
6. Օլյա Ղուլյան
7. Արմանուշ Բակունց
8. Հայկ Օհանյան
9. Շահանե Ակլունց
10. Մերի Մկրտչյան
11. Մարետա Հարությունյան
12. Կարինե Արզումանյան
13. Ալեքսանդր Հայրապետյան

Նիստին ներկա էր տնօրենի Ժ/Պ Մերգեյ Ավանեսյանը, տնօրենի տեղակալ Արաքսյա Առստամյանը, ռեսուրս կաբինետի աշխատակիցները, ԿԱԴԱՀ Արմիդա Գևորգյանը:

Ո Ր Ա Կ Ա Ր Գ

1. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 4-րդ նիստի օրակարգի հաստատում:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

2. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի ընդունած որոշումների կատարման ընթացքի մասին:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

3. ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ աշխատանքների կազմակերպման առանձնահատկությունները:

(զեկուցող՝ Ա. Ծատրյան)

4. Էլեկտրոնային դասամատյանների ստուգման մասին:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

5. Մեթոդական զեկուցում «Ակտիվ ուսումնառություն, շրջված դասարան»:

(զեկուցող՝ Հ. Ալավերդյան)

6. 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիրակչական աշխատանքների տարեկան պլանի (ՈՒԴԱՏՊ) նոյեմբեր ամսվա աշխատանքներ:

(զեկուցող՝ Ա. Գևորգյան)

Լսեցին 1. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 4-րդ նիստի օրակարգի հաստատման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Արտահայտվեցին՝ Զեկուցողը ներկայացրեց Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 4-րդ նիստի օրակարգի կետերը:

Որոշեցին՝ Հաստատել 2025-2026 ուսումնական տարվա Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 4-րդ նիստի օրակարգը:

Լսեցին 2. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի ընդունած որոշումների կատարման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը նշեց, որ Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդական միավորման նախորդ նիստում ընդունված որոշումների կատարումն իրականացվել է սահմանված ժամկետներում: Նշվեց, որ բոլոր հանձնարարականները կատարվել են ամբողջությամբ, պատասխանատուները գործել են ըստ հաստատված պլանի, և արձանագրվել են նախատեսված արդյունքները:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները:

Մեթոդական միավորման անդամներն արտահայտվեցին նախորդ նիստում ընդունված որոշումների կատարման վերաբերյալ՝ արձանագրելով, որ աշխատանքներն իրականացվել են ժամանակին և արդյունավետ: Նրանք կարևորեցին միասնական և համակարգված աշխատանքի շարունակականությունը, ընդգծեցին պատասխանատվության բարձր մակարդակը և առաջարկեցին հետագայում ևս պահպանել նույն գործելաոճը՝ կրթական գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման մասին տեղեկատվությունը:

Լսեցին 3. ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ աշխատանքների կազմակերպման առանձնահատկությունների հետ կապված հարցը:

(զեկուցող՝ Ա. Ծատրյան)

Զեկուցողը նշեց, որ ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ իրականացվող աշխատանքը կազմակերպվում է թիմային մոտեցմամբ, որի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ է մանկավարժի, հոգեբանի և ուսուցչի օգնականների միջև սերտ և համակարգված համագործակցություն: Կատարված աշխատանքների արդյունքները վկայում են, որ նման համագործակցային աշխատանքը ապահովում է ավելի բարձր արդյունավետություն և նպաստում է աշակերտների կրթական և զարգացման առաջընթացին:

Զեկուցողը հավելեց, որ ԿԱՊԿՈՒ աշակերտների համար նախատեսված անհատական ուսուցման պլանների (ԱՈՒՊ) և դիտարկման թերթիկների լրացման աշխատանքներն իրականացվում են սահմանված ժամկետներում և պատշաճ ձևով՝ համապատասխանելով գործող կարգավորումներին:

Նշվեց նաև, որ ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ աշխատանքում ներգրավված են ԳՏՄԱԿ-ի մասնագետները, որոնք սահմանված կարգով՝ յուրաքանչյուր երկու ամիսը մեկ, կազմակերպում և իրականացնում են քննարկումներ ուսուցիչների, ուսուցչի օգնականների, հոգեբանների, հատուկ մանկավարժների, ինչպես նաև նշված աշակերտների ծնողների մասնակցությամբ: Քննարկումներին մասնակցում է նաև դպրոցի տնօրինությունը՝ գործընթացի համակարգման և վերահսկման նպատակով:

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը:

Սերգեյ Ավանեսյանը նշեց, որ ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ իրականացվող աշխատանքները կրում են խիստ անհատական բնույթ, և յուրաքանչյուր աշակերտի դեպքում անհրաժեշտ է կիրառել հատուկ, նպատակային մոտեցում՝ ելնելով նրա կրթական և զարգացման առանձնահատկություններից: Միևնույն ժամանակ կարևոր համարվեց հաշվի առնել աշակերտների տարիքային առանձնահատկությունները, ինչպես նաև ապահովել շարունակական և արդյունավետ համագործակցություն ծնողների հետ, ինչը էական նշանակություն ունի կրթական գործընթացի կազմակերպման և ակնկալվող արդյունքների ապահովման գործում:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ տարվող աշխատանքների մասին տրված տեղեկատվությունը:

Լսեցին 4. Էլեկտրոնային դասամատյանների ստուգման մասին հարցը։

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը ներկայացրեց նախորդ ժամանակահատվածում իրականացված էլեկտրոնային մատյանների ստուգման արդյունքները՝ մանրամասն անդրադառնալով ինչպես իրականացված աշխատանքներին, այնպես էլ ստուգման ընթացքում արձանագրված բացթողումներին։ Նա կարևորեց ամփոփիչ աշխատանքների, գործնական հանձնարարությունների և ընթացիկ գնահատականների սահմանված ժամկետներում ներբեռնելու անհրաժեշտությունը՝ ընդգծելով, որ դրանց ուշացումները բացասաբար են անդրադառնում գնահատման գործընթացի ամբողջականության և թափանցիկության վրա։

Նշվեցին նաև էլեկտրոնային մատյանների օգտագործման ընթացքում արձանագրված մի շարք տեխնիկական խնդիրներ։ Զեկուցողը կարևոր համարեց արդեն մուտքագրված և պահպանված գնահատականների պարբերական վերստուգումը՝ տվյալների ճշգրտությունն ապահովելու և դրանք գործող կարգավորումներին ու սահմանված չափանիշներին համապատասխանեցնելու նպատակով։

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը

Սերգեյ Ավանեսյանն ընդգծեց, որ մատենավարության գործընթացում յուրաքանչյուր ուսուցչի անհատական, գիտակցված և պատասխանատու վերաբերմունքը ունի առանցքային նշանակություն։ Նա նշեց, որ իրականացվող ընթացիկ ստուգումների արդյունքում շարունակաբար արձանագրվում են մի շարք թերություններ, ինչը վկայում է արագ արձագանքի, վերահսկողության ուժեղացման և կարգապահության մակարդակի բարձրացման անհրաժեշտության մասին։

Սերգեյ Ավանեսյանը կոչ արեց լինել առավել հետևողական տվյալների ամբողջական և ճշգրիտ մուտքագրման, գնահատականների ժամանակին փոխանցման, ինչպես նաև էլեկտրոնային մատյանի վարումը սահմանված կարգով ապահովելու գործում՝ ընդգծելով, որ մատենավարության գործընթացի որակը անմիջականորեն ազդում է ուսումնական աշխատանքի թափանցիկության, հաշվետվողականության և ընդհանուր արդյունավետության վրա։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն նախորդող շրջանում էլեկտրոնային մատենավարության ստուգման արդյունքները

Լսեցին 5. «Ակտիվ ուսումնառություն, շրջված դասարան» մեթոդական զեկուցման մասին հարցը։

(զեկուցող՝ Հ. Ալավերդյան)

Զեկուցողը ներկայացրեց «Ակտիվ ուսումնառություն, շրջված դասարան» մեթոդական զեկուցումը՝ ընդգծելով, որ տվյալ մոտեցումը նպաստում է աշակերտակենտրոն ուսուցման իրականացմանը, սովորողների ինքնուրույնության, քննադատական մտածողության և համագործակցային հմտությունների զարգացմանը։ Նա նշեց, որ «շրջված դասարան» մոդելը հնարավորություն է տալիս դասաժամը առավել արդյունավետ օգտագործել՝ այն դարձնելով քննարկումների, վերլուծությունների և գործնական աշխատանքի հարթակ։

Զեկուցողը կարևորեց նաև ուսուցչի դերի փոփոխությունը տվյալ մեթոդում՝ որպես ուսումնական գործընթացը համակարգող և ուղղորդող, ինչպես նաև ընդգծեց, որ մեթոդի կիրառումը պահանջում է նախնական պլանավորում, հստակ նպատակադրում և թվային գործիքների նպատակային օգտագործում։ Նրա համոզմամբ՝ մեթոդի փուլային և նպատակային կիրառումը կարող է

զգալիորեն բարձրացնել ուսումնական գործընթացի արդյունավետությունն ու սովորողների ներգրավվածությունը։

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները

Մեթոդական միավորման անդամները նշեցին, որ ներկայացված «Ակտիվ ուսումնառություն, շրջված դասարան» մեթոդը ժամանակակից և արդյունավետ մոտեցում է ուսումնական գործընթացի կազմակերպման համար։ Նրանք ընդգծեցին, որ մեթոդի կիրառումը նպաստում է աշակերտների ակտիվ ներգրավվածությանը, ինքնուրույն աշխատանքի հմտությունների զարգացմանը և դասաժամի արդյունավետ օգտագործմանը։

Մասնակիցները կարևորեցին մեթոդի փուլային և նպատակային ներդրումը՝ հաշվի առնելով առարկաների առանձնահատկությունները և աշակերտների տարիքային մակարդակը։ Միաժամանակ նշվեց ուսուցիչների կողմից փորձի փոխանակման, մեթոդական աջակցման և թվային գործիքների կիրառման անհրաժեշտությունը՝ մեթոդի արդյունավետ կիրառումն ապահովելու նպատակով։

Որոշեցին՝ Ընդունելի գիտություն «Ակտիվ ուսումնառություն, շրջված դասարան» մեթոդական զեկուցումը։

Լսեցին 6. 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիրակչական աշխատանքների տարեկան պլանի (ՈՒԴԱՏՊ) նոյեմբեր ամսվա աշխատանքների կատարման մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Գևորգյան)

Զեկուցողը ներկայացրեց 2025–2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական գործունեության տարեկան պլանի իրականացման ընթացքը՝ առանձնահատուկ անդրադառնալով նոյեմբեր ամսվա ընթացքում իրականացված միջոցառումներին։ Նա ընդգծեց, որ ուսումնառության մեկնարկից ի վեր նախատեսված բոլոր նախաձեռնությունները կյանքի են կոչվել ըստ սահմանված ժամանակացույցի՝ համապատասխանելով հաստատված կարգավորումներին և պահանջներին։

Նշվեց, որ իրականացված աշխատանքներն ունեցել են հստակ կառուցվածք, իրականացվել են նպատակային մոտեցմամբ և տարբեր օղակների համագործակցության շնորհիվ, ինչը նպաստել է ուսումնական գործընթացի կազմակերպված և արդյունավետ ընթացքին։ Քննարկման ընթացքում բարձրաձայնվեցին նաև առանձին միջոցառումների արդյունավետության հետագա բարձրացման հնարավոր ուղղությունները։

Զեկուցողն առաջարկեց տնօրենության կողմից իրականացվող գրավոր աշխատանքները նախատեսել ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում։ Առաջարկը պայմանավորված էր նրանով, որ երկհերթ դասապրոցեսի պայմաններում ներկայումս առկա չեն բավարար հնարավորություններ նման աշխատանքների լիարժեք և արդյունավետ կազմակերպման համար։

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները

Մեթոդական միավորման անդամները նշեցին, որ ՈՒԴԱՏՊ-ով նախատեսված բոլոր գործողությունները և միջոցառումները, որոնք վերաբերում էին Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորմանը, իրականացվել են լիարժեք և պատշաճ ձևով։ Նրանք բարձր գնահատեցին ուսուցիչների պատասխանատվությունը, նախաձեռնողականությունն ու համագործակցային մոտեցումը, ինչը հնարավորություն է տվել ծրագրի նպատակները լիարժեք իրականացնել։

Մասնակիցներն ընդգծեցին, որ աշխատանքները կազմակերպվել են հստակ, կանխատեսելի և արդյունավետ մեթոդաբանությամբ, ինչը նպաստել է միջոցառումների որակյալ անցկացմանը և նախատեսված արդյունքների ապահովմանը։ Արտահայտվողների կարծիքով՝ նման համակարգված և

նպատակային մոտեցումը պետք է պահպանվի նաև հետագա ամիսներին, որպեսզի պահպանվի ձեռք բերված դրական դինամիկան և ամրապնդվի աշխատանքային մշակույթը։

Որոշեցին՝ 1. Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի նոյեմբեր ամսվա ընթացքում իրականացված աշխատանքները։

2. 2025-2026 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի տնօրենության գրավոր աշխատանքները տեղափոխել 2-րդ կիսամյակի առաջին հատված։

Մ/Մ նախագահ՝ Ա. Դաջունց

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ԲՆԱԳԻՏԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №5

«23» դեկտեմբեր 2025թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին ՄՄ հետևյալ անդամները՝

1. Անուշ Դաջունց (մ/մ նախագահ)
2. Սիրուշ Բաղդասարյան
3. Արփինե Մարտիրոսյան
4. Ալլա Զեյնալյան
5. Հերմինե Ալավերդյան
6. Օլյա Ղուլյան
7. Արմանուշ Բակունց
8. Հայկ Օհանյան
9. Շահանե Ակլունց
10. Մերի Մկրտչյան
11. Մարետա Հարությունյան
12. Կարինե Արզումանյան
13. Ալեքսանդր Հայրապետյան

Նիստին ներկա էր տնօրենի Ժ/Պ Մերգեյ Ավանեսյանը, տնօրենի տեղակալ Արաքսյա Առստամյանը, ԿԱԴԱՀ Արմիդա Գևորգյանը, ուսուցչի օգնական Արփինե Ծատրյանը:

Ο Ր Ա Կ Ա Ր Գ

1. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 5-րդ նիստի օրակարգի հաստատում:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

2. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի ընդունած որոշումների կատարման ընթացքի մասին:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

3. 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի (ՈՒԴԱՏՊ) դոկտեմբեր ամսվա և առաջին կիսամյակում իրականացված աշխատանքներ:

(զեկուցող՝ Ա. Գևորգյան)

4. Դպրոցական առարկայական օլիմպիադաների դպրոցական փուլի անցկացում և արդյունքների քննարկում:

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

5. 2025-2026 ուսումնական տարվա առաջին կիսամյակի գրավոր աշխատանքների քանակի ու ծրագրերի կատարողականի քննարկում:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

6. 2025-2026 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացքում կատարած դասալսումների քննարկում, վերլուծություն և ամփոփում:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

7. 2025-2026 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացքում իրականացված նախագծային աշխատանքների հաշվետվությունների քննարկում:

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

8. 2025-2026 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի էլեկտրոնային մատենավարության ստուգում:

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

9. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 2025-2026 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ժամաբաժանում:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

10. 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում ԱՈՒՊ-ների, դիտարկման թերթիկների հետ կապված աշխատանքներ։

(զեկուցող՝ Ա. Ծատրյան)

11. Ուսուցիչների հերթական և կամավոր ատեստավորում, տարակարգ, ԿԶՆԱԿ-ի կողմից կազմակերպված վերապատրաստումներ։

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

12. 2025-2026 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ընթացքում իրականացված խմբակների ամսական և կիսամյակային հաշվետվություններ։

(զեկուցող՝ Ա. Գևորգյան)

13. 2025-2026 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ընթացքում իրականացված երկարօրյա խմբեր։

(զեկուցող՝ Ա. Գևորգյան)

14. Դպրոցում երեխաների պաշտպանության խմբի ձևավորում։

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

15. 2-9-րդ դասարաններում ՀՊՉ ներդրման գործընթացի վերահսկողություն։

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

16. 2025-2026 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի նախագծային աշխատանքների թեմաների, պլանների, թեմատիկ պլանների, ղեկավարների, մատյանների և հանձնաժողովների կազմի քննարկում։

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Լսեցին 1. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 5-րդ նիստի օրակարգի հաստատման մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը ներկայացրեց Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 5-րդ նիստի օրակարգի կետերը։

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Հաստատել 2025-2026 ուսումնական տարվա Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 5-րդ նիստի օրակարգը։

Լսեցին 2. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի ընդունած որոշումների կատարման մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը ներկայացրեց, որ Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդական միավորման նախորդ նիստում ընդունված բոլոր որոշումները կատարվել են սահմանված ժամկետներում և ըստ հաստատված պլանի։ Նշվեց, որ հանձնարարականներն իրականացվել են լիովին և նպատակային՝ ապահովելով մեթոդմիավորման ընթացիկ գործունեության կարգավորվածությունն ու արդյունավետությունը։

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները։

Մեթոդմիավորման անդամներն ընդգծեցին, որ նախորդ նիստում ընդունված որոշումների իրականացման գործընթացը եղել է համակարգված և արդյունավետ։ Նրանք նկատեցին, որ սահմանված ժամկետների պահպանումը և հանձնարարականների լիակատար կատարման շնորհիվ ապահովվել է կրթական գործընթացի հուսալի կազմակերպություն և մեթոդմիավորման նպատակների արդյունավետ իրականացում։ Մասնակիցները նաև կարևորեցին շարունակական վերահսկողությունը և համագործակցությունը, ինչպես նաև առաջարկեցին նման պրակտիկան պահպանել հետագա նիստերի ժամանակ՝ ապահովելու արդյունավետության և պատասխանատվության կայուն մակարդակ։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման մասին տեղեկատվությունը։

Լսեցին 3. 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի (ՈՒԴԱՏՊ) դեկտեմբեր ամսվա և առաջին կիսամյակում իրականացված աշխատանքների կատարման մասին հարցը։

(զեկուցող՝ Ա.Գևորգյան)

Զեկուցողը ներկայացրեց 2025–2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի շրջանակում դեկտեմբեր ամսվա և առաջին կիսամյակի ընթացքում իրականացված միջոցառումների ընթացքը։ Նա նշեց, որ բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդական միավորման կողմից պլանավորված բոլոր ուսումնադաստիարակչական նախաձեռնությունները հիմնականում կատարվել են նպատակային, համակարգված և սահմանված ժամկետներում՝ համապատասխանելով հաստատված կրթական չափորոշիչներին։

Ներկայացվեց, որ նշված ժամանակահատվածում իրականացվել են վերլուծական և համակարգչային մտածողությունը զարգացնող բաց դասեր, դաս-միջոցառումներ, քննարկումներ, կրթական այցեր, գործնական առաջադրանքներ, դասալսումներ, ինչպես նաև աշխատանքային տետրերի և դասագրքերի ստուգումներ։ Արձանագրվեց, որ առաջին կիսամյակի ընթացքում ՈՒԴԱՏՊ-ով նախատեսված աշխատանքները պատշաճ ձևով և ամբողջությամբ իրականացվել են, իսկ նյութերն, ներառյալ արդյունքների ամփոփումները, հրապարակվել են դպրոցի պաշտոնական կայքում՝ ապահովելով գործընթացի թափանցիկություն և հանրայնացում։

Զեկուցողը նաև անդրադարձ կատարեց ուսումնական գործընթացում ժամանակակից մեթոդների, նոր մոտեցումների և տեխնոլոգիական լուծումների կիրառմանը, որոնք նպաստում են աշակերտների ուսումնառության որակի բարձրացմանը։ Միաժամանակ ներկայացվեցին առանձին գործողությունների արդյունավետությունը ավելացնելու և հետագա բարելավման հնարավոր ուղիները, ինչը հնարավորություն կտա հետագայում ապահովել գործընթացի առավել կազմակերպված և նպատակային իրականացում։

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները

Մեթոդական միավորման անդամները նշեցին, որ իրականացված միջոցառումները նպաստել են սովորողների ակտիվ ներգրավվածությանը և վերլուծական մտածողության հմտությունների զարգացմանը։ Քննարկման ընթացքում անդրադարձ կատարվեց նաև իրականացված աշխատանքների արդյունավետությանը, առկա դժվարություններին և դրանց հաղթահարման հնարավոր ուղիներին երկրորդ կիսամյակում։

Զեկուցողը նշեց, որ միջոցառումների իրականացման ընթացքում բացթողումներ կամ թերակատարումներ չեն արձանագրվել, իսկ ուսուցիչները ցուցաբերել են բարձր պատասխանատվություն, նախաձեռնողականություն և համագործակցային մոտեցում, ինչը հնարավորություն է տվել ծրագրի նպատակները լիարժեք իրականացնել։ Ներկայացվեց, որ ուսումնադաստիարակչական աշխատանքներն իրականացվել են համակարգված, կանխատեսելի և արդյունավետ մեթոդաբանությամբ, ինչը նպաստել է միջոցառումների կազմակերպման որակին և նախատեսված արդյունքների ստացմանը։

Արտահայտվողների կարծիքով՝ նման հետևողական և համակարգված մոտեցումը նպատակահարմար է պահպանել հետագա ամիսներին՝ պահպանելով ձեռք բերված դրական դինամիկան և ամրապնդելով ձևավորված

աշխատանքային մշակույթը: Նրանք նաև ընդգծեցին, որ առաջին կիսամյակի ընթացքում իրականացված աշխատանքները համապատասխանում են տարեկան պլանին և արժանացել են բարձր գնահատականի ընդհանուր արդյունավետության տեսանկյունից:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի դեկտեմբեր ամսվա և առաջին կիսամյակում իրականացված աշխատանքների կատարման մասին տեղեկատվությունը (կցվում է էլեկտրոնային տարբերակով):

Լսեցին 4. Առարկայական օլիմպիադաների դպրոցական փուլի անցկացման և արդյունքների մասին հարցը:

(զեկուցող՝ Ա.Առստամյան)

Զեկուցողը տեղեկացրեց, որ 2025–2026 ուսումնական տարվա առարկայական օլիմպիադաների դպրոցական փուլը իրականացվել է հաստատված ժամանակացույցին համապատասխան և մեկնարկել է 2025 թվականի նոյեմբերի 17-ին: Նա ներկայացրեց օլիմպիադաների կազմակերպման շրջանակում կատարված նախապատրաստական և կազմակերպչական քայլերը՝ շեշտադրելով գործընթացի թափանցիկության, օբյեկտիվության և արդարության ապահովման կարևորությունը:

Նշվեց, որ դպրոցական փուլի կազմակերպումն իրականացվել է գործող կարգերին համապատասխան. ինչպես նախորդ տարիներին, այս ուսումնական տարում ևս առաջադրանքները կազմվել են կենտրոնացված եղանակով և դպրոցներին տրամադրվել են պատրաստի փաթեթներով, ինչը հնարավորություն է տվել ապահովել գնահատման միասնական մոտեցում և անաչառություն:

Զեկուցողը ներկայացրեց նաև մասնակցության տվյալները՝ նշելով, որ բնագիտամաթեմատիկական մասնախմբի առարկաներից առավել ակտիվ մասնակցություն է արձանագրվել «Մաթեմատիկա» առարկայից, իսկ «Քիմիա» առարկայից օլիմպիադային մասնակցել է մեկ սովորող:

Քննարկման ընթացքում ուշադրություն դարձվեց օլիմպիադային մասնակցած սովորողների պատրաստվածության մակարդակին, նրանց հետ իրականացվող նպատակային աշխատանքին և արձանագրված առաջընթացին: Նշվեց, որ olymp.am կայքում արդյունքները ներկայումս հրապարակվում են փուլ առ փուլ, և վերջնական տվյալների ամփոփումից հետո նպատակահարմար է կազմակերպել համակարգված և շարունակական աշխատանք մարզային փուլ անցած աշակերտների հետ՝ նրանց գիտելիքներն ու հմտությունները խորացնելու և առավել բարձր արդյունքներ ապահովելու նպատակով:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները:

Մեթոդական միավորման անդամներն ընդգծեցին, որ առարկայական օլիմպիադաների դպրոցական փուլի կազմակերպման ընթացքում առաջնահերթ ապահովվել են արդարության, թափանցիկության և անաչառության սկզբունքները: Նշվեց, որ վերջին տարիներին դպրոցական փուլի կազմակերպման ձևաչափը իր կառուցվածքով և պահանջներով մոտեցել է մարզային փուլին, ինչը նպաստում է սովորողների առավել հավասար և պատրաստված մասնակցությանը:

Մասնակիցները կարևորեցին նաև օլիմպիադաների անցկացման կարգում իրականացված փոփոխությունների պահպանումը և դրանց հետևողական կիրառումը՝ ընդգծելով համապատասխան վերահսկողության անհրաժեշտությունը: Նշվեց, որ օլիմպիադայի ողջ ընթացքը վերահսկվել է ոչ մասնագիտական անձնակազմի կողմից, ովքեր ապահովել են սահմանված

կարգի խիստ պահպանումը՝ նպաստելով գործընթացի օբյեկտիվության և վստահելիության բարձրացմանը։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն առարկայական օլիմպիադաների դպրոցական փուլի անցկացումը և առարկայական օլիմպիադաների դպրոցական փուլն ամփոփել արդյունքները olymp.am կայքում հրապարակելուց հետո։

Լսեցին 5. 2025-2026 ուսումնական տարվա առաջին կիսամյակի գրավոր աշխատանքների քանակի ու ծրագրերի կատարողականի քննարկման մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը տեղեկացրեց, որ 2025–2026 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացքում գրավոր աշխատանքների կազմակերպումն իրականացվել է գործող ՕԹՊ-ների պահանջներին համապատասխան՝ պահպանելով սահմանված քանակական և տեսակային չափորոշիչները։ Նշվեց, որ ամփոփիչ գրավոր և ամփոփիչ գործնական աշխատանքները պետք է ամբողջությամբ համապատասխանեն ուսուցիչների կողմից կատարված գրանցումներին և հաստատված ամփոփիչ աշխատանքների քանակին, քանի որ դրանք հանդիսանում են սովորողների գնահատման հիմք։

Զեկուցողը կարևորեց ՕԹՊ-ների կատարողականի ապահովումը և դրանց հետևողական իրականացումը՝ ընդգծելով, որ ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպումը հնարավոր է միայն հաստատված ծրագրերի պահանջների լիարժեք պահպանման պայմաններում։ Միաժամանակ հիշեցվեց, որ ամփոփիչ աշխատանքները պարտադիր պետք է նախապես քննարկվեն մեթոդական միավորումների նիստերում և իրականացվեն համաձայնեցված ու հաստատված կարգով։

Նշվեց նաև, որ 2025–2026 ուսումնական տարում 9-րդ դասարանների համար ՕԹՊ-ները, ինչպես նաև ամփոփիչ գրավոր և գործնական աշխատանքները կազմվել և իրականացվել են նոր ՀՊՉ-ների պահանջներին համապատասխան։

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը

Սերգեյ Ավանեսյանն ընդգծեց, որ ամփոփիչ գրավոր աշխատանքների հանձնարարումը պետք է իրականացվի խիստ համապատասխանեցված չափորոշչային պահանջներին՝ լիովին ապահովելով դրանց համապատասխանությունը ՕԹՊ-ներին։ Նա նշեց, որ մեթոդական միավորումների շրջանակում են սահմանվում և հաստատվում ամփոփիչ գրավոր և գործնական աշխատանքների տեսակներն ու քանակական ցուցանիշները, որոնց հիման վրա ուսուցիչները պարտավոր են կազմակերպել ուսումնական տարվա ընթացքում նախատեսված աշխատանքները։

Միաժամանակ Սերգեյ Ավանեսյանը կարևոր համարեց ամփոփիչ աշխատանքների և ՕԹՊ-ների համապատասխանության կրկնակի վերահսկումը՝ ընդգծելով, որ դա անհրաժեշտ նախապայման է էլեկտրոնային մատյաններում գնահատումների և գրանցումների ճշգրիտ, ամբողջական և ժամանակին իրականացման համար։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն առաջին կիսամյակի ամփոփիչ գրավոր և գործնական աշխատանքների կատարողականը, ինչպես նաև մեթոդմիավորման նախագահի կողմից կատարել ստուգումներ ամփոփումների, ամփոփիչ գրավոր աշխատանքների բովանդակության և քանակի հետ կապված։

Լսեցին 6. 2025-2026 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացքում կատարած դասալսումների քննարկման, վերլուծության և ամփոփման մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը ներկայացրեց 2025–2026 ուսումնական տարվա առաջին կիսամյակում բնագիտամաթեմատիկական առարկաների շրջանակում

իրականացված դասալսումների կազմակերպման ընթացքը՝ անդրադառնալով դրանց նպատակներին, դիտարկումների արդյունքներին և արձանագրված եզրահանգումներին: Նշվեցին դասալսումների ընթացքում արձանագրված դրական փորձը, ուսուցման ժամանակակից և արդյունավետ մեթոդների կիրառման օրինակները, ինչպես նաև ուսումնական գործընթացի կազմակերպման ընթացքում ի հայտ եկած խնդիրներն ու բարելավման կարիք ունեցող ուղղությունները:

Զեկուցողը կարևորեց փոխադարձ դասալսումների հաճախականության բարձրացումը, մասնագիտական քննարկումների և դիտարկումների կազմակերպումը՝ նպատակ ունենալով բացահայտել առկա դժվարությունները և ձեռնարկել համապատասխան քայլեր դրանց հաղթահարման ուղղությամբ: Նա ընդգծեց, որ նման աշխատանքը նպաստում է ուսուցիչների մասնագիտական զարգացմանը և ուսուցման ընդհանուր որակի բարձրացմանը: Միաժամանակ ներկայացվեց առաջին կիսամյակի ընթացքում իրականացված դասալսումների արդյունքների համապարփակ ամփոփումը:

Քննարկման ընթացքում անդրադարձ կատարվեց նաև բաց դասերին և դաս-միջոցառումներին ուսուցիչների մասնակցության մակարդակին, ինչպես նաև դրանց արդյունքների համատեղ քննարկման և վերլուծության կարևորությանը՝ հետագա ուսումնադաստիարակչական աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:

Արտահայտվեցին՝ Կ. Արզումանյանը, Հ. Ալավերդյանը:

Արտահայտվողներն իրենց դիտարկումներում բարձր գնահատեցին դասերի կազմակերպման մակարդակը՝ ընդգծելով դասավանդման մեթոդների բազմազանությունը, ժամանակակից մոտեցումների կիրառումը և սովորողների ակտիվ ու նպատակային ներգրավվածությունը ուսումնական գործընթացում: Նրանք նշեցին, որ կիրառվող մեթոդներն ու հնարները նպաստում են ոչ միայն գիտելիքների փոխանցմանը, այլև սովորողների վերլուծական, ստեղծագործական և համագործակցային հմտությունների զարգացմանը:

Քննարկման ընթացքում ներկայացվեցին նաև մի շարք առաջարկություններ՝ ուղղված ուսումնական գործընթացի որակի բարձրացմանը և մեթոդական աշխատանքների արդյունավետության բարելավմանը: Առանձնակի կարևոր համարվեց դասապրոցեսի ընթացքում ճիշտ ընտրված, նպատակային և տեղին կիրառվող մեթոդների օգտագործումը, որոնք հնարավորություն կտան ներգրավել բոլոր աշակերտներին և ապահովել ուսումնառության առավել արդյունավետ արդյունքներ:

Բացի այդ, արտահայտվողները շեշտադրեցին դասալսումների ժամանակ համագործակցային մոտեցումների կիրառման անհրաժեշտությունը՝ որպես փորձի փոխանակման, մասնագիտական աճի և ընդհանուր աշխատանքի արդյունավետության բարձրացման կարևոր նախապայման: Արդյունքների ամփոփման փուլում կարևորեցին ուսուցիչների ցուցաբերած մասնագիտական մոտեցումները, ներկայացված առաջարկությունները, ինչպես նաև վեր հանված խնդիրների կառուցողական քննարկման և լուծման ձևաչափերը:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ընթացքում կատարված դասալսումների արդյունքները (կցվում է ամփոփագիրը):

Լսեցին 7. 2025-2026 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացքում իրականացված նախագծային աշխատանքների հաշվետվությունների քննարկման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Զեկուցողը ներկայացրեց 2025–2026 ուսումնական տարվա առաջին կիսամյակում իրականացված նախագծային աշխատանքների հաշվետվությունների քննարկման ամփոփ արդյունքները՝ ըստ առարկաների և դասարանների։ Նա ընդգծեց, որ իրականացված նախագծերը նպատակաուղղված են եղել սովորողների ստեղծագործական, հետազոտական և հաղորդակցական կարողությունների զարգացմանը, միջառարկայական կապերի ամրապնդմանը, ինչպես նաև կրթական պետական չափորոշիչների պահանջների լիարժեք իրագործմանը։

Զեկուցման ընթացքում նշվեց, որ առաջին կիսամյակի ընթացքում իրականացվել է ընդհանուր առմամբ 26 նախագծային աշխատանք, որոնցից 7-րդ դասարաններում՝ 9, 8-րդ դասարաններում՝ 9, իսկ 9-րդ դասարաններում՝ 8 նախագիծ։ Նախագծային աշխատանքներն իրականացվել են հետևյալ առարկաներից՝ «Ֆրանսերեն», «ԹԳՀԳ», «Հայաստանի պատմություն», «Համաշխարհային պատմություն», «Աշխարհագրություն», «Գրականություն», «Կերպարվեստ», «Հայոց լեզու», «Արվեստ», «Տեխնոլոգիա», «Երաժշտություն», «Հանրահաշիվ», «Երկրաչափություն», «Անգլերեն», «Կենսաբանություն», «Ռուսաց լեզու», «Քիմիա» և «Ֆիզիկա»։

Նախագծային աշխատանքները ղեկավարել են համապատասխան առարկաների ուսուցիչները, իսկ իրականացվել են 7–9-րդ դասարանների այն աշակերտների կողմից, որոնք ընդգրկված են եղել համապատասխան ուսումնական խմբերում։ Հիմք ընդունելով «Հանրակրթական հիմնական, ընդհանուր և այլընտրանքային ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում ուսումնական խմբակների ձևավորման ու գործունեության և ուսումնական նախագծերի իրականացման կարգը», ինչպես նաև մեթոդական միավորման և մանկավարժական խորհրդի ընդունած որոշումները՝ նախագծերի պաշտպանությունները կազմակերպվել են առարկայական հանձնաժողովների միջոցով։ Հանձնաժողովների կազմում ընդգրկվել են տվյալ առարկայի կամ առարկաների ուսուցիչները, մեթոդական միավորման նախագահը, նույն կամ հարակից առարկաների ուսուցիչները և դպրոցի տնօրենի տեղակալը։

Զեկուցողը հավելեց, որ գործող կարգի համաձայն՝ բոլոր նախագծերը և դրանց արդյունքները հրապարակվել են դպրոցի պաշտոնական կայքում՝ ստեղծելով առանձին էջ, որը նպաստում է աշխատանքների հանրայնացմանը, թափանցիկությանը և հասանելիությանը։ Միաժամանակ պահպանվել է այն պահանջը, ըստ որի՝ 7–9-րդ դասարանների յուրաքանչյուր աշակերտ պարտադիր պետք է մասնակցի նվազագույնը մեկ բնագիտական առարկայից իրականացվող նախագծային աշխատանքի։

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամներ և նախագծային աշխատանքների ղեկավարներ

Նախագծային աշխատանքների ղեկավարները հանգամանալից և համակարգված ձևով ներկայացրին իրենց հաշվետվությունները՝ անդրադառնալով իրականացված աշխատանքների ընթացքին, մշակված պրոդուկտներին, իրականացման ընթացքում ի հայտ եկած դժվարություններին, ինչպես նաև արձանագրված ձեռքբերումներին և դրական արդյունքներին։

Մեթոդական միավորման անդամները ծավալուն քննարկում անցկացրին ներկայացված հաշվետվությունների շուրջ՝ գնահատելով նախագծային աշխատանքների թեմատիկ համապատասխանությունը, ուսումնական նպատակների իրագործման աստիճանը, սովորողների ակտիվ և գիտակցված ներգրավվածությունը, կիրառված մեթոդների արդյունավետությունը և ստացված արդյունքները։ Քննարկման ընթացքում շեշտվեց նախագծերի հստակ նպատակային ուղղվածությունը, խմբային աշխատանքի արդյունավետ և կազմակերպված իրականացումը, ինչպես նաև ներկայացման ձևաչափերի

բազմազանությունը, որոնք էապես նպաստել են աշակերտների ստեղծագործական, գործնական և համագործակցային հմտությունների զարգացմանը։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացքում իրականացված նախագծային աշխատանքների հաշվետվությունները և ներկայացնել տնօրենին՝ հաստատման:

Լսեցին 8. 2025-2026 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի էլեկտրոնային մատենավարության ստուգման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Զեկուցողը ներկայացրեց 2025–2026 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացքում էլեկտրոնային մատենավարության վարման վիճակի ստուգման արդյունքները՝ անդրադառնալով մատյաններում արձանագրված թերություններին և բացթողումներին։ Նա ընդգծեց, որ անհրաժեշտ է խստորեն պահպանել գնահատման համակարգում կատարված փոփոխությունները, գնահատումը իրականացնել բացառապես սահմանված ժամկետներում և միայն ամփոփիչ աշխատանքների ընթացքում՝ ապահովելով գործող կարգերի լիարժեք կատարումը։

Առստամյանը հանդես եկավ առաջարկությամբ՝ պարբերաբար և ժամանակին բանավոր կերպով նախազգուշացնել մեթոդմիավորման անդամներին մատենավարության ընթացքում թույլ տրված բացթողումների մասին։ Նշվեց, որ նման մոտեցումը կնպաստի գրանցումների ճշգրտության բարձրացմանը, գնահատման գործընթացի թափանցիկության ապահովմանը և ընդհանուր աշխատանքային կարգապահության ամրապնդմանը։

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները, Ս. Ավանեսյանը:

Արտահայտվողները շեշտեցին ուսուցիչների ամենօրյա աշխատանքի մշտադիտարկման անհրաժեշտությունը, մասնավորապես՝ էլեկտրոնային մատենավարության վարման գործընթացում։ Նրանք հորդորեցին լինել առավել ուշադրիր, խստորեն հետևել օրացուցային-թեմատիկ պլաններին, աշխատանքն ավարտելուց հետո պարտադիր կրկնակի ստուգել մատյանի գրանցումները, իսկ խնդիրների կամ անճշտությունների դեպքում ժամանակին համագործակցել մեթոդական միավորման նախագահի, տնօրենի տեղակալի, իսկ անհրաժեշտության դեպքում նաև ԷԿԴԱՄ-ների հետ։

Սերգեյ Ավանեսյանն իր ելույթում առանձնակի կարևորեց գնահատականների ժամանակին մուտքագրումը, թեմաների համապատասխանեցումը օրացուցային-թեմատիկ պլաններին, ինչպես նաև գրանցումների ճիշտ և սահմանված ժամկետներում իրականացումը։ Նրա խոսքով՝ այս պահանջների պահպանումը կարևոր նախապայման է գնահատման գործընթացի ճշգրտության, տվյալների ամբողջականության և էլեկտրոնային մատենավարության արդյունավետ կազմակերպման ապահովման համար։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի էլեկտրոնային մատենավարության ստուգման ամփոփման մասին ինֆորմացիան, առաջարկել ուսուցիչներին ապահովել էլեկտրոնային մատենավարության վարման կարգի խիստ պահպանումը:

Լսեցին 9. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 2025-2026 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ժամաբաշխման փոփոխության և հաստատման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը ներկայացրեց 2025–2026 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի համար Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման ժամաբաժանումը՝ նշելով, որ որևէ փոփոխություն

նախատեսված չէ և այն շարունակելու է գործել նախապես հաստատված ձևաչափով: Ընդգծվեց, որ ժամաբաժանման հիմքում դրված է 2025–2026 ուսումնական տարվա գործող ուսումնական պլանը, որի համաձայն առաջին և երկրորդ կիսամյակների համար որևէ փոփոխություն նախատեսված չէ, և այն պահպանվում է անփոփոխ:

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը

Սերգեյ Ավանեսյանը նշեց, որ նախնական դասաբաշխման փուլում, ինչպես նաև 2025–2026 ուսումնական տարվա մեկնարկին, մանրամասն քննարկվել է ժամաբաժանման հարցը՝ հաշվի առնելով 2–9-րդ դասարաններում առարկայացանկի հնարավոր փոփոխությունները և նոր ՀՊՉ-ի պահանջները: Նա ընդգծեց, որ այդ պահանջներին համապատասխան մշակվել է 2025–2026 ուսումնական տարվա ուսումնական պլանը, որի հիման վրա էլ իրականացվել և հաստատվել է ժամաբաժանումը:

Որոշեցին՝ Հաստատել 2025-2026 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ժամաբաժանումը (կցվում է):

Լսեցին 10. 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում ԱՈՒՊ-ների, դիտարկման թերթիկների հետ կապված աշխատանքի մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Ծատրյան)

Զեկուցողը ներկայացրեց 2025–2026 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացքում ԿԱՊԿՈՒՀ աշակերտների անհատական ուսուցման պլանների (ԱՈՒՊ) և դիտարկման թերթիկների լրացման ընթացքի վերաբերյալ տեղեկատվությունը՝ ընդգծելով, որ բոլոր աշխատանքներն իրականացվել են գործող կարգավորիչ պահանջներին համապատասխան: Նա նշեց նաև, որ ԿԱՊԿՈՒՀ աշակերտների հետ տարվող աշխատանքների շրջանակում իրականացվում է շարունակական և արդյունավետ համագործակցություն ԳՏՄԱԿ-ի հետ:

Զեկուցողը հավելեց, որ սահմանված կարգի համաձայն՝ երկու ամիսը մեկ անգամ կազմակերպվում են համատեղ քննարկումներ, որոնց մասնակցում են ԳՏՄԱԿ-ի ներկայացուցիչները, առարկայական ուսուցիչները, ուսուցչի օգնականները, հատուկ մանկավարժը և ԿԱՊԿՈՒՀ աշակերտների ծնողները: Նշվեց, որ քննարկումներին մասնակցում է նաև դպրոցի տնօրենի պաշտոնակատար Սերգեյ Ավանեսյանը: Հանդիպումների ընթացքում մանրամասն ուսումնասիրվում և դիտարկվում են համապատասխան փաստաթղթերը, գնահատվում իրականացված աշխատանքների արդյունավետությունը, ինչպես նաև առանձնակի ուշադրություն է դարձվում աշակերտների ձեռքբերումներին, առաջընթացին և զարգացման դինամիկային:

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը:

Սերգեյ Ավանեսյանը կարևորեց աշխատանքների ճիշտ և համակարգված կազմակերպումը, ինչպես նաև ծնող–ուսուցիչ–աջակցության թիմի միջև արդյունավետ և շարունակական համագործակցությունը: Նա ընդգծեց, որ ԱՈՒՊ-ի շրջանակներում սահմանված նպատակների լիարժեք իրագործումը և դիտարկման թերթիկների պատշաճ, ժամանակին լրացումը առանցքային նշանակություն ունեն ուսուցման որակի բարձրացման, ուսումնառության արդյունավետության և աշակերտների համակողմանի զարգացման ապահովման տեսանկյունից:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացքում ԱՈՒՊ-ների, դիտարկման թերթիկների լրացման մասին ինֆորմացիան:

Լսեցին 11. Ուսուցիչների հերթական և կամավոր ատեստավորման, տարակարգի, ԿԶՆԱԿ-ի կողմից կազմակերպված վերապատրաստումների մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը կարևորեց ուսուցիչների հերթական վերապատրաստման գործընթացին ակտիվ մասնակցությունը, ընդգծելով, որ ինչպես 2024–2025, այնպես էլ 2025–2026 ուսումնական տարում կատարվել է ուսուցիչների կարիքի գնահատում, որի արդյունքում 2024–2025 ուսումնական տարում հերթական ատեստավորման է մասնակցել 15 ուսուցիչ, ովքեր հաջողությամբ ավարտել են 1-ին շրջափուլը և 2025–2026 ուսումնական տարվա ընթացքում մասնակցել 2-րդ շրջափուլին: 2025–2026 ուսումնական տարում հերթական ատեստավորմանը մասնակցել է 11 ուսուցիչ, որոնք նույնպես հաջողությամբ ավարտել են 1-ին շրջափուլը:

Զեկուցողը նաև նշեց, որ 2025 թվականին դպրոցի մանկավարժական անձնակազմը ակտիվ մասնակցություն է ունեցել ԿԶՆԱԿ հիմնադրամի կողմից կազմակերպվող դասընթացներին՝ ընդհանուր առմամբ իրականացվել է 12 դասընթաց, որոնց մասնակցել է 33 մանկավարժ: Նա անդրադարձավ նաև «Էսսեագրություն» թեմայով վերապատրաստման դասընթացին, որի նպատակն էր մեթոդմիավորման ուսուցիչներին նախապատրաստել 9-րդ դասարաններում «Գրականություն» և «Հայաստանի պատմություն» առարկաներից միասնական ավարտական քննությանը:

Կամավոր ատեստավորման արդյունքների վերաբերյալ զեկուցողը նշեց, որ 2025 թվականին դպրոցի ուսուցիչները արձանագրել են բարձր արդյունքներ: Առաջին անգամ մասնակցած Կարինե Մալխասյանը, Տաթևիկ Փարսադանյանը, Ռիտա Շալունցը, Կարինե Արզումանյանը, Ռուզաննա Խաչատրյանը և Հայկ Օհանյանը ցուցաբերել են բարձր արդյունքներ, ինչը հաստատեց դպրոցի ուսուցչական կազմի բարձր մասնագիտական ներուժը:

Զեկուցողը ներկայացրեց նաև 2023–2025 թվականներին կամավոր ատեստավորմանը մասնակցած դպրոցի 18 ուսուցիչներին՝ մանրամասն ընդգծելով նրանց մասնագիտական ուղղվածությունը. Մալխասյան Կարինե – դասվար, Փարսադանյան Տաթևիկ – դասվար, Շալունց Ռիտա – դասվար, Արզումանյան Կարինե – «Տեխնոլոգիա», Խաչատրյան Ռուզաննա – «Հասարակագիտություն», Օհանյան Հայկ – «Ֆիզիկա», Ղուլյան Օլյա – «ԹԳՀԳ», Գրիգորյան Թագուհի – «Անգլերեն», Հայրապետյան Մարիամ – «Ռուսաց լեզու», Գյուրջյան Շահանե – «Ռուսաց լեզու», Առստամյան Ալլա – «Մաթեմատիկա», Սարգսյան Լիլիթ – «Հայոց լեզու», Սարգիսջանյան Անուշ – «Հայոց լեզու», Պողոսյան Կարինե – դասվար, Ջավահիրյան Իրինա – դասվար, Պետրոսյան Մարգարիտա – «Ռուսաց լեզու», Հարությունյան Սոնա – «Հայոց լեզու», Աբգարյան Աննա – «Ֆիզկուլտուրա»:

Նշվեց, որ Գորիսի Յուրի Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցի ուսուցիչները 2023-2025 թվականներին ցուցաբերել են բարձր ակտիվություն և բարձր արդյունքներ կամավոր ատեստավորման գործընթացում: Ընդհանուր առմամբ, դպրոցի ուսուցչական անձնակազմի 41 տոկոսը մասնակցել է կամավոր ատեստավորմանը, ստանալով բարձր գնահատականներ: Արդյունքների հիման վրա ուսուցիչների համար սահմանվել է 200 000 դրամ դրույքաչափ, ինչպես նաև 30–50 տոկոս հավելավճար:

Զեկուցողն անդրադարձ կատարեց նաև ուսուցիչների տարակարգի շնորհմանը՝ նշելով, որ 2025 թվականի ընթացքում դպրոցի մանկավարժներից 3-րդ աստիճանի տարակարգ են ստացել «ԹԳՀԳ» առարկայի ուսուցչուհի Օլյա Ղուլյանը և «Մաթեմատիկա» առարկայի ուսուցչուհի Ալլա Զեյնալյանը, իսկ ավելի վաղ 1-ին աստիճանի տարակարգ էր ստացել «Հայոց լեզու» առարկայի ուսուցչուհի Սոնա Հարությունյանը:

Զեկուցողն ընդգծեց, որ ուսուցիչների կամավոր ատեստավորումը ծառայում է նրանց մասնագիտական գիտելիքների բացահայտմանը, մինչդեռ տարակարգը չափանիշ է, որը ցույց է տալիս այդ գիտելիքների կիրառումը դասարանում՝

նկատի ունենալով մանկավարժական մոտեցումների և համապատասխան հմտությունների առկայությունը:
Զեկուցողն ընդգծեց, որ 2025 թվականի կամավոր ատեստավորմանը մասնակցել են նաև «Պատմություն» առարկայի ուսուցչուհի Մերի Դանիելյանն ու դասվար Արուս Դոլունցը, որոնք չեն հաղթահարել 60 տոկոսի շեմը, ուստի 2026 թվականին նրանց համար նախատեսվում է իրականացնել կարիքի գնահատում, որից հետո նրանք պետք է մասնակցեն հերթական ատեստավորմանը՝ 1-ին մակարդակով:
Բնագիտամաթեմատիկական առարկաների՝ Ֆիզիկա, Քիմիա, Կենսաբանություն, ԹԳՀԳ, Աշխարհագրություն, ուսուցիչները մասնակցել են մարզկենտրոնում կազմակերպված վերապատրաստումներին:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները:
Արտահայտվողները շեշտեցին, որ արդի մանկավարժական մեթոդների և դասավանդման հնարների տիրապետումը կարևոր նախապայման է դասի արդյունավետության բարձրացման համար: Նրանց կարծիքով՝ ժամանակակից մոտեցումների կիրառումը նպաստում է ուսումնական գործընթացի ակտիվացմանը, սովորողների ներգրավվածության աճին և ուսումնառության արդյունքների բարելավմանը:
Քննարկման ընթացքում ընդգծվեց նաև հերթական ատեստավորման գործընթացի դերը, քանի որ այն հնարավորություն է տալիս ուսուցիչներին ծանոթանալ ոլորտում տեղի ունեցող նորամուծություններին, ընթացիկ փոփոխություններին, ինչպես նաև ապահովում է փորձի արդյունավետ փոխանակում և մասնագիտական շարունակական զարգացում:
Միաժամանակ կարևորվեց ուսուցիչների ակտիվ մասնակցությունը կամավոր ատեստավորման գործընթացին՝ որպես մասնագիտական աճի խթան: Նշվեց, որ կամավոր ատեստավորումը նախևառաջ նպաստում է ուսուցչի մասնագիտական կարողությունների զարգացմանը, ինքնակրթության խթանմանը և դասավանդման որակի շարունակական բարելավմանը:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն ուսուցիչների հերթական և կամավոր ատեստավորման, տարակարգի, ԿԶՆԱԿ-ի կողմից կազմակերպված վերապատրաստումների մասին զեկուցումը (կցվում է):

Լսեցին 12. 2025-2026 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ընթացքում իրականացված խմբակների ամսական և կիսամյակային հաշվետվությունների մասին հարցը:
(զեկուցող՝ Ա. Գևորգյան)
Զեկուցողը նշեց, որ ըստ ՀՀ կառավարության 2023 թվականի փետրվարի 16-ի №216-Ն որոշման՝ դպրոցի բոլոր խմբավարները ներկայացրել են ամսական և կիսամյակային հաշվետվություններ, որտեղ մանրամասն ներկայացված են եղել 2025–2026 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացքում իրականացված աշխատանքները:
Նա տեղեկացրեց, որ յուրաքանչյուր խմբավար ներկայացրել է ընդհանուր 4 ամսական հաշվետվություն սեպտեմբեր–դեկտեմբեր ամիսների համար, ինչպես նաև 1 կիսամյակային հաշվետվություն, որտեղ ամփոփված են եղել նշված չորս ամիսների ընթացքում կատարված աշխատանքները՝ առանձնացնելով ձեռքբերումներն ու արձանագրված առաջընթացը:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները
Արտահայտվողներն ընդգծեցին, որ խմբավարների հաշվետվությունները կարևոր գործիք են ուսումնական գործընթացի արդյունավետությունը գնահատելու և հետագա պլանավորումները առավել նպատակային ու համակարգված կազմակերպելու համար: Նրանք կարևորեցին աշխատողների գործունեության շարունակական մոնիտորինգը և շեշտեցին, որ հաշվետվությունների միջոցով արձանագրված ձեռքբերումները, ինչպես նաև

բարելավման հնարավոր ուղղությունները, հիմք են հանդիսանում հետագա բարեփոխումների և արդյունավետության բարձրացման համար։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ընթացքում իրականացված խմբակների ամսական և կիսամյակային հաշվետվությունների մասին զեկուցումը և հաստատել հաշվետվությունները։

Լսեցին 13. 2025-2026 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ընթացքում իրականացված երկարօրյա խմբերի մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Գևորգյան)

Զեկուցողը ներկայացրեց, որ 2025–2026 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացքում՝ հոկտեմբերից դեկտեմբեր ամիսներին, կազմակերպվել է երկարօրյա ուսուցման խմբակ 3–4-րդ և 5–7-րդ դասարանների աշակերտների համար։ Աշակերտների ընդգրկումը երկարօրյա խմբերում կատարվել է 2020 թ. հոկտեմբերի 13-ի №38-Ն որոշման համաձայն, որով հաստատվել է Հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում երկարօրյա ուսուցման կազմակերպման կարգը։

Ըստ այդ կարգի՝ երկարօրյա ուսուցումն իրականացվում է երկարօրյա խմբերում, որոնք ստեղծվում են՝

1. Սովորողի ծնողի դիմումի հիման վրա՝
   - ուսումնադաստիարակչական աշխատանքներում ընտանիքին համակողմանի աջակցություն ցուցաբերելու,
   - դասապատրաստումներին աջակցելու,
   - ինքնուրույն սովորելու կարողությունները զարգացնելու նպատակով։
2. Հանրակրթության պետական չափորոշչի (ՀՊՉ) ներդրման շրջանակում՝ այն սովորողների համար, ովքեր ուսումնառության ցածր արդյունք են արձանագրել, նրանց առաջադիմության բարելավման նպատակով։

Զեկուցողը առանձնահատուկ ուշադրություն հրավիրեց այն սովորողների վրա, ովքեր արձանագրել են ուսումնառության ցածր արդյունքներ, և նշեց, որ համապատասխան կարգի համաձայն՝ ՀՊՉ-ի պահանջների ներդրման ժամանակացույցով սահմանված դասարաններում, տվյալ առարկայի ուսումնառության ցածր արդյունքներ արձանագրվելու դեպքում՝ կրթության կառավարման տեղեկատվական համակարգի տվյալների հիման վրա տվյալ առարկան դասավանդող ուսուցիչը կամ դասղեկը կարող է հիմնավորված գրավոր առաջարկով դիմել տնօրենին երկարօրյա ուսուցում կազմակերպելու համար։

Նշվածը կիրականացվի հետևյալ դեպքերում՝

1. Դասարաններում, որտեղ սովորողների առաջադիմությունը գնահատվում է բնութագրող գնահատմամբ՝ յուրաքանչյուր ամսվա ավարտին ձևավորող գնահատման հիման վրա արձանագրված ուսումնառության ցածր արդյունքների դեպքում։
2. Դասարաններում, որտեղ կիրառվում է միավորային գնահատում՝ ձևավորող գնահատման արդյունքում որևէ առարկայից արձանագրված ցածր արդյունքների, ինչպես նաև ամփոփիչ գնահատման արդյունքում 1–3 միավոր ստանալու դեպքում։

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները

Արտահայտվողները ընդգծեցին, որ սահմանված կարգով երկարօրյա խմբերում ընդգրկված աշակերտների մոտ նկատվել է տեսանելի առաջընթաց, և ուսուցիչները հաջողությամբ իրականացրել են նրանց համար նախատեսված նպատակներն ու առաջադրանքները։

Երկարօրյաների ղեկավարները ներկայացրին իրենց հաշվետվությունները՝ մանրամասն անդրադառնալով կատարված աշխատանքներին, արձանագրված ձեռքբերումներին և գործընթացի ընթացքում ձեռք բերված

արդյունքներին, ինչը թույլ տվեց գնահատել աշխատանքների արդյունավետությունը և առաջիկա փուլերի համար առանձնացնել կարևոր ուղղություններ։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ընթացքում իրականացված երկարօրյա խմբերի մասին զեկուցումը և հաստատել հաշվետվությունները։

Լսեցին 14. Դպրոցում երեխաների պաշտպանության խմբի ձևավորման մասին հարցը։

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը նշեց, որ 2025–2026 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակից դպրոցում նախատեսվում է ձևավորել երեխաների պաշտպանության խումբ, որի կազմում ընդգրկվելու են դպրոցի տնօրինության և մանկավարժական անձնակազմի ներկայացուցիչներ, ներառական կրթության բաժնի աշխատակիցներ, ԳՏՄԱԿ-ի ներկայացուցիչներ, ծնողներ և շահագրգիռ այլ կառույցների ներկայացուցիչներ։ Խմբի հիմնական նպատակը երեխաների իրավունքների պաշտպանությունն ապահովելն է, ստեղծել անվտանգ և աջակցող ուսումնական միջավայր, արձագանքել ցանկացած ռիսկային կամ խնդիր ստեղծող իրավիճակի և իրականացնել կանխարգելիչ աշխատանքներ՝ միաժամանակ բարձրացնելով ուսուցիչների և ծնողների գիտակցությունը երեխաների իրավունքների վերաբերյալ։

Զեկուցողը շեշտեց, որ խմբի գործունեությունը հիմնված է երեխաների պաշտպանությունը առաջնահերթություն դարձնելու վրա՝ ապահովելով նրանց ֆիզիկական, հոգեբանական և սոցիալական անվտանգությունը։ Նույն մոտեցումը ներկայում պիլոտային սկզբունքով իրականացվում է հանրապետության մի շարք այլ դպրոցներում, որտեղ փորձարկվում են երեխաների իրավունքների պաշտպանության նոր մեթոդներ և գնահատվում դրանց արդյունավետությունը։ Պիլոտային փորձարկումների հաջող ավարտից հետո նախատեսվում է այս սկզբունքը ընդլայնել և ներդնել բոլոր հանրապետական դպրոցներում՝ նպատակ ունենալով ստեղծել անվտանգ, ներառական և պաշտպանված կրթական միջավայր բոլոր աշակերտների համար։

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները

Արտահայտվողներո ընդգծեցին, որ երեխաների պաշտպանության խմբի ստեղծումը կարևոր քայլ է երեխաների իրավունքների ապահովման և անվտանգ, աջակցող ուսումնական միջավայրի ձևավորման համար։ Նրանք ընդգծեցին, որ այս նախաձեռնությունը կնպաստի աշակերտների ֆիզիկական, հոգեբանական և սոցիալական անվտանգության բարձրացմանը, կհաստատի ուսուցիչների, ծնողների և այլ շահագրգիռ կողմերի արդյունավետ համագործակցությունը, ինչպես նաև կխթանի ներառական և աջակցող մոտեցումների լայն կիրառումը կրթական գործընթացում։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն դպրոցում երեխաների պաշտպանության խմբի ձևավորման մասին զեկուցումը։

Լսեցին 15. 2-9-րդ դասարաններում ՀՊՉ ներդրման գործընթացի վերահսկողության մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Զեկուցողը նշեց, որ տնօրենի, մեթոդմիավորման նախագահի և մեթոդմիավորումների անդամների կողմից անցկացված դասալսումների արդյունքում պարզվել է, որ 2–9-րդ դասարաններում ուսուցիչները հիմնականում ապահովում են նոր ՀՊՉ-ի պահանջները։ Դասալսվող ուսուցիչների մոտ առկա են եղել օրացուցային-թեմատիկ պլանները և օրվա դասի պլանները՝ էլեկտրոնային ձևաչափով, իսկ էլեկտրոնային

մատենավարությունը կազմակերպված է եղել այդ պլաններին համապատասխան։ Շեշտվեց, որ օրացուցային-թեմատիկ պլաններում հստակ սահմանված են եղել տվյալ թեմայի նպատակները և վերջնարդյունքները, ինչը ուսուցիչներին թույլ է տալիս դասի ավարտին պատկերացնել, թե ինչն է անհրաժեշտ ապահովել։

Միաժամանակ արձանագրվեցին որոշ խնդիրներ՝ կապված առարկայական ծրագրով նախատեսված կարողությունների զարգացման հետ, հատկապես այն դասարաններում, որտեղ աշակերտների խտությունը մեծ է և անհնար է բոլոր աշակերտներին հավասարաչափ ներգրավել՝ ապահովելով կարողությունների զարգացումը։ Աշակերտների մեծ թվաքանակը դժվարություններ է ստեղծում դասապրոցեսի ընթացքում նրանց ինքնուրույն աշխատանքի վրա բավարար ուշադրություն դարձնելու առումով։ Այնուհանդերձ, փոքր խմբերի դեպքում ուսուցիչները հաջողությամբ ապահովում են դասի վերջնարդյունքները՝ համապատասխանեցնելով ՕՓՊ-ի պահանջներին։

Զեկուցողը նաև կրկին ուշադրություն հրավիրեց գնահատման հետ կապված հարցերի վրա։ Նախորդ քննարկումներից հետո նկատելի է, որ ուսուցիչները հիմնականում տիրապետում են գնահատման նոր համակարգին, հետևում են սահմանված պահանջներին, իսկ աշակերտները գնահատվում են բացառապես ամփոփիչ աշխատանքների ժամանակ։

Նա առաջարկեց շարունակել կենտրոնացած ուշադրություն դարձնել առարկայական ծրագրով նախատեսված կարողությունների զարգացմանը, թեմայի վերջնարդյունքների ապահովմանը, աշակերտների ակտիվ ներգրավվածությանը դասի ընթացքում և գնահատման նոր համակարգի հետևողական կիրառմանը՝ նպատակ ունենալով բարձրացնել դասի արդյունավետությունը և սովորողների ձեռքբերումները։

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները

Արտահայտվողները ընդգծեցին, որ դասալսումների արդյունքներով պարզ է դարձել՝ ուսուցիչները հիմնականում բավարարում են նոր ՀՊՉ-ի պահանջները, իսկ օրացուցային-թեմատիկ պլանների և մատենավարության ճիշտ կազմակերպումը զգալիորեն նպաստում է դասի արդյունավետության բարձրացմանը։ Նրանց դիտարկմամբ՝ մեծ խմբերում առկա են դժվարություններ աշակերտների հավասար ներգրավվածությունն ապահովելու և կարողությունների զարգացման գործում, ինչի համար անհրաժեշտ է կիրառել լրացուցիչ մեթոդներ՝ յուրաքանչյուր աշակերտի ակտիվ մասնակցությունը խթանելու նպատակով։ Արտահայտվողները կարևորեցին նաև գնահատման նոր համակարգին տիրապետելու անհրաժեշտությունը և ընդգծեցին, որ շարունակական ուշադրությունը ծրագրով նախատեսված կարողությունների զարգացման, թեմաների վերջնարդյունքների ապահովման և ուսուցման արդյունավետության բարձրացման վրա կմնա առաջնահերթություն։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2-9-րդ դասարաններում ՀՊՉ ներդրման գործընթացի վերահսկողության մասին ինֆորմացիան։

Լսեցին 16. 2025-2026 ուսումնական տարվա նախագծային աշխատանքների թեմաների, պլանների, թեմատիկ պլանների, ղեկավարների, մատյանների և հանձնաժողովների կազմի քննարկում։

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Զեկուցողը կարևորեց 2025–2026 ուսումնական տարվա առաջին կիսամյակում նախագծային աշխատանքների կազմակերպման ընթացքում ձեռք բերված փորձը՝ ընդգծելով դրա նշանակությունը ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացման տեսանկյունից։ Նա ներկայացրեց նաև ընթացիկ ուսումնական տարում նախագծային աշխատանքների

իրականացման կարգը, կատարված փոփոխությունները և դրանց նպատակահարմարությունը։

Զեկուցողի տեղեկացմամբ՝ մասնախմբի անդամների կողմից արդեն մշակվել և ներկայացվել են համապատասխան նախագծային թեմաներ 7–9-րդ դասարանների համար՝ հաստատված կարգի պահանջներին համապատասխան։ Թեմաները նախապես հրապարակվել են, ինչի շնորհիվ ապահովվել է ընտրության թափանցիկությունը և աշակերտների ակտիվ ներգրավվածությունը։

Նշվեց, որ ընթացիկ ուսումնական տարում նախագծային աշխատանքներին կարող են մասնակցել նվազագույնը երեք և առավելագույնը յոթ աշակերտ, ինչը խթանում է խմբային աշխատանքը, փոխգործակցությունը և յուրաքանչյուր աշակերտի արդյունավետ մասնակցությունը։ Աշակերտական խմբերը ձևավորվել են նախապես ներկայացված թեմաների հիման վրա, իսկ ուսուցիչները թեմաները փոխանցել են աշակերտական հաղորդակցման հարթակներով (չաթերի միջոցով), ինչի արդյունքում արդեն իրականացվել է խմբերի ձևավորումը և նախագծային թեմաների ու ղեկավարների ընտրությունը։

Զեկուցողը մանրամասն անդրադարձավ նաև հանրակրթական հիմնական, ընդհանուր և այլընտրանքային ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում ուսումնական խմբակների ձևավորման և նախագծային աշխատանքների իրականացման կարգին։ Նա առաջարկեց նախագծային աշխատանքների պաշտպանությունը կազմակերպել առարկայական հանձնաժողովների ձևաչափով՝ ապահովելով մասնագիտական և օբյեկտիվ գնահատում։ Առաջարկվող հանձնաժողովների կազմում պետք է ընդգրկվեն տվյալ կամ հարակից առարկաների ուսուցիչները, մեթոդական միավորման նախագահը, ինչպես նաև դպրոցի տնօրենի տեղակալը։

Զեկույցի ավարտին ներկայացվեց նախագծային աշխատանքների գնահատման կարգը՝ հիմնված ՀՀ ԿԳՄՍ նախարարի հաստատած նախագծային ուսուցման հայեցակարգի և ուսուցիչների վերապատրաստման մոդուլի հաստատման հրամանների վրա։ Զեկուցողը շեշտեց գնահատման չափորոշիչների հստակության, միասնական կիրառման, ինչպես նաև գնահատման գործընթացում հավասարության և արդարության ապահովման կարևորությունը՝ որպես նախագծային աշխատանքի արդյունավետության և աշակերտների ձեռքբերումների ապահովման նախապայման։

Արտահայտվեցին՝ Մ. Դանիելյանը, Ս. Հարությունյանը։

Արտահայտվողները կարևորեցին հանրակրթական հիմնական, ընդհանուր և այլընտրանքային ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում ուսումնական խմբակների ձևավորման, գործունեության և ուսումնական նախագծերի իրականացման կարգով սահմանված պահանջների պահպանումը՝ ընդգծելով դրանց առանցքային նշանակությունը ուսումնական գործընթացի կազմակերպման գործում։ Նրանց կարծիքով՝ այդ պահանջների ճիշտ և շարունակական կիրառում ապահովում է կրթական գործընթացի բազմազանություն, սովորողների ակտիվ, գիտակցված և նպատակային ներգրավվածություն, ինչպես նաև բարձրացնում ուսուցման արդյունավետությունը։

Միաժամանակ անդրադարձ կատարվեց նախագծային աշխատանքների իրականացման կարգում կատարված փոփոխություններին՝ ընդգծելով դրանց արդիականությունը և կարևորությունը։ Նշվեց, որ իրականացված փոփոխությունները միտված են սովորողների հետազոտական և ստեղծագործական գործունեության առավել արդյունավետ կազմակերպմանը, ինքնուրույն մտածողության զարգացմանը, ինչպես նաև թիմային աշխատանքի

և համագործակցության հմտությունների ամրապնդմանը: Արդյունքում, այս փոփոխությունները նպաստում են ուսումնական գործընթացի ընդհանուր որակի բարձրացմանը և արդյունավետության շարունակական ամրապնդմանը:

Որոշեցին՝ Հավանության արժանացնել 2025-2026 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի նախագծային աշխատանքների թեմաները, պլանները, թեմատիկ պլանները, ղեկավարներին, մատյանները և հանձնաժողովների կազմը (կցվում է):

Մ/Մ նախագահ՝ _____ Ա. Դաջունց

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ԲՆԱԳԻՏԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №6

«30» հունվար 2026թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին ՄՄ հետևյալ անդամները՝

1. Անուշ Դաջունց (մ/մ նախագահ)
2. Սիրուշ Բաղդասարյան
3. Արփինե Մարտիրոսյան
4. Ալլա Զեյնալյան
5. Հերմինե Ալավերդյան
6. Օլյա Ղուլյան
7. Արմանուշ Բակունց
8. Հայկ Օհանյան
9. Շահանե Ակլունց
10. Մերի Մկրտչյան
11. Մարետա Հարությունյան
12. Կարինե Արզումանյան
13. Ալեքսանդր Հայրապետյան

Նիստին ներկա էր տնօրենի Ժ/Պ Սերգեյ Ավանեսյանը, տնօրենի տեղակալ Արաքսյա Առստամյանը, ուսուցչի օգնական Արփինե Ծատրյանը, ԿԱԴԱՀ Արմիդա Գևորգյանը

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 6-րդ նիստի օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Ա. Դաջունց)
2. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի ընդունած որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Ա. Դաջունց)
3. 2-9-րդ դասարաններում բնագիտամաթեմատիկական մասնախմբի առարկաներից նոր ՀՊՉ-ների ներդրման գործընթացի ընթացքի վերահսկողություն:
(զեկուցող՝ Ա. Առստամյան)
4. Էլեկտրոնային մատենավարության ստուգում:
(զեկուցող՝ Ա. Առստամյան)
5. ԱՈՒՊ-ների, դիտարկման թերթիկների հետ կապված աշխատանքներ:
(զեկուցող՝ Ա. Ծատրյան)
6. 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական (ՈՒԴԱՏՊ) աշխատանքների տարեկան պլանի հունվար ամսվա ընթացքում իրականացրած աշխատանքներ:
(զեկուցող՝ Ա. Գևորգյան)
7. 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսների հաշվետվությունների քննարկում:
(զեկուցող՝ Ա. Գևորգյան)
8. 5-9-րդ դասարաններում «Մաթեմատիկա», «Հանրահաշիվ» առարկաներից տնօրենության կողմից գրավոր աշխատանքների նախապատրաստում և գրավորների հաստատում:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Լսեցին 1. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 6-րդ նիստի օրակարգի հաստատման մասին հարցը:
(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը ներկայացրեց Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 6-րդ նիստի օրակարգի կետերը:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Հաստատել 2025-2026 ուսումնական տարվա Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 6-րդ նիստի օրակարգը:

Լսեցին 2. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի ընդունած որոշումների կատարման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը ներկայացրեց, որ բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստում ընդունված որոշումները կատարվել են սահմանված ժամկետներում: Նա նշեց, որ իրականացվել են նախատեսված աշխատանքները, կատարվել են համապատասխան քայլեր ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպման ուղղությամբ, և մեթոդմիավորման անդամները պատշաճ կերպով ապահովել են ընդունված որոշումների իրականացումը:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները:

Արտահայտվողները նշեցին, որ մեթոդմիավորման նախորդ նիստում ընդունված որոշումների ժամանակին իրականացումը վկայում է անդամների պատասխանատու և կազմակերպված աշխատանքի մասին: Նրանք կարևորեցին նման հետևողական մոտեցումը՝ ընդգծելով, որ դա նպաստում է ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպմանը և մեթոդմիավորման աշխատանքների համակարգված իրականացմանը: Միաժամանակ առաջարկեցին նաև հետագայում պահպանել նույն աշխատաոճը և շարունակել ուշադրություն դարձնել ընդունված որոշումների լիարժեք կատարմանը:

Որոշեցին՝ Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման մասին տեղեկատվությունն ընդունել ի գիտություն:

Լսեցին 3. 2-9-րդ դասարաններում բնագիտամաթեմատիկական մասնախմբի առարկաներից նոր ՀՊՉ-ների ներդրման գործընթացի ընթացքի վերահսկողության հարցը:

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Զեկուցողը նշեց, որ 2–9-րդ դասարաններում նոր չափորոշիչների ներդրման գործընթացն իրականացվում է գործող իրավական և մեթոդական փաստաթղթերի պահանջներին համապատասխան: Նա ներկայացրեց, որ դասավանդման ընթացքում կիրառվում են ուսուցման ժամանակակից մեթոդներ, ապահովվում են չափորոշչային պահանջներին համապատասխան ուսումնառության արդյունքները, ինչպես նաև ուսուցիչները կիրառում են ձևավորող գնահատման տարբեր մեխանիզմներ:

Ընդգծվեց, որ ուսումնական գործընթացում լայնորեն կիրառվում են սովորողակենտրոն ուսուցման մոտեցումներ, կազմակերպվում են ինտեգրված դասեր, իրականացվում են նախագծային և հետազոտական աշխատանքներ, որոնք հանդիսանում են նոր չափորոշչի կարևոր բաղադրիչներ:

Զեկուցողը կարևորեց նաև առարկայական ծրագրերի և ՕԹՊ-ների համապատասխանությունը ՀՊՉ պահանջներին՝ հատկապես ուշադրություն դարձնելով ուսումնառության ակնկալվող արդյունքների հստակ ձևակերպմանը և դրանց իրականացման մակարդակին: Նա ընդգծեց, որ անհրաժեշտ է շարունակաբար հետևել ծրագրերի և դասավանդման գործընթացի համապատասխանությանը չափորոշչային պահանջներին՝ ապահովելով ուսուցման արդյունավետությունը:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները։

Արտահայտվողները կարևորեցին նոր չափորոշիչների ներդրման գործընթացի հետևողական իրականացումը՝ նշելով, որ այն նպաստում է ուսուցման որակի բարձրացմանը և սովորողների կարողությունների ու հմտությունների զարգացմանը։ Նրանք ընդգծեցին ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառման, սովորողակենտրոն մոտեցումների, ինչպես նաև նախագծային և հետազոտական աշխատանքների կազմակերպման կարևորությունը։

Միաժամանակ արտահայտվողները առաջարկեցին շարունակել ուշադրություն դարձնել ձևավորող գնահատման արդյունավետ կիրառմանը, ապահովել առարկայական ծրագրերի և ՕԹՊ-ների լիարժեք համապատասխանությունը ՀՊՉ պահանջներին, ինչպես նաև խրախուսել ուսուցիչների միջև փորձի փոխանակումը՝ նոր չափորոշչի պահանջների առավել արդյունավետ իրականացման նպատակով։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն նախորդող ժամանակահատվածում 2-9-րդ դասարաններում նոր ՀՊՉ ներդրման գործընթացի ընթացիկ վերահսկողության մասին ինֆորմացիան։

Լսեցին 4. Էլեկտրոնային մատենավարության ստուգման հարցը։

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը կարևորեց ուսուցիչների կողմից մատենավարության ոլորտում իրականացված հետևողական և պատասխանատու աշխատանքը՝ ընդգծելով դրա նշանակությունը ուսումնական գործընթացի պատշաճ կազմակերպման և փաստաթղթավորման որակի բարձրացման գործում։ Նշվեց, որ մշտական վերահսկողության և համակարգված աշխատանքի շնորհիվ բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման ուսուցիչների շրջանում զգալիորեն նվազել են մատենավարության ոլորտում առկա բացթողումները, բարձրացել է աշխատանքի արդյունավետությունը և ապահովվել է սահմանված պահանջների առավել լիարժեք կատարումը։

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները։

Արտահայտվողները կարևորեցին իրականացված աշխատանքը՝ նշելով, որ մատենավարության պատշաճ վարումը նպաստում է ուսումնական գործընթացի կազմակերպվածությանը և հաշվետվողականությանը։ Նրանք ընդգծեցին, որ անհրաժեշտ է պահպանել նույն հետևողական մոտեցումը նաև հետագայում՝ շարունակելով ուշադրություն դարձնել փաստաթղթերի ճիշտ և ժամանակին լրացմանը, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում կազմակերպել փոխադարձ աջակցություն և խորհրդատվություն ուսուցիչների միջև։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն նախորդող ժամանակահատվածում էլեկտրոնային մատենավարության ստուգման մասին տեղեկատվությունը։

Լսեցին 5. ԱՈՒՊ-ների, դիտարկման թերթիկների հետ կապված աշխատանքների մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Ծատրյան)

Զեկուցողը ներկայացրեց նախորդ ժամանակահատվածում ԿԱՊԿՈՒ աշակերտների ԱՈՒՊ-ների մշակման, իրականացման և վերահսկման գործընթացը, ինչպես նաև դիտարկման թերթիկների պատշաճ լրացման վերաբերյալ իրականացված աշխատանքները։ Նա ընդգծեց, որ նշված գործընթացները կազմակերպվել են սահմանված կարգերի, չափորոշիչների և մասնագիտական պահանջների համաձայն՝ ապահովելով յուրաքանչյուր աշակերտի անհատական կրթական կարիքների հաշվառումը և ուսումնական գործընթացի նպատակային կազմակերպումը։

Նշվեց նաև, որ իրականացված աշխատանքները հնարավորություն են տվել ապահովել սովորողների ուսումնական առաջադիմության համակարգված մշտադիտարկում, ժամանակին բացահայտել առկա դժվարությունները և պլանավորել համապատասխան աջակցող միջամտություններ՝ նպաստելով ներառական կրթության արդյունավետ իրականացմանն ու դրա որակի շարունակական բարձրացմանը։

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամներ, Սերգեյ Ավանեսյանը։

Արտահայտվողները կարևորեցին ԿԱՊԿՈՒ սովորողների հետ իրականացվող հետևողական աշխատանքը՝ ընդգծելով ԱՈՒՊ-ների պատշաճ մշակման և իրականացման նշանակությունը սովորողների կրթական առաջընթացի ապահովման գործում։ Նրանք առաջարկեցին նաև շարունակել համագործակցությունը դասավանդող ուսուցիչների, մասնագետների և ծնողների միջև՝ յուրաքանչյուր սովորողի կրթական կարիքներին առավել հասցեական արձագանքելու նպատակով։

Սերգեյ Ավանեսյանը կարևորեց աշխատանքի արդյունավետ և ճիշտ կազմակերպումը՝ ընդգծելով ծնող–ուսուցիչ–աջակցության թիմ համագործակցության նշանակությունը։ Նա նշեց, որ նման համագործակցությունը նպաստում է յուրաքանչյուր սովորողի կրթական կարիքների առավել լիարժեք բացահայտմանը և համապատասխան աջակցության կազմակերպմանը։

Միաժամանակ Սերգեյ Ավանեսյանը կարևորեց օրացուցային-թեմատիկ պլաններով սահմանված նպատակների ամբողջական և արդյունավետ իրականացումը ԱՈՒՊ-ի շրջանակներում, ինչպես նաև դիտարկման թերթիկների ճիշտ և համակարգված լրացումը։ Նա ընդգծեց, որ նշված մոտեցումները հնարավորություն են տալիս ապահովել աշակերտների ուսումնական առաջընթացի հետևողական մշտադիտարկում, ավելի արդյունավետ պլանավորել աջակցող աշխատանքները և բարձրացնել կրթական գործընթացի ընդհանուր որակը։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն նախորդող ժամանակահատվածում ԱՈՒՊ-ների, դիտարկման թերթիկների մասին զեկուցումը։

Լսեցին 6. 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական (ՈՒԴԱՏՊ) աշխատանքների տարեկան պլանի հունվար ամսվա ընթացքում իրականացրած աշխատանքների մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Գևորգյան)

Զեկուցողը ներկայացրեց ՈւԴԱՏՊ-ին համապատասխան հունվար ամսվա ընթացքում իրականացված աշխատանքների հաշվետվությունը՝ ընդգծելով դրանց համակարգված և նպատակաուղղված բնույթը։ Նշվեց, որ հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է ուսումնական գործընթացի կազմակերպման շարունակական վերահսկողություն, ինչպես նաև կազմակերպվել են նախապատրաստական աշխատանքներ՝ մարզային օլիմպիադաներին սովորողների պատշաճ մասնակցությունն ապահովելու նպատակով։

Անվտանգ և ապահով կրթական միջավայրի տարվա ամսական միջոցառումների ժամանակացույցին համապատասխան կազմակերպվել է «Ճանաչենք մեր դպրոցը. անվտանգ մուտք և ելք» թեմայով բաց դաս։ Այն իրականացվել է դպրոցի Արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության մեթոդմիավորման նախագահ Աննա Աբգարյանի և «ՆԶՊ» առարկայի ուսուցիչ Արտուր Հովսեփյանի նախաձեռնությամբ՝ ՀՀ ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Սյունիքի մարզային փրկարարական վարչության Գորիսի հրշեջ-փրկարարական ջոկատի հետ համագործակցությամբ։

Բացի այդ, անցկացվել է Հայոց բանակի օրվան նվիրված դաս-միջոցառում, ինչպես նաև իրականացվել են կրթական ծրագրերի արդյունավետ իրականացմանն ուղղված մի շարք աշխատանքներ, որոնք նպաստել են կրթության որակի բարձրացմանը և ուսումնական միջավայրի շարունակական զարգացմանը։

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամներ

Արտահայտվողները բարձր գնահատեցին իրականացված աշխատանքների արդյունավետությունն ու բազմաբովանդակությունը՝ նշելով, որ նման նախաձեռնությունները նպաստում են ինչպես սովորողների գիտելիքների ու կարողությունների զարգացմանը, այնպես էլ նրանց քաղաքացիական և հայրենասիրական դաստիարակությանը։ Նրանք կարևորեցին նաև դպրոց-համայնք համագործակցության ամրապնդումը և առաջարկեցին շարունակել նման նախաձեռնությունները՝ ապահովելով սովորողների ակտիվ մասնակցությունն ու ուսումնական գործընթացի առավել արդյունավետ կազմակերպումը։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանով նախատեսված հունվար ամսվա ընթացքում իրականացված աշխատանքները:

Լսեցին 7. 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսների հաշվետվությունների քննարկում:

(զեկուցող՝ Ա. Գևորգյան)

Զեկուցողը ներկայացրեց 2025–2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի սեպտեմբեր–դեկտեմբեր ամիսների ընթացքում իրականացված աշխատանքների հաշվետվությունները։ Ներկայացվեց աշխատանքների ընթացքը, անցկացված դասալսումները, տրամադրված մեթոդական աջակցությունները, ինչպես նաև տարբեր նախաձեռնություններ՝ ընդգծելով դրանց նպատակաուղղվածությունն ու արդյունավետությունը։

Անդրադարձ կատարվեց նոր ՀՊՉ ներդրման արդյունքներին՝ ըստ կրթական աստիճանների, ուսումնառության էսսեագրության ոլորտում իրականացված աշխատանքներին և ուսումնական նախագծերի իրականացման ընթացքին։ Բացի այդ, առանձնակի ուշադրություն դարձվեց դպրոցի կառավարման արդյունավետությանը՝ ընդգծելով նրա կարևոր դերը ուսումնադաստիարակչական գործընթացների կազմակերպման և կրթական ծրագրերի որակի ապահովման գործում։

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները

Արտահայտվողները կարևորեցին հաշվետվության մեջ ներկայացված աշխատանքների բազմաբնույթությունը և նպատակային կազմակերպումը։ Նրանք ընդգծեցին նոր ՀՊՉ-ի ներդրման արդյունավետությունը, ինչպես նաև գնահատեցին դպրոցի կառավարման դերն ու հետևողական մոտեցումը կրթական գործընթացների բարձր որակի ապահովման գործում։ Միաժամանակ նրանք առաջարկեցին շարունակել մեթոդական աջակցությունների տրամադրումը և խթանել ուսուցիչների փորձի փոխանակումը՝ նոր ծրագրերի առավել արդյունավետ իրականացումը ապահովելու նպատակով։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն ԿԳՄՍ նախարարությանն ուղարկված ուսումնադաստիարակչական աշխատանքների սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսների հաշվետվությունը (կցվում է էլեկտրոնային տարբերակով):

Լսեցին 8. 5-9-րդ դասարաններում «Մաթեմատիկա», «Հանրահաշիվ» առարկաներից տնօրենության կողմից գրավոր աշխատանքների նախապատրաստման և գրավորների հաստատման մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը ներկայացրեց, որ այս ուսումնական տարվա ընթացքում՝ կապված դպրոցի վերանորոգման աշխատանքների և դասապրոցեսի կազմակերպման առնչվող դժվարությունների հետ, տնօրենության կողմից նախատեսված գրավոր աշխատանքները՝ և՛ առաջին, և՛ երկրորդ կիսամյակներին, կիրականացվեն երկրորդ կիսամյակի ընթացքում: Նշվեց, որ ուսումնական գործընթացի կազմակերպման առկա դժվարությունների պատճառով գրավոր աշխատանքները անցկացվելու են թղթային տարբերակով, ի տարբերություն նախորդ տարվա, երբ աշակերտները աշխատում էին QR կոդերի միջոցով:

Նախատեսվում է, որ 2025–2026 ուսումնական տարվա առաջին և երկրորդ կիսամյակներում՝ 5–6-րդ դասարաններում «Մաթեմատիկա», իսկ 7–9-րդ դասարաններում «Հանրահաշիվ» առարկաներից տնօրենության կողմից նախատեսված գրավոր աշխատանքները կտրվեն թեստային տարբերակով, օգտագործելով նախապես հաստատված օրինակներ: Հատկանշական է նաև, որ պետք է հաշվի առնել առարկայական չափորոշչային պահանջները, ինչը ապահովում է գնահատման ճշգրտությունն ու հստակությունը:

Զեկուցողն ընդգծեց, որ ուսուցիչները պետք է ստուգեն ոչ միայն իրենց դասարանների աշխատանքները, այլ նաև կիրառեն խառը սկզբունքը, որը ապահովում է աշխատանքի օբյեկտիվ և անկախ գնահատումը: Գրավոր աշխատանքների կազմակերպման ընթացքում պետք է ձգտել խախտումներ չլինելու հնարավորինս մեծ ապահովման: Թեստերի մի քանի տարբերակներից յուրաքանչյուր դասարանի համար ընտրվելու է պատահականության սկզբունքով մեկ տարբերակ, ուսումնական մասի ղեկավարի և մեթոդմիավորման նախագահի համատեղ վերահսկողությամբ:

Արտահայտվեցին՝ Ա. Մարտիրոսյանը, Ս. Բաղդասարյանը, Ա. Զեյնալյանը:

Արտահայտվողները կարևորեցին գրավոր աշխատանքների կազմակերպման նպատակային և համակարգված մոտեցումը՝ ընդգծելով, որ թղթային տարբերակով և խառը սկզբունքի կիրառմամբ իրականացվող գնահատումը կբարձրացնի աշխատանքի օբյեկտիվությունը և կփոխանցի վստահություն սովորողներին: Նրանք նաև առաջարկեցին շարունակել վերահսկողությունը և անհրաժեշտության դեպքում կատարել լրացուցիչ հարմարեցումներ՝ հաշվի առնելով դասապրոցեսի կազմակերպման հատուկ պայմանները և աշակերտների բարեկեցությունը:

Որոշեցին՝

1. 5-9-րդ դասարաններում «Մաթեմատիկա», «Հանրահաշիվ» առարկաներից տալ տնօրենության կողմից գրավոր աշխատանքներ՝ 2025-2026 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի համար:
2. Հաստատել գրավոր աշխատանքների տարբերակները:

Մ/Մ նախագահ՝ Ա. Դաջունց

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ԲՆԱԳԻՏԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №7

«25» փետրվար 2026թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին ՄՄ հետևյալ անդամները՝

1. Անուշ Դաջունց (մ/մ նախագահ)
2. Սիրուշ Բաղդասարյան
3. Արփինե Մարտիրոսյան
4. Ալլա Զեյնալյան
5. Հերմինե Ալավերդյան
6. Օլյա Ղուլյան
7. Արմանուշ Բակունց
8. Հայկ Օհանյան
9. Շահանե Ակլունց
10. Մերի Մկրտչյան
11. Մարետա Հարությունյան
12. Կարինե Արզումանյան

Նիստին ներկա էին տնօրենի Ժ/Պ Սերգեյ Ավանեսյանը, տնօրենի տեղակալ Արաքսյա Առստամյանը, ԿԱԴԱՀ Արմիդա Գևորգյանը, ուսուցչի օգնական Արփինե Ծատրյանը:

Ο Ր Ա Կ Ա Ր Գ

1. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 7-րդ նիստի օրակարգի հաստատում:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

2. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի ընդունած որոշումների կատարման ընթացքի մասին:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

3. 2025-2026 ուսումնական տարվա առաջին կիսամյակի անցած թեմաների սահմաններում «Մաթեմատիկա», «Հանրահաշիվ» առարկաներից 5-9-րդ դասարաններում տնօրենության կողմից տրված գրավոր աշխատանքների արդյունքների ամփոփում:

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

4. 2-9-րդ դասարաններում նոր հանրակրթության չափորոշչի ներդրման գործընթացի ընթացիկ վերահսկողություն:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

5. Էլեկտրոնային մատենավարության ստուգում:

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

6. 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական (ՈՒԴԱՏՊ) աշխատանքների տարեկան պլանի փետրվար ամսում իրականացավ աշխատանքներ:

(զեկուցող՝ Ա. Գևորգյան)

7. Մարզային և հանրապետական առարկայական օլիմպիադաների արդյունքների ամփոփում:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

8. ԱՈՒՊ-ների, դիտարկման թերթիկների հետ կապված աշխատանքներ:

(զեկուցող՝ Ա. Ծատրյան)

9. 5-6-րդ դասարաններում «Տեխնոլոգիա» առարկայի դրվածքի ուսումնասիրության ամփոփում:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

10. Շվեցարիայի Համադաշնության Միջուկային հետազոտությունների եվրոպական կենտրոնում ֆիզիկայի ուսուցչուհի Արմանուշ Բակունցի վերապատրաստման մասին:

(զեկուցող՝ Ա. Բակունց)

Լսեցին 1. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 7-րդ նիստի օրակարգի հաստատման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը ներկայացրեց Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 7-րդ նիստի օրակարգի կետերը:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Հաստատել 2025-2026 ուսումնական տարվա Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 7-րդ նիստի օրակարգը:

Լսեցին 2. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի ընդունած որոշումների կատարման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը տեղեկացրեց, որ Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստում ընդունված որոշումները կատարվել են սահմանված ժամկետներում: Նա ընդգծեց, որ իրականացված աշխատանքները համապատասխանում են ընդունված ծրագրերին և նպաստել են ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպմանը:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները:

Արտահայտվողները կարևորեցին ընդունված որոշումների ժամանակին և հետևողական իրականացման նշանակությունը, նշելով, որ սա վկայում է մեթոդմիավորման անդամների պատասխանատու մոտեցման և համագործակցության արդյունավետության մասին: Նրանք նաև առաջարկեցին շարունակել նույն կարգապահ և համակարգված մոտեցումը՝ ապահովելու նոր նախաձեռնությունների արդյունավետ և ժամանակին իրականացումը:

Որոշեցին՝ Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման մասին տեղեկատվությունն ընդունել ի գիտություն:

Լսեցին 3. 2025-2026 ուսումնական տարվա առաջին կիսամյակի անցած թեմաների սահմաններում «Մաթեմատիկա», «Հանրահաշիվ» առարկաներից 5-9-րդ դասարաններում տնօրենության կողմից տրված գրավոր աշխատանքների արդյունքների ամփոփման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Զեկուցողը ներկայացրեց գրավոր աշխատանքների արդյունքների վերլուծությունը՝ անդրադառնալով սովորողների առաջադիմությանը, գիտելիքների մակարդակին, առավել հաճախ հանդիպող սխալներին և դրանց պատճառներին: Նշվեց, որ արդյունքները ընդհանուր առմամբ բավարար են, սակայն որոշ թեմաներ պահանջում են լրացուցիչ աշխատանք և կրկնություն՝ ուսումնական գործընթացի որակի ապահովման նպատակով:

Զեկուցողը կարևորեց լրացուցիչ աշխատանքների կազմակերպումը, ինչը հնարավորություն կտա վերացնել արձանագրված բացթողումները և բարձրացնել սովորողների գիտելիքների և հմտությունների մակարդակը:

Արտահայտվեցին՝ Ս. Բաղդասարյանը, Ա. Զեյնալյանը և Ա. Մարտիրոսյանը:

Արտահայտվողներն ընդգծեցին վերլուծության կարևորությունը ուսումնական գործընթացի բարելավման համար և առաջարկեցին համակարգված ձևով կազմակերպել կրկնապատրաստման դասերը, ինչպես նաև օգտագործել տարբեր ուսուցման մեթոդներ՝ առավել արդյունավետ բացթողումների վերացման և սովորողների գիտելիքների ամրապնդման համար:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի տնօրենության կողմից տրված գրավոր աշխատանքների արդյունքները (կցվում է ամփոփագիրը):

Լսեցին 4. 2-9-րդ դասարաններում հանրապետական չափորոշչի ներդրման գործընթացի ընթացիկ վերահսկողության մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը նշեց, որ 2–9-րդ դասարաններում նոր չափորոշիչների ներդրման գործընթացը ընթանում է գործող իրավական և մեթոդական փաստաթղթերի պահանջներին լիակատար համապատասխանությամբ։ Ներկայացվեցին դասավանդման ընթացքում կիրառվող ժամանակակից ուսուցման մեթոդները, ուսուցման չափորոշչային պահանջներին համապատասխան ուսումնառության արդյունքների ապահովման գործիքները, ինչպես նաև ուսուցիչների կողմից կիրառվող ձևավորող գնահատման մեխանիզմները։

Ընդգծվեց, որ ուսումնական գործընթացում առաջնահերթություն է տրվում սովորողակենտրոն մոտեցմանը, կազմակերպվում են ինտեգրված դասեր, ինչպես նաև իրականացվում են նախագծային և հետազոտական աշխատանքներ, որոնք հանդիսանում են չափորոշչի առանցքային բաղադրիչներ։

Զեկուցողը կարևորեց առարկայական ծրագրերի և ուսուցչի կողմնորոշիչ ծրագրերի (ՕԹՊ) համապատասխանությունը ՀՊՉ պահանջներին, ինչպես նաև ընդգծեց ուսումնառության ակնկալվող արդյունքների հստակ ձևակերպումն ու դրանց իրականացման մակարդակի մշտադիտարկումն ու գնահատումը, ինչը ապահովում է ուսուցման նպատակային և արդյունավետ կազմակերպումը։

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները։

Արտահայտվողները բարձր գնահատեցին նոր չափորոշիչների ներդրման գործընթացի հետևողականությունն ու համակարգվածությունը։ Նրանք ընդգծեցին սովորողակենտրոն մոտեցումների, նախագծային և հետազոտական աշխատանքների կիրառման կարևորությունը, ինչպես նաև ՕԹՊ-ների և առարկայական ծրագրերի համապատասխանությունը ՀՊՉ պահանջներին՝ նշելով, որ այս մոտեցումները խթանում են սովորողների գիտելիքների և հմտությունների արդյունավետ զարգացումը։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն նախորդող ժամանակահատվածում 2-9-րդ դասարաններում նոր ՀՊՉ ներդրման գործընթացի ընթացիկ վերահսկողության մասին ինֆորմացիան։

Լսեցին 5. Էլեկտրոնային մատենավարության ստուգման մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Զեկուցողը նշեց, որ նախորդ ուսումնական տարիների համեմատ՝ 2025–2026 ուսումնական տարվա ընթացքում էլեկտրոնային մատյանների վարումը ավելի արդյունավետ է կազմակերպվել, և արձանագրված թերությունները զգալիորեն նվազել են, գրեթե չեն նկատվում ուսուցիչների մեծամասնությունում։

Այնուամենայնիվ, նա ընդգծեց, որ անհրաժեշտ է աշխատանքները ավելի հետևողականորեն կազմակերպել և իրականացնել սահմանված ժամկետներում։ Զեկուցողը ընդգծեց, որ նման մոտեցումը թույլ կտա ապահովել էլեկտրոնային մատյանների պատշաճ վարումը և խուսափել հետագայում առաջացող հնարավոր դժվարություններից՝ կրթական գործընթացի որակի և հաշվետվողականության պահպանման համար։

Արտահայտվեցին՝ Սերգեյ Ավանեսյանը

Սերգեյ Ավանեսյանը կարևորեց ուսուցիչների կողմից աշխատանքների բարեխիղճ և պատասխանատու իրականացումը։ Նա նշեց, որ մշտապես պատրաստ է աջակցել մանկավարժներին՝ արձանագրված թերություններն ու հնարավոր բացթողումները ժամանակին շտկելու և աշխատանքային գործընթացը ավելի արդյունավետ կազմակերպելու ուղղությամբ։

Նա նաև ընդգծեց, որ կարևոր է մատենավարությունը կազմակերպել թեմատիկ հաջորդականությանը համապատասխան՝ պահպանելով սահմանված պահանջներն ու ժամկետները։ Սերգեյ Ավանեսյանը համաձայնեց զեկուցողի դիտարկումների հետ՝ նշելով, որ 2025–2026 ուսումնական տարվա ընթացքում արձանագրված բացթողումները նախորդ տարիների համեմատ անհամեմատ քիչ են, իսկ վարչական միջամտությունների անհրաժեշտություն առհասարակ չի առաջացել։

Որոշեցին՝ Ստուգման արդյունքներն ընդունել ի գիտություն։ Տնօրենի տեղակալ Արաքսյա Առստամյանին հանձնարարել պարբերաբար իրականացնել էլեկտրոնային մատյանի դիտարկումներ, բացթողումներ ունեցող ուսուցիչներին տեղեկացնել դրանց մասին և առաջարկել ողջամիտ ժամանակահատված՝ դրանք վերացնելու համար։

Լսեցին 6. 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական (ՈՒԴԱՏՊ) աշխատանքների տարեկան պլանի փետրվար ամսում իրականացրած աշխատանքների մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Գևորգյան)

Զեկուցողը ներկայացրեց 2025–2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի շրջանակում փետրվար ամսվա ընթացքում իրականացված և ընթացիկ աշխատանքների ամփոփ պատկերը։ Նշվեց, որ բնագիտամաթեմատիկական առարկաների ուսուցիչները փետրվար ամսվա ընթացքում իրականացրել են մի շարք կազմակերպչական, ուսումնական և դաստիարակչական միջոցառումներ, որոնցում առաջնահերթություն է տրվել սովորողների ընթերցանության մշակույթի ձևավորմանը, խոսքի զարգացմանը, վերլուծական մտածողության և ստեղծագործական կարողությունների ամրապնդմանը։

Միաժամանակ զեկուցվել է առարկայական օլիմպիադաների տարածքային փուլին սովորողների մասնակցության մասին, ինչպես նաև դպրոցի ղեկավար կազմի՝ տնօրենի, տեղակալի, մեթոդմիավորման նախագահի և զեկուցողի կողմից իրականացված վերահսկողական աշխատանքների արդյունքների վերաբերյալ։

Ընդհանուր առմամբ, նշվեց, որ փետրվար ամսվա աշխատանքներն իրականացվել են պլանավորված ծավալով և նպաստել են սովորողների գիտելիքների ամրապնդմանը, արժեքային համակարգի ձևավորմանը, ինչպես նաև ուսումնական գործընթացի նկատմամբ հետաքրքրության և մոտիվացիայի բարձրացմանը։

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները։

Արտահայտվողները կարևորեցին սովորողների ակտիվ և արդյունավետ մասնակցությունը առարկայական օլիմպիադաների մարզային փուլում, ընդգծելով, որ նկատվում է առաջադիմության դրական տեղաշարժ։ Նրանք բարձր գնահատեցին նաև փետրվար ամսվա ընթացքում կազմակերպված միջոցառումների արդյունավետությունն ու դրանց դաստիարակչական նշանակությունը։

Արտահայտվողները անդրադարձան աշխատանքի ընթացքում առկա որոշ դժվարություններին և ներկայացրին դրանց հաղթահարման հնարավոր ուղիները։ Նրանց խոսքում հնչեցին նաև առաջարկություններ ուսումնադաստիարակչական աշխատանքների առավել արդյունավետ կազմակերպման և հետագա գործունեության կատարելագործման ուղղությամբ։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի փետրվար ամսվա ընթացքում իրականացված աշխատանքները։

Լսեցին 7. Մարզային և հանրապետական առարկայական օլիմպիադաների արդյունքների ամփոփման մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը նշեց, որ 2025–2026 ուսումնական տարվա ընթացքում Գորիսի Յուրի Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցի սովորողները ցուցաբերել են բարձր ակտիվություն և նպատակասլացություն՝ մասնակցելով առարկայական օլիմպիադաներին։

Դպրոցական փուլի արդյունքներով 26 սովորող հաջողությամբ հաղթահարել են մրցույթը և իրավունք ստացել մասնակցելու մարզային փուլին։ Այդ սովորողներն են.

«Ֆրանսերեն» առարկայից մարզային փուլ են անցել.

1. Արզումանյան Արման, 9-րդ «Ա» դասարան
2. Ղասումյան Մանուշակ, 9-րդ «Ա» դասարան
3. Մալինցյան Ավետ, 9-րդ «Ա» դասարան
4. Միխայելյան Լիլիա, 9-րդ «Գ» դասարան

«Հայ գրականություն» առարկայից մարզային փուլ են անցել.

1. Ավագյան Մանե, 9-րդ «Ա» դասարան
2. Միխայելյան Լիլիա, 9-րդ «Ա» դասարան

«Մաթեմատիկա» առարկայից մարզային փուլ են անցել.

1. Տատինցյան Ալետա, 6-րդ «Ա» դասարան
2. Քոչարյան Հենրի, 6-րդ «Բ» դասարան
3. Բաբայան Եվա, 7-րդ «Ա» դասարան
4. Հովհաննիսյան Նարե, 7-րդ «Ա» դասարան
5. Ջհանգիրյան Մարի, 7-րդ «Ա» դասարան
6. Դաջունց Մայիս, 8-րդ «Գ» դասարան
7. Ղասումյան Հրաչիկ, 8-րդ «Գ» դասարան
8. Մելքումյան Միլենա, 8-րդ «Գ» դասարան
9. Պողոսյան Գագիկ, 8-րդ «Գ» դասարան
10. Ջավադյան Ալբերտ, 8-րդ «Գ» դասարան
11. Ջհանգիրյան Հայկ, 8-րդ «Բ» դասարան

«Մայրենի» առարկայից մարզային փուլ է անցել.

1. Քոչարյան Հենրի, 6-րդ «Բ» դասարան

«Հայոց լեզու» առարկայից մարզային փուլ են անցել.

1. Մինասյան Անի, 9-րդ «Գ» դասարան
2. Բաղդագյուլյան Ինեսա, 9-րդ «Ա» դասարան
3. Բակունց Լիա, 9-րդ «Ա» դասարան
4. Մալինցյան Լիլի, 9-րդ «Գ» դասարան
5. Ավագյան Մանե, 9-րդ «Ա» դասարան
6. Մարտիրոսյան Մարի, 9-րդ «Ա» դասարան

«Քիմիա» առարկայից մարզային փուլ է անցել.

1. Բաղդագյուլյան Ինեսա, 9-րդ «Ա» դասարան

«Ինֆորմատիկա» առարկայից մարզային փուլ է անցել.

1. Դաջունց Մայիս, 8-րդ «Գ» դասարան։

Սովորողներից 6-ը մարզային փուլի արդյունքներով, դրսևորելով բարձր գիտելիքներ և մրցունակ պատրաստվածություն, անցել են նաև օլիմպիադայի հանրապետական փուլ։ Այդ սովորողներն են.

«Մաթեմատիկա» առարկայից մարզային փուլ են անցել.

1. Բաբայան Եվա, 7-րդ «Ա» դասարան
2. Ջհանգիրյան Մարի, 7-րդ «Ա» դասարան
3. Դաջունց Մայիս, 8-րդ «Գ» դասարան

«Հայոց լեզու» առարկայից մարզային փուլ են անցել.

1. Մալինցյան Լիլի, 9-րդ «Գ» դասարան
2. Ավագյան Մանե, 9-րդ «Ա» դասարան

«Ինֆորմատիկա» առարկայից մարզային փուլ է անցել.

1. Դաջունց Մայիս, 8-րդ «Գ» դասարան։

Գորիսի Յուրի Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցի այն սովորողները, որոնք մարզային փուլի ընթացքում դրսևորել են բարձր գիտելիքներ և մրցունակ պատրաստվածություն, Սյունիքի մարզպետի կողմից արժանացել են գովասանագրերի։ Այդ սովորողներն են.

«Մայրենի» առարկայից.

1. Քոչարյան Հենրի, 6-րդ «Բ» դասարան

«Մաթեմատիկա» առարկայից.

1. Տատինցյան Ալետա, 6-րդ «Ա» դասարան
2. Բաբայան Եվա, 7-րդ «Ա» դասարան
3. Ջհանգիրյան Մարի, 7-րդ «Ա» դասարան
4. Քոչարյան Հենրի, 6-րդ «Բ» դասարան

Այս ցուցանիշները վկայում են դպրոցի կրթական գործընթացի արդյունավետ կազմակերպման, ուսուցիչների հետևողական աշխատանքի և սովորողների պատասխանատու մոտեցման մասին։ Օլիմպիադաներին մասնակցությունը նպաստում է սովորողների գիտելիքների խորացմանը, ինքնուրույն մտածողության զարգացմանը և առողջ մրցակցային միջավայրի ձևավորմանը։

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները։

Արտահայտվողները բարձր գնահատեցին սովորողների և ուսուցիչների նվաճումները՝ նշելով, որ այս արդյունքները վկայում են դպրոցում կրթական գործընթացի կազմակերպման բարձր մակարդակի և հետևողական մոտեցման մասին։ Նրանք առաջարկեցին շարունակել աջակցել ակտիվ սովորողներին և խրախուսել մասնակցությունը տարբեր մրցույթների՝ խթանելով գիտելիքի զարգացմանն ու մրցունակության բարձրացմանը։

Որոշեցին՝ Մարզային և հանրապետական առարկայական օլիմպիադաների արդյունքների ամփոփման մասին տեղեկատվությունն ընդունել ի գիտություն։

Լսեցին 8. ԱՈՒՊ-ների, դիտարկման թերթիկների հետ կապված աշխատանքների մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Ծատրյան)

Զեկուցողը ներկայացրեց նախորդ ժամանակահատվածում ԿԱՊԿՈՒ աշակերտների ԱՈՒՊ-ների մշակման, իրականացման և վերահսկման, ինչպես նաև դիտարկման թերթիկների պատշաճ լրացման ընթացքը՝ մանրամասն տեղեկատվություն տրամադրելով կատարված աշխատանքների վերաբերյալ։ Նա ընդգծեց, որ բոլոր գործընթացները իրականացվել են սահմանված չափորոշիչներին, կարգերին և մասնագիտական պահանջներին համապատասխան, ինչը հնարավորություն է տալիս ապահովել յուրաքանչյուր աշակերտի անհատական կարիքների հաշվառումը և կրթական գործընթացի արդյունավետ կազմակերպումը։

Նշվեց, որ իրականացված աշխատանքները նպաստել են ուսումնական առաջադիմության մշտադիտարկմանը, խնդիրների ժամանակին բացահայտմանը և համապատասխան աջակցող միջամտությունների պլանավորմանը՝ ուղղված ներառական կրթության որակի շարունակական բարձրացմանը։

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները։

Արտահայտվողները կարևորեցին ԱՈՒՊ-ների համակարգված իրականացման և դիտարկման թերթիկների ճիշտ լրացման նշանակությունը։ Նրանք ընդգծեցին, որ այս մոտեցումները նպաստում են սովորողների անհատական հնարավորությունների զարգացմանը, ուսումնական

գործընթացի արդյունավետ կազմակերպմանը և անհրաժեշտության դեպքում արագ ու նպատակային միջամտությունների իրականացմանը։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն նախորդող ժամանակահատվածում ԱՈՒՊ-ների, դիտարկման թերթիկների մասին զեկուցումը։

Լսեցին 9. 5-6-րդ դասարաններում «Տեխնոլոգիա» առարկայի դրվածքի ուսումնասիրության հարցը։

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը ներկայացրեց 5–6-րդ դասարաններում «Տեխնոլոգիա» առարկայի դասավանդման գործընթացի ուսումնասիրության արդյունքները։ Նշվեց, որ դասերը կազմակերպվում են ուսումնական ծրագրին համապատասխան, պահպանվում է ուսումնական թեմատիկ պլանների համապատասխանությունը, և կիրառվում են նոր չափորոշչային պահանջներին համահունչ մեթոդներ ու հնարներ։

Դասապրոցեսի ընթացքում կիրառվում են խմբային աշխատանքներ, քննարկումներ, բանավեճեր, ինչպես նաև տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների (ՏՀՏ) գործիքներ։ Անդրադարձ կատարվեց սովորողների մասնակցության մակարդակին, հետաքրքրվածությանը և արժեքային դիրքորոշումների ձևավորման գործընթացին։

Միաժամանակ ընդգծվեց, որ անհրաժեշտ է շարունակական ուշադրություն դարձնել սովորողների վերլուծական և քննադատական մտածողության զարգացմանը։ Զեկուցողը կարևորեց դասերի ընթացքում քննարկումների հաճախականությունը՝ անհրաժեշտ համարելով անդրադառնալ առաջացող դժվարություններին և բացթողումներին։

Նշվեց, որ ուսումնասիրության շրջանակում կազմակերպված քննարկումներին և դասալսումներին մասնակցել են մեթոդմիավորման նախագահը, տնօրենի պաշտոնակատար Սերգեյ Ավանեսյանը, տնօրենի տեղակալ Արաքսյա Առստամյանը և բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման անդամ ուսուցիչները։ Դասալսումների նպատակն էր ծանոթանալ սովորողների գիտելիքների մակարդակին, ինչպես նաև աջակցել ուսուցիչներին՝ առկա խնդիրների լուծման և դասերի արդյունավետության բարձրացման ուղղությամբ։

Դասալսումների ընթացքում առանձնակի ուշադրություն դարձվեց ուսուցիչների կողմից նոր չափորոշչային պահանջների կիրառմանը և սահմանված վերջնարդյունքների ապահովմանը։

Արտահայտվեցին՝ Մ. Հարությունյանը, Կ. Արզումանյանը, Ս. Ավանեսյանը։

Արտահայտվողները կարևորեցին «Տեխնոլոգիա» առարկայի նշանակությունը որպես բնագիտամաթեմատիկական առարկաների հիմք։ Շեշտվեց, որ առարկան պետք է պատշաճ ուսումնասիրվի 1-ին դասարանից սկսած, որպեսզի 5–6-րդ դասարաններում ապահովվեն չափորոշչով նախատեսված բոլոր ուսումնական պահանջները։

Սերգեյ Ավանեսյանը նշեց, որ ուսուցման արդյունավետության բարձրացման նպատակով անհրաժեշտ է առավել հաճախ կիրառել լրացուցիչ մեթոդական նյութեր և բազմազան ուսուցման մեթոդներ։ Նա նաև ընդգծեց, որ դպրոցում ընթացող հիմնանորոգման աշխատանքների և երկհերթ ուսուցման պայմաններում երբեմն առաջանում են ընթացիկ դժվարություններ՝ կապված պաստառների և ՏՀՏ գործիքների կիրառման հետ։ Այնուամենայնիվ, նրա խոսքով՝ ուսուցիչները նույնիսկ նման պայմաններում կարողանում են պատշաճ կերպով կազմակերպել դասապրոցեսը և ապահովել ուսուցման արդյունավետությունը։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 5-6-րդ դասարաններում «Տեխնոլոգիա» առարկայի դրվածքի ուսումնասիրության ամփոփման մասին տեղեկատվությունը։

Լսեցին 10. Շվեցարիայի Համադաշնության Միջուկային հետազոտությունների եվրոպական կենտրոնում ֆիզիկայի ուսուցչուհի Արմանուշ Բակունցի վերապատրաստման մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Բակունց)

Զեկուցողը նշեց, որ ընթացիկ տարվա վերապատրաստման ծրագրի շրջանակում, Շվեյցարիայի Համադաշնության Միջուկային հետազոտությունների եվրոպական կենտրոնի (CERN) և Տեսական ֆիզիկայի և մոդելավորման ինստիտուտի (ԻՏՖՄ) միջև ձեռք բերված պայմանավորվածության համաձայն, այս տարի վերապատրաստման դասընթացներին մասնակցել է «Ֆիզիկա» առարկա դասավանդող 24 ուսուցիչ։ Մասնակիցների թվում է նաև Գորիսի Յուրի Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցի ֆիզիկայի ուսուցչուհի Արմանուշ Բակունցը։

1998 թվականից CERN-ն իրականացնում է ուսուցիչների համար նախատեսված միջազգային վերապատրաստման ծրագիր, որի նպատակն է բարձրացնել ֆիզիկայի և հարակից բնագիտական առարկաների դասավանդման որակը՝ ժամանակակից գիտական ձեռքբերումների և նորարարական մեթոդների կիրառման միջոցով։ Ծրագրին մինչ օրս մասնակցել են հազարավոր ուսուցիչներ աշխարհի տարբեր երկրներից։

Նշված նախաձեռնության շրջանակում գործում է նաև հայ ուսուցիչների համար նախատեսված հատուկ ծրագիր։ 2024 թվականին առաջին անգամ հայաստանյան ուսուցիչների խումբը վերապատրաստում է անցել CERN-ում՝ ծանոթանալով ժամանակակից ֆիզիկայի առաջատար հետազոտություններին և կրթական փորձին։

ՀՀ հանրակրթական դպրոցների ուսուցիչների մասնակցությունը փորձի փոխանակման ծրագրին ապահովվել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ֆինանսական աջակցությամբ։ Ծրագրի նպատակն է խթանել ֆիզիկայի ուսուցիչների մասնագիտական զարգացումը, ինչպես նաև նպաստել Հայաստանում CERN-ի հետ համատեղ ֆիզիկային առնչվող կրթական և հանրային միջոցառումների կազմակերպմանը։

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները։

Արտահայտվողները ընդգծեցին նման նախաձեռնությունների կարևորությունը՝ նշելով, որ դրանք զգալիորեն նպաստում են հանրակրթական համակարգում բնագիտական կրթության որակի բարձրացմանը և ուսուցիչների շարունակական մասնագիտական զարգացմանը, ինչպես նաև խթանում են ժամանակակից գիտական մեթոդների կիրառումը դասավանդման ընթացքում։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն Շվեցարիայի Համադաշնության Միջուկային հետազոտությունների եվրոպական կենտրոնում ֆիզիկայի ուսուցչուհի Արմանուշ Բակունցի վերապատրաստման մասին տեղեկատվությունը։

Մ/Մ նախագահ՝ Ա. Դաջունց

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ԲՆԱԳԻՏԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №8

«25» մարտի 2026թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին ՄՄ հետևյալ անդամները՝

1. Անուշ Դաջունց (մ/մ նախագահ)
2. Սիրուշ Բաղդասարյան
3. Արփինե Մարտիրոսյան
4. Ալլա Զեյնալյան
5. Հերմինե Ալավերդյան
6. Օլյա Ղուլյան
7. Արմանուշ Բակունց
8. Հայկ Օհանյան
9. Շահանե Ակլունց
10. Մերի Մկրտչյան
11. Մարետա Հարությունյան
12. Կարինե Արզումանյան
13. Ալեքսանդր Հայրապետյան

Նիստին ներկա էին տնօրենի պաշտոնակատար Սերգեյ Ավանեսյանը, ԿԱԴԱՀ Արմիդա Գևորգյանը:

Ո Ր Ա Կ Ա Ր Գ

1. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատում:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

2. Հաղորդում Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

3. Փոխադարձ դասալսումների կազմակերպում:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

4. Էլեկտրոնային մատենավարության ստուգում:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

5. 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի (ՈՒԴԱՏՊ) մարտ ամսվա ընթացքում իրականացված աշխատանքներ:

(զեկուցող՝ Ա. Գևորգյան)

6. 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի հունվար-փետրվար ամիսների հաշվետվությունների քննարկում:

(զեկուցող՝ Ա. Գևորգյան)

Լսեցին 1. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Հաստատել 2025-2026 ուսումնական տարվա Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 8-րդ նիստի օրակարգը:

Լսեցին 2. Հաղորդում՝ Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը ներկայացրեց Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի օրակարգի կատարողականը՝ համակարգված անդրադառնալով իրականացված աշխատանքներին և դրանց արդյունավետությանը ուսումնական գործընթացի կազմակերպման գործում։

Նշվեց, որ նախատեսված բոլոր միջոցառումները՝ դասալսումները, մեթոդական աշխատանքները, մասնագիտական քննարկումները և փորձի փոխանակումը, իրականացվել են նպատակային և պատասխանատու կերպով՝ նպաստելով ուսուցիչների մասնագիտական զարգացմանն ու դասավանդման որակի բարձրացմանը։ Կարևորվեց նաև համագործակցային աշխատանքային մթնոլորտը։

Ամփոփելով՝ ընդգծվեց, որ ընդունված հանձնարարականներն ու որոշումները կատարվել են ժամանակին և պատշաճ, ինչը դրական ազդեցություն է ունեցել ուսումնական գործընթացի արդյունավետության և սովորողների կրթական արդյունքների վրա։

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները։

Արտահայտվողները բարձր գնահատեցին մեթոդմիավորման իրականացրած աշխատանքները՝ ընդգծելով դրանց կազմակերպվածությունն ու նպատակային բնույթը։ Նշվեց, որ բոլոր միջոցառումները իրականացվել են համակարգված և արդյունավետ՝ նպաստելով ուսումնական գործընթացի կայուն զարգացմանը։

Կարևորվեց, որ իրականացված աշխատանքները դրական ազդեցություն են ունեցել դասերի արդյունավետության, սովորողների ակտիվության և դասավանդման որակի բարձրացման վրա՝ խթանելով նաև նրանց հետաքրքրվածությունն ու ուսումնական նյութի ավելի արդյունավետ յուրացումը։

Առաջարկվեց շարունակել աշխատանքները նույն հետևողականությամբ՝ առավել ակտիվորեն ներդնելով նորարարական մեթոդներ, կիրառելով ժամանակակից կրթական գործիքներ և ընդլայնելով փորձի փոխանակումը՝ ապահովելով կրթական գործընթացի շարունակական զարգացումը։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին հաղորդումը։

Լսեցին 3. Փոխադարձ դասալսումների կազմակերպման մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը կարևորեց փոխադարձ դասալսումների դերը՝ որպես ուսուցիչների մասնագիտական զարգացման, փորձի փոխանակման և համագործակցային միջավայրի ձևավորման արդյունավետ գործիք։ Ընդգծվեց փոխվստահության, բացության և փոխաջակցության մթնոլորտի ձևավորման անհրաժեշտությունը։

Նա նշեց նաև, որ ժամանակակից կրթական պահանջներին համապատասխան՝ անհրաժեշտ է կիրառել նորարարական մեթոդներ՝ խթանելով սովորողների ակտիվ մասնակցությունը, ինքնուրույն մտածողությունը և ստեղծագործական կարողությունները։

Առաջարկվեց յուրաքանչյուր դասալսումից հետո կազմակերպել մասնագիտական քննարկումներ՝ դասի վերլուծության, ուժեղ և թույլ կողմերի բացահայտման և բարելավման քայլերի հստակեցման նպատակով։

Անդրադարձ կատարվեց նաև նոր ՀՊՉ-ների ներդրմանը՝ ընդգծելով դրանց արդյունավետ կիրառման կարևորությունը, ինչպես նաև 2–9-րդ դասարաններում դասալսումների պարբերական կազմակերպման և արձանագրված խնդիրների շարունակական քննարկման անհրաժեշտությունը։

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները։

Արտահայտվողները կարևորեցին փոխադարձ դասալսումների դերը՝ որպես ուսուցիչների մասնագիտական զարգացման, փորձի փոխանակման և համագործակցային միջավայրի ձևավորման արդյունավետ միջոց։ Նշվեց, որ դրանք նպաստում են դասավանդման տարբեր մոտեցումների բացահայտմանը և ուսուցման որակի բարձրացմանը։

Ընդգծվեց նաև փոխվստահության և աջակցող մթնոլորտի կարևորությունը, որը հնարավորություն է տալիս կազմակերպել բաց և կառուցողական քննարկումներ՝ նպաստելով խնդիրների բարձրաձայնմանն ու մասնագիտական աջակցության ապահովմանը։

Մասնակիցները կարևորեցին նորարարական մեթոդների կիրառումը՝ խթանելու սովորողների ակտիվությունը, հետաքրքրվածությունը և ստեղծագործական մտածողությունը՝ ընդգծելով սովորողակենտրոն մոտեցումների նշանակությունը։

Առաջարկվեց յուրաքանչյուր դասալսումից հետո կազմակերպել նպատակային քննարկումներ՝ դասի վերլուծության, ուժեղ և թույլ կողմերի բացահայտման և բարելավման քայլերի հստակեցման համար։

Նշվեց նաև նոր ՀՊՉ-ների արդյունավետ կիրառման անհրաժեշտությունը և դասալսումների ընթացքում արձանագրված խնդիրների շուրջ շարունակական քննարկումների կարևորությունը՝ կրթական գործընթացի զարգացման նպատակով։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն փոխադարձ դասալսումների կազմակերպման մասին զեկուցումը, շարունակել փոխադարձ դասալսումներ իրականացնել, համագործակցել նաև մյուս մեթոդական միավորումների ուսուցիչների հետ։

Լսեցին 4. Էլեկտրոնային մատենավարության ստուգման մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը ներկայացրեց էլեկտրոնային մատենավարության ստուգման արդյունքները՝ ընդգծելով արձանագրված թերությունները, որոնք հիմնականում վերաբերում էին մատյանների ոչ լիարժեք և ոչ ժամանակին լրացմանը։ Նշվեց, որ որոշ ուսուցիչների մոտ առկա են եղել բացթողումներ՝ դասերի թեմաների չլրացման կամ ոչ պատշաճ ձևակերպման առումով։

Ընդգծվեց, որ էլեկտրոնային մատենավարությունը ուսումնական գործընթացի կազմակերպման և վերահսկման կարևոր գործիք է, ուստի դրա ճիշտ և ժամանակին վարումը պարտադիր է։ Առաջարկվեց հնարավորինս սեղմ ժամկետներում վերացնել արձանագրված թերությունները։

Անդրադարձ կատարվեց նաև նոր չափորոշչային դասարաններում ամփոփիչ գնահատականների մուտքագրման խնդիրներին՝ նշելով ժամկետների խախտման դեպքերը և դրանց բացասական ազդեցությունը գործընթացի կազմակերպվածության վրա։

Զեկուցողը կարևորեց սահմանված պահանջների խիստ պահպանումը՝ ընդգծելով, որ գնահատականները պետք է մուտքագրվեն 5 աշխատանքային օրվա ընթացքում, և հորդորեց ցուցաբերել առավել բարձր պատասխանատվություն։

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները, Ս. Ավանեսյանը։

Սերգեյ Ավանեսյանը կարևորեց էլեկտրոնային մատենավարության նկատմամբ ամենօրյա վերահսկողության անհրաժեշտությունը՝ ընդգծելով, որ հետևողական հսկողությունը հնարավորություն է տալիս ժամանակին բացահայտել և շտկել թերությունները։ Նա հորդորեց ուսուցիչներին ապահովել գրանցումների ճշգրտությունն ու ամբողջականությունը՝ պահպանելով սահմանված պահանջները։

Արտահայտվողները՝ կարևորեցին էլեկտրոնային մատենավարության պատշաճ վարումը՝ նշելով, որ այն ուսումնական գործընթացի կազմակերպման հիմնասյուներից է: Ընդգծվեց, որ առկա թերությունները պահանջում են արագ արձագանք, իսկ թեմաների չլրացման և գնահատականների ուշ մուտքագրման դեպքերը պետք է բացառվեն:

Նշվեց նաև ժամկետների պահպանման և պատասխանատու մոտեցման կարևորությունը՝ որպես աշխատանքի անբաժանելի մաս: Առաջարկվեց պարբերաբար կազմակերպել վերապատրաստումներ և ուժեղացնել ներքին վերահսկողությունը՝ կանխելու բացթողումները:

Ամփոփելով՝ հորդոր հնչեց գործել առավել հետևողական և պատասխանատու՝ ապահովելով մատենավարության պատշաճ իրականացումը և ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպումը:

Որոշեցին՝ Ստուգման արդյունքներն ընդունել ի գիտություն: Տնօրենի տեղակալ Արաքսյա Առստամյանին հանձնարարել պարբերաբար իրականացնել էլեկտրոնային մատյանի դիտարկումներ, բացթողումներ ունեցող ուսուցիչներին տեղեկացնել դրանց մասին և առաջարկել ողջամիտ ժամանակահատված՝ դրանք վերացնելու համար:

Լսեցին 5. 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի (ՈՒԴԱՏՊ) մարտ ամսվա ընթացքում իրականացված աշխատանքների մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Գևորգյան)

Զեկուցողը ներկայացրեց 2025–2026 ուսումնական տարվա ՈՒԴԱՏՊ-ի շրջանակում մարտ ամսվա ընթացքում իրականացված աշխատանքների ամփոփ հաշվետվությունը՝ ընդգծելով դրանց համակարգված և վերլուծական բնույթը:

Նշվեց, որ իրականացվել են բազմաբնույթ ուսումնադաստիարակչական միջոցառումներ՝ ուղղված սովորողների հայրենասիրական, բարոյական, քաղաքացիական և գեղագիտական արժեքների ձևավորմանը: Կազմակերպվել են դասղեկական ժամեր, թեմատիկ զրույցներ, ճանաչողական միջոցառումներ, ինչպես նաև առարկայական շաբաթներ և կրթական այլ նախաձեռնություններ:

Կարևորվեց արտադասարանական աշխատանքների ակտիվ իրականացումը, որը նպաստել է սովորողների հետաքրքրությունների բացահայտմանը և ստեղծագործական կարողությունների զարգացմանը: Ընդգծվեց նաև կարգապահության ամրապնդման, հաճախելիության վերահսկման և ծնողների հետ համագործակցության արդյունավետության բարձրացումը:

Ամփոփելով՝ նշվեց, որ իրականացված աշխատանքները եղել են նպատակային և արդյունավետ՝ նպաստելով կրթական գործընթացի որակի բարձրացմանը և սովորողների ակտիվ ներգրավվածությանը:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները:

Արտահայտվողները դրական գնահատեցին մարտ ամսվա ընթացքում իրականացված ուսումնադաստիարակչական աշխատանքները՝ ընդգծելով դրանց բազմաբովանդակությունն ու նպատակային ուղղվածությունը, ինչպես նաև դրանց ներդրումը սովորողների համակողմանի զարգացման գործում:

Կարևորվեցին հայրենասիրական, բարոյական և քաղաքացիական դաստիարակությանն ուղղված միջոցառումները՝ ընդգծելով դրանց նշանակությունը արժեքային համակարգի ձևավորման և սովորողների ակտիվ ներգրավվածության ապահովման գործում:

Նշվեց արտադասարանական աշխատանքների դերը՝ որպես սովորողների կարողությունների բացահայտման, ստեղծագործական մտածողության զարգացման և ինքնուրույնության խթանման միջոց։
Միաժամանակ ընդգծվեց կարգապահության, հաճախելիության վերահսկման և ծնողների հետ համագործակցության շարունակականության կարևորությունը։
Ամփոփելով՝ առաջարկվեց շարունակել աշխատանքները նույն հետևողականությամբ՝ ընդլայնելով միջոցառումների շրջանակը և կիրառելով նորարարական մոտեցումներ։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն մարտ ամսվա ընթացքում իրականացված ուսումնադաստիարակչական աշխատանքները գնահատել լավ։ Շարունակել աշխատանքները ըստ հաստատված տարեկան պլանի՝ առավել ուշադրություն դարձնելով սովորողների ակտիվ մասնակցության ապահովմանը, կարգապահության ամրապնդմանը և դաստիարակչական միջոցառումների բազմազանությանը։

Լսեցին 6. 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի հունվար-փետրվար ամիսների հաշվետվությունների քննարկման մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Գևորգյան)

Զեկուցողը ներկայացրեց 2025–2026 ուսումնական տարվա ՈՒԴԱՏՊ-ի շրջանակում հունվար–փետրվար ամիսներին իրականացված աշխատանքների ամփոփ հաշվետվությունը՝ դրանք ներկայացնելով համակարգված և վերլուծական մոտեցմամբ։
Նշվեց, որ իրականացվել են դասալսումներ, տրամադրվել մեթոդական աջակցություններ և կազմակերպվել մասնագիտական զարգացմանն ուղղված նախաձեռնություններ, որոնք նպաստել են ուսուցման որակի բարձրացմանն ու դասավանդման մեթոդների կատարելագործմանը։
Անդրադարձ կատարվեց նաև նոր ՀՊՉ-ների ներդրման ընթացքին՝ ընդգծելով դրանց արդյունավետ կիրառման ուղղությամբ իրականացվող հետևողական աշխատանքները, ինչպես նաև առկա խնդիրների շարունակական քննարկումը։
Կարևորվեցին էսսեագրության զարգացումը և ուսումնական նախագծերը՝ որպես սովորողների վերլուծական, ստեղծագործական, ինքնուրույն և թիմային կարողությունների զարգացման միջոցներ։
Նշվեց նաև դպրոցի կառավարման արդյունավետության դերը՝ որպես կրթական գործընթացների հաջող կազմակերպման կարևոր գործոն։
Ամփոփելով՝ արձանագրվեց, որ իրականացված աշխատանքները եղել են նպատակային և արդյունավետ՝ նպաստելով կրթական գործընթացի շարունակական զարգացմանը։

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները

Արտահայտվողները բարձր գնահատեցին ներկայացված հաշվետվությունը՝ ընդգծելով դրա ամբողջականությունն ու վերլուծական բնույթը։ Նշվեց, որ հունվար–փետրվար ամիսների աշխատանքները եղել են կազմակերպված և նպատակային՝ ապահովելով ուսումնական գործընթացի արդյունավետ ընթացքը։
Կարևորվեցին դասալսումների և մեթոդական աջակցության դերը՝ որպես ուսուցիչների մասնագիտական զարգացման և դասավանդման որակի բարելավման կարևոր գործոններ։ Դրական գնահատվեց նաև նոր ՀՊՉ-ների ներդրման գործընթացը՝ ընդգծելով շարունակական քննարկումների և վերլուծությունների նշանակությունը։

Նշվեց էսսեագրության և ուսումնական նախագծերի կարևորությունը՝ որպես սովորողների ստեղծագործական, վերլուծական և հետազոտական կարողությունների զարգացման միջոցներ, ինչպես նաև դպրոցի կառավարման արդյունավետության դերը կրթական գործընթացի կազմակերպման գործում։

Ամփոփելով՝ առաջարկվեց շարունակել աշխատանքները նույն հետևողականությամբ՝ զարգացնելով նորարարական մոտեցումները և համագործակցային միջավայրը։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն ԿԳՄՍ նախարարությանն ուղարկված ուսումնադաստիարակչական աշխատանքների հունվար-փետրվար ամիսների հաշվետվությունը (կցվում է էլեկտրոնային տարբերակով):

Մ/Մ նախագահ՝ Ա. Դաջունց

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ԲՆԱԳԻՏԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №9

«29» ապրիլ 2026թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին ՄՄ հետևյալ անդամները՝

1. Անուշ Դաջունց (մ/մ նախագահ)
2. Սիրուշ Բաղդասարյան
3. Արփինե Մարտիրոսյան
4. Ալլա Զեյնալյան
5. Հերմինե Ալավերդյան
6. Օլյա Ղուլյան
7. Արմանուշ Բակունց
8. Հայկ Օհանյան
9. Շահանե Ակլունց
10. Մերի Մկրտչյան
11. Մարետա Հարությունյան
12. Կարինե Արզումանյան
13. Ալեքսանդր Հայրապետյան

Նիստին ներկա էին տնօրենի Ժ/Պ Սերգեյ Ավանեսյանը, տնօրենի տեղակալ Արաքսյա Առստամյանը,ԿԱԴԱՀ Արմիդա Գևորգյանը, ուսուցչի օգնական Արփինե Ծատրյանը:

Ο Ր Ա Կ Ա Ր Գ

1. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատում:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

2. Հաղորդում՝ Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

3. 2025-2026 ուսումնական տարում տնօրենության կողմից 2-րդ կիսամյակում տրվող գրավոր աշխատանքների նախապատրաստում և հաստատում:

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

4. ՀՊՉ ներդրման գործընթացի վերահսկողությունը 2-9-րդ դասարաններում:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

5. Էլեկտրոնային մատենավարության ստուգման արդյունքներ:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

6. 2025-2026ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի (ՈՒԴԱՏՊ) ապրիլ ամսվա ընթացքում իրականացված աշխատանքներ:

(զեկուցող՝ Ա. Գևորգյան)

7. Հարցերի քննարկումներն ու հանձնարարականները՝ կապված քննական առարկաների հետ:

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

8. Ռուսաստանի Դաշնությունից Հայաստան տեղափոխված աշակերտների գիտելիքների ստուգման գրավոր աշխատանքների հանձնարարականների քննարկում:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

9. ԿԱՊԿՈՒ աշակերտներին 9-րդ դասարանների ավարտական քննություններից ազատելու մասին:

(զեկուցող՝ Ա. Ծատրյան)

Լսեցին 1. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Հաստատել 2025-2026 ուսումնական տարվա Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 9-րդ նիստի օրակարգը:

Լսեցին 2. Հաղորդում՝ Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Նիստի ընթացքում ամփոփվեցին բնագիտամաթեմատիկական մեթոդմիավորման նախորդ հանդիպման որոշումների արդյունքները: Զեկուցողն անդրադարձավ իրականացված աշխատանքների համակարգմանն ու դրանց ունեցած արդյունավետ ազդեցությանը: Ըստ ներկայացվածի՝ նախատեսված բոլոր քայլերը կատարվել են լիարժեք ու նպատակային: Զեկուցողը նշեց, որ նախորդ նիստի հանձնարարականների պատշաճ ու ժամանակին կատարումը նկատելիորեն բարելավել է թե՛ ուսումնական գործընթացը, թե՛ սովորողների կրթական ցուցանիշները:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները

Կատարված աշխատանքների քննարկման արդյունքում ՄՄ անդամները մատնանշեցին դրանց արդյունավետությունն ու նպատակային բնույթը, ինչը կայունություն է հաղորդել ուսումնական ողջ գործընթացին: Հանդիպմանը հնչած կարծիքների համաձայն՝ իրականացված քայլերը բարելավել են դասավանդման որակը, բարձրացրել աշակերտների դասապրոցեսին մասնակցելու պատրաստակամությունը և նպաստել նյութի արդյունավետ ընկալմանը: Որպես հետագա անելիք՝ առաջարկվեց պահպանել պատասխանատվության բարձր մակարդակը՝ շեշտը դնելով կրթական նորագույն գործիքների ներդրման, նորարարական մեթոդների կիրառման և միջանկյալ փորձի փոխանակման վրա:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին հաղորդումը:

Լսեցին 3. 2025-2026 ուսումնական տարում տնօրենության կողմից 2-րդ կիսամյակում «Մաթեմատիկա» առարկայից տրվող գրավոր աշխատանքների նախապատրաստում և հաստատում:

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Զեկուցողը նշեց, որ դպրոցում ստեղծված կազմակերպչական իրավիճակից ելնելով՝ նախնական ժամանակացույցում որոշակի փոփոխություններ են արվել: Նա նաև ներկայացրեց թեստերի նախապատրաստման փուլերը, դրանց կառուցվածքն ու անցկացման ընթացակարգը: Շեշտադրվեց, որ առաջադրանքները պետք է կազմվեն բացառապես առարկայական չափորոշիչների ու ծրագրային պահանջների շրջանակում՝ ներառելով աշակերտների գիտելիքներն ու հմտությունները ստուգող տարաբնույթ հարցեր: Նպատակն է ապահովել ուսումնառության արդյունքների համապարփակ, թափանցիկ ու անաչառ գնահատումը:

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը

Արտահայտվողն անդրադարձավ գնահատման օբյեկտիվության ու անկողմնակալության ապահովման մեխանիզմներին: Կարևորվեց թեստերի բովանդակության նախնական մշակումն ու փոխհամաձայնեցումը, ինչը թույլ կտա գործընթացը կազմակերպել ավելի համակարգված:

Միաժամանակ նշվեց, որ թեև նախորդ տարիներին մաթեմատիկայի էլեկտրոնային թեստավորումն ապահովում էր արդյունավետ ու

բազմակողմանի ստուգում՝ զուգահեռ զարգացնելով համակարգչով աշխատելու հմտությունները, այս կիսամյակում պատկերն այլ է: Հաշվի առնելով դպրոցում ընթացող վերանորոգման աշխատանքներն ու դրանցից բխող տեխնիկական խնդիրները՝ առաջարկվեց 2-րդ կիսամյակի տնօրինական գրավոր աշխատանքներն անցկացնել ավանդական՝ թղթային ձևաչափով:

Որոշեցին՝

1. Նախապատրաստել տնօրենության գրավոր աշխատանքները՝ համապատասխան ծրագրային պահանջներին:
2. Ապահովել առաջադրանքների գաղտնիությունը մինչև դրանց կիրառումը:
3. Հաստատել 2025-2026 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի տնօրենության կողմից տրվող գրավոր աշխատանքների տարկերակները (2 տարբերակից)

Լսեցին 4. 2-9-րդ դասարաններում ՀՊՉ ներդրման գործընթացի վերահսկողության մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը տեղեկացրեց, որ 2–9-րդ դասարաններում իրականացվել է բնագիտամաթեմատիկական առարկաների դասավանդման գործընթացի մանրամասն ուսումնասիրություն՝ ՀՊՉ-ի պահանջներին համապատասխան: Արձանագրվեց, որ ուսուցիչների գերակշիռ մասը ուսուցման ընթացքում արդյունավետորեն կիրառում է ժամանակակից և նորարարական մեթոդներ՝ կարևորելով սովորողների կարողունակությունների զարգացումը և ակտիվ ներգրավվածությունը: Նշվեց, որ դասավանդումը հիմնականում իրականացվում է գործնական առաջադրանքների և խաչվող հասկացությունների փոխկապակցված կիրառման միջոցով, ինչը նպաստում է ոչ միայն գիտելիքների ամրապնդմանը, այլև դրանց գործնական կիրառման հմտությունների ձևավորմանը: Ընդգծվեց նաև, որ ուսուցիչները հիմնականում հետևում են միավորային և ձևավորող գնահատման սկզբունքներին՝ ապահովելով սովորողների առաջընթացի կանոնավոր գնահատումը, մշտադիտարկումն ու արդյունավետ հետադարձ կապը: Միևնույն ժամանակ ուսումնասիրության ընթացքում արձանագրվեցին որոշ դժվարություններ 7–9-րդ դասարաններում, հատկապես նախագծային աշխատանքների պլանավորման և իրականացման, ինչպես նաև առանձին դեպքերում ավանդական դասավանդման մեթոդների գերակշռության հետ կապված: Նշվեց, որ առկա խնդիրների հաղթահարման համար անհրաժեշտ է շարունակել մեթոդական աջակցությունը և իրականացնել նպատակաուղղված աշխատանքներ՝ դասավանդման արդյունավետության հետագա բարձրացման նպատակով:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները

Արտահայտվողները նշեցին, որ նոր չափորոշիչների ներդրումը նպաստում է առավել ակտիվ, հետաքրքիր և աշակերտակենտրոն ուսումնական միջավայրի ձևավորմանը: Արտահայտվողները կարևորեցին փոխադարձ դասալսումների շարունակական իրականացումը՝ որպես մասնագիտական փորձի փոխանակման, արդյունավետ մեթոդների տարածման և դասավանդման որակի բարձրացման կարևոր միջոց:

Նշվեց նաև, որ անհրաժեշտ է առանձնահատուկ ուշադրություն դարձնել նոր չափորոշչով սահմանված ութ առանցքային կարողունակությունների նպատակային և արդյունավետ ձևավորմանը՝ դրանք համակարգված կերպով ներառելով դասապրոցեսում և գործնական աշխատանքներում:

Բնագիտամաթեմատիկական առարկաների ուսուցիչները կարևոր համարեցին նաև սովորողների ինքնուրույն աշխատանքի, վերլուծական

մտածողության և հետազոտական կարողությունների հետագա զարգացումն ու կատարելագործումը՝ կիրառելով խնդիրահենք, հետազոտական և գործնական ուսուցման մեթոդներ։

Որոշեցին՝ 2-9-րդ դասարաններում հումանիտար առարկաների մասով ՀՊՉ ներդրման գործընթացի վերահսկողության արդյունքներն ընդունել ի գիտություն։

Լսեցին 5. Էլեկտրոնային մատենավարության ստուգման արդյունքների մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողն իր ելույթում նշեց, որ վերջին շրջանում զգալիորեն բարելավվել է էլեկտրոնային մատյանների վարման կազմակերպվածությունն ու համակարգվածությունը։ Ըստ նրա՝ աշխատանքային գործընթացներն ավելի հստակ և արդյունավետ են դարձել, ինչը նպաստում է տվյալների ժամանակին, ճշգրիտ և ամբողջական մուտքագրմանը։ Նա ընդգծեց, որ ուսուցիչներն առավել պատասխանատու և հետևողական մոտեցում են ցուցաբերում մատենավարական աշխատանքների կատարման նկատմամբ՝ պահպանելով սահմանված կարգը, պահանջներն ու ժամկետները։ Նշվեց, որ այդ մոտեցումը դրական ազդեցություն է ունեցել ինչպես աշխատանքների արդյունավետության, այնպես էլ կրթական գործընթացի թափանցիկության և հաշվետվողականության բարձրացման վրա։ Կարևորեց նաև էլեկտրոնային մատյանների ճիշտ և ժամանակին լրացման շարունակական վերահսկողությունը՝ այն դիտարկելով որպես ուսումնական գործընթացի որակյալ կազմակերպման կարևոր բաղադրիչ։

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները։

Արտահայվողները կարևոր համարեցին տրված հանձնարարականների և ցուցումների պատշաճ իրականացումը՝ նշելով, որ գնահատման գործընթացը և համապատասխան գրանցումները պետք է կատարվեն սահմանված պահանջներին համապատասխան և նախատեսված ժամկետների շրջանակներում։ Ընդգծվեց, որ պատասխանատու և հետևողական աշխատանքը նպաստում է ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպմանը, ինչպես նաև գնահատման թափանցիկության և օբյեկտիվության ապահովմանը։ Միաժամանակ կարևորվեց ՕԹՊ-ով նախատեսված թեմատիկ հաջորդականության պահպանումը՝ որպես ուսումնական ծրագրի լիարժեք իրականացման կարևոր նախապայման։ Նշվեց, որ թեմաների տրամաբանական և փուլային ներկայացումն ապահովում է սովորողների գիտելիքների համակարգված ձևավորումն ու զարգացումը, ինչպես նաև նպաստում է կրթության որակի շարունակական բարելավմանը։

Որոշեցին՝

- Ստուգման արդյունքներն ընդունել ի գիտություն։
- ՄՄ նախագահի կողմից կատարել էլեկտրոնային մատենավարության պարտադիր կատարողականի վերահսկում,
- տնօրենի տեղակալի կողմից կատարել էլեկտրոնային մատենավարության պարտադիր կատարողականի վերահսկում։

Լսեցին 6. 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի (ՈւԴԱՏՊ) ապրիլ ամսվա ընթացքում իրականացված աշխատանքներ։

(զեկուցող՝ Ա. Գևորգյան)

Զեկուցողը նշեց, որ 2025–2026 ուսումնական տարվա ապրիլ ամսվա ընթացքում բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման կողմից ամբողջությամբ իրականացվել են նախատեսված ուսումնադաստիարակչական և մեթոդական աշխատանքները։ Հաշվետու ժամանակահատվածում առանձնահատուկ ուշադրություն է դարձվել

բնագիտամաթեմատիկական առարկաների դասավանդման որակի բարձրացմանը, ուսումնական գործընթացում կիրառվող մեթոդների արդյունավետության ուսումնասիրությանը, էլեկտրոնային մատյանների պատշաճ վարմանը, ինչպես նաև թեմատիկ պլանների և ուսումնական ծրագրերի կատարողականի վերահսկմանը։

Նշվեց, որ մեթոդական աշխատանքների շրջանակում կազմակերպվել և իրականացվել են փոխադարձ դասալսումներ, որոնց արդյունքում ուսուցիչները հնարավորություն են ունեցել փոխանակելու մասնագիտական փորձը, քննարկելու արդյունավետ մանկավարժական մոտեցումներ և առավել նպատակային կիրառելու նոր չափորոշչային պահանջները բնագիտամաթեմատիկական առարկաների դասավանդման ընթացքում։ Կարևորվեց նաև սովորողների ճանաչողական հետաքրքրությունների, տրամաբանական մտածողության և հետազոտական հմտությունների զարգացմանն ուղղված աշխատանքների իրականացումը։ Դասապլրոցեսում և արտադասարանական միջոցառումներում կիրառվել են գործնական, փորձարարական և խնդիրահենք ուսուցման տարրեր, որոնք նպաստել են սովորողների ակտիվ մասնակցությանը, գիտելիքների ամրապնդմանը և դրանց կիրառմանը տարբեր իրավիճակներում։

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները։

Արտահայտվողները քննարկման ընթացքում բարձր գնահատեցին ապրիլ ամսվա ընթացքում բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման կողմից իրականացված աշխատանքները՝ ընդգծելով դրանց նպատակային բնույթը, կազմակերպվածությունն ու արդյունավետությունը։ Նշվեց, որ իրականացված միջոցառումները դրական ազդեցություն են ունեցել ուսումնական գործընթացի որակի բարձրացման, սովորողների ճանաչողական ակտիվության խթանման և մեթոդական աշխատանքի կատարելագործման վրա։

Քննարկման ընթացքում առանձնահատուկ կարևորություն տրվեց փոխադարձ դասալսումների կազմակերպմանը և դրանց արդյունքներին։ Արտահայտվողները շեշտեցին, որ նման ձևաչափը նպաստում է մասնագիտական փորձի փոխանակմանը, դասավանդման արդյունավետ մեթոդների տարածմանը և ուսուցիչների մասնագիտական շարունակական զարգացմանը։ Նշվեց նաև, որ փոխադարձ դասալսումները հնարավորություն են տալիս առավել արդյունավետ կիրառել նոր չափորոշչային պահանջները, կատարելագործել դասավանդման մեթոդները և բարձրացնել բնագիտամաթեմատիկական առարկաների ուսուցման որակը։

ՄՄ անդամները կարևորեցին նաև գործնական, հետազոտական և խնդիրահենք ուսուցման մեթոդների շարունակական կիրառումը՝ դրանք դիտարկելով որպես սովորողների տրամաբանական մտածողության, վերլուծական կարողությունների և ինքնուրույն

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն՝ 2025-2026 ուսումնական տարվա ապրիլ ամսվա ուսումնադաստիարակչական աշխատանքների կատարողականը։

Լսեցին 7. Հարցերի քննարկումներն ու հանձնարարականները՝ կապված քննական առարկաների հետ։

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Զեկուցողը ներկայացրեց քննական խորհրդատվությունների նախնական ժամանակացույցը։ Նիստի մասնակիցներին ծանոթացվեց նաև 9-րդ դասարանների ավարտական քննական հանձնաժողովների ձևավորված կազմերին։ Փաստվեց, որ առաջադրումները կատարվել են խիստ իրավական հիմքերով՝ համաձայն սովորողների ամփոփիչ ստուգման, ատեստավորման, փոխադրման և ավարտման գործող կարգի պահանջների։

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները

Մասնախմբի ուսուցիչները նշեցին, որ դպրոցում նախապես անցկացված փորձնական քննությունները շատ օգտակար էին: Դրանք թույլ տվեցին վեր հանել առկա բացթողումները և աշակերտներին նախապատրաստել ինտեգրված թեստերով աշխատելու նոր մշակույթին: Մանկավարժները միակարծիք էին, որ քննական արդյունքները բարելավելու համար անհրաժեշտ է ակտիվորեն անցկացնել նախատեսված լրացուցիչ խորհրդատվությունները: Հատուկ շեշտվեց տարեվերջյան կրկնություններին բավարար ժամաքանակ հատկացնելու կարևորությունը, ինչը թույլ կտա համակարգել անցած թեմատիկ նյութը և քննություններն անցկացնել պատշաճ մակարդակով: Անդրադառնալով քննական հանձնաժողովների կազմավորմանը՝ ելույթ ունեցողները հաստատեցին, որ կազմերում ընդգրկվել են բոլոր ցանկություն հայտնած ուսուցիչները՝ պահպանելով գործող նորմատիվային իրավական ակտերի և ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2026 թվականի ապրիլի 22-ի հ. 675-Ա/2 հրամանի դրույթները: ՀՀ ԿԳՄՍ նախարարի 22 ապրիլի 2026 թվականի 675-Ա/2 հրամանը:

Որոշեցին՝

- Ընդունել ի գիտություն 9-րդ դասարանում «Գրականություն» և «Հայաստանի պատմություն» առարկաներից ինտեգրված էսսե գրելու քննության նոր ձևաչափը:
- Հավանության արժանացնել 9-րդ դասարանների ավարտական քննությունների հանձնաժողովների կազմերը, ժամանակացույցը, խորհրդատվությունների ժամանակացույցը (կցվում է):

Լսեցին 8. Ռուսաստանի Դաշնությունից Հայաստան տեղափոխված աշակերտների գիտելիքների ստուգման գրավոր աշխատանքների հանձնարարականների քննարկման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը նշեց, որ Ռուսաստանի Դաշնությունից Հայաստան տեղափոխված Մանե և Արթուր Դանիելյանների ծնողի կողմից ներկայացվել է դիմում՝ երեխաների ուսումը շարունակելու Գորիսի Յու. Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցի համապատասխան դասարաններում:

Ըստ ներկայացված տեղեկատվության՝ հիմք ընդունելով «Դպրոցական տարիքի երեխաներին հանրակրթության մեջ ընդգրկելու, սահմանված ժամկետից ուշ ընդգրկվող երեխաների կրթության կազմակերպման և ուսումնական հաստատությունից տեղափոխելու ու ազատելու կարգի» 21-րդ, 22-րդ, 29-րդ և 30-րդ կետերի պահանջները, նշված սովորողները ենթակա են ընդունման մեկ դասարան ցածր՝ համապատասխանաբար 7-րդ և 8-րդ դասարաններ՝ բնագիտամաթեմատիկական առարկաների ուսումնական ծրագրերի շրջանակում:

Զեկուցողը ընդգծեց, որ ընդունման գործընթացի պատշաճ կազմակերպման նպատակով անհրաժեշտ է նախապես գնահատել Մանե և Արթուր Դանիելյանների գիտելիքների մակարդակը բնագիտական առարկաներից: Այդ նպատակով նրանք պետք է կատարեն համապատասխան դասարանների ուսումնական պլանով նախատեսված առարկաներից գրավոր աշխատանքներ:

Նշվեց, որ գնահատման արդյունքներից հետո՝ նույն կարգի 30-րդ կետի պահանջների համաձայն, գործընթացը կշարունակվի մասնագիտական խմբի եզրակացության հիման վրա, որի արդյունքում տնօրենը կընդունի որոշում սովորողների համապատասխան դասարաններում ընդգրկման վերաբերյալ: Միաժամանակ կհաստատվեն անհատական առարկայական պլանները և լրացուցիչ դասընթացների ժամանակացույցը, որոնք ուղղված կլինեն

բնագիտամաթեմատիկական առարկաներից բաց թողնված թեմաների լրացմանը և սովորողների արդյունավետ հարմարվողականությանը։
Զեկուցողը հավելեց, որ մասնագիտական եզրակացությունը կտրվի բոլոր առարկաներից իրականացված գրավոր ստուգումների արդյունքների համակողմանի վերլուծության հիման վրա՝ ապահովելով գործընթացի օբյեկտիվությունը և կարգի պահանջների լիարժեք կատարումը։

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները

Մեթոդմիավորման անդամները քննարկման ընթացքում ծանոթացան Մանե և Արթուր Դանիելյանների դպրոց ընդունման գործընթացին։
Արտահայտվողները ընդգծեցին, որ գործընթացը պետք է իրականացվի գործող կարգի պահանջներին համապատասխան՝ ապահովելով թափանցիկություն, օբյեկտիվություն և սովորողների իրական գիտելիքների մակարդակի ճիշտ գնահատում՝ հատկապես բնագիտամաթեմատիկական առարկաների մասով։ Նրանք դրական գնահատեցին գրավոր ստուգումների միջոցով գնահատման մոտեցումը՝ նշելով, որ այն հնարավորություն է տալիս հիմնավորված որոշում կայացնել սովորողների համապատասխան դասարաններում ընդգրկման վերաբերյալ։ Միաժամանակ կարևորվեց մասնագիտական խմբի եզրակացության դերը՝ որպես ընդունման գործընթացի կարևոր հիմք, ինչպես նաև լրացուցիչ անհատական ուսումնական պլանների և աջակցող դասընթացների կազմակերպման անհրաժեշտությունը՝ բնագիտամաթեմատիկական առարկաների բացթողումները լրացնելու և սովորողների հարմարվողականությունն ապահովելու նպատակով։ Ընդհանուր առմամբ գործընթացը գնահատվեց որպես հիմնավորված և ճիշտ կազմակերպման դեպքում՝ սովորողների կրթական շարունակականության ապահովմանը նպաստող քայլ։

Որոշեցին՝ Հավանության արժանացնել 7-րդ և 8-րդ դասարանների համար ուսումնական պլանով նախատեսված առարկաների գրավոր աշխատանքները և ներկայացնել տնօրենին՝ հաստատման (կցվում է էլեկտրոնային տարբերակով)։

Լսեցին 9. ԿԱՊԿՈՒ աշակերտներին 9-րդ դասարանների ավարտական քննություններից ազատելու մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Ծատրյան)

Զեկուցողը նշեց, որ 9-րդ «Գ» դասարանի աշակերտներ Արթուր Ալումանյանի, Էդիկ Ստեփանյանին և 9-րդ «Բ» դասարանի աշակերտ Ալեքս Սահակյանի ծնողները դիմում են ներկայացրել, որով խնդրել են իրենց երեխային ազատել 9-րդ դասարանների ավարտական քննություններից։

Արտահայտվեցին՝ Ա. Առստամյանը

Արտահայտվողը նշեց, որ Արթուր Ալումանյանի, Էդիկ Ստեփանյանին, Ալեքս Սահակյանի ծնողների դիմումի համաձայան նրանց պետք է ազատել 9-րդ դասարանների ավարտական քննություններից, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ տվյալ աշակերտներն ունեն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք, ինչպես նաև հղում կատարեց հանրակրթական ուսումնական հաստատության սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողների փոխադրման, ավարտման և ուսումնական տարվա ընթացքում բացակայած սովորողի՝ հաջորդ դասարան կամ հանրակրթության հաջորդ աստիճան փոխադրման կարգի 9-րդ կետին, որտեղ սահմանվում է, որ ինտելեկտուալ (մտավոր) զարգացման խանգարմամբ պայմանավորված կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողները, ծնողի (նրա օրինական ներկայացուցչի) համաձայնությամբ, կարող են չմասնակցել գիտելիքների ստուգմանը (4-րդ դասարան), ավարտական (9-րդ

դասարան) և պետական ավարտական (12-րդ դասարան) քննություններին: Այդ դեպքում նրանց տրվում է պետական նմուշի ավարտական փաստաթուղթ (հիմնական կրթության վկայական և միջնակարգ կրթության ատեստատ)՝ առանց քննական գնահատականների:

Որոշեցին՝ Համաձայն Հանրակրթական ուսումնական հաստատության սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողների փոխադրման, ավարտման և ուսումնական տարվա ընթացքում բացակայած սովորողի՝ հաջորդ դասարան կամ հանրակրթության հաջորդ աստիճան փոխադրման կարգի՝ առաջարկել ԿԱՊԿՈՒՀ աշակերտներ Արթուր Ալումանյանին, Էդիկ Ստեփանյանին, Ալեքս Սահակյանին ազատել 9-րդ դասարանի ավարտական քննություններից:

Մ/Մ նախագահ՝ _____ Ա. Դաջունց

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ԲՆԱԳԻՏԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №10

«05» մայիսի 2026թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին ՄՄ հետևյալ անդամները՝

1. Անուշ Դաջունց (մ/մ նախագահ)
2. Սիրուշ Բաղդասարյան
3. Արփինե Մարտիրոսյան
4. Ալլա Զեյնալյան
5. Հերմինե Ալավերդյան
6. Օլյա Ղուլյան
7. Արմանուշ Բակունց
8. Հայկ Օհանյան
9. Շահանե Ակլունց
10. Մերի Մկրտչյան
11. Մարետա Հարությունյան
12. Կարինե Արզումանյան
13. Ալեքսանդր Հայրապետյան

Նիստին ներկա էին տնօրենի Ժ/Պ Սերգեյ Ավանեսյանը, տնօրենի տեղակալ Արաքսյա Առստամյանը, ԿԱԴԱՀ Արմիդա Գևորգյանը:

Ո Ր Ա Կ Ա Ր Գ

1. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատում:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

2. Ուսումնական պլանով նախատեսված առարկաներից անհատական առարկայական պլանների և լրացուցիչ դասընթացների ժամանակացույցի քննարկում:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Լսեցին 1. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Ներկայացվեց օրակարգի կետերը:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Հաստատել 2025-2026 ուսումնական տարվա Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 10-րդ արտահերթ նիստի օրակարգը:

Լսեցին 2. Ուսումնական պլանով նախատեսված առարկաներից անհատական առարկայական պլանների և լրացուցիչ դասընթացների ժամանակացույցի քննարկում:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը տեղեկացրեց, որ Ռուսաստանի Դաշնությունից Հայաստան տեղափոխված Մանե և Արթուր Դանիելյանների ծնողի կողմից ներկայացվել է դիմում՝ երեխաների ուսումը Գորիսի Յուրի Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցում շարունակելու վերաբերյալ:

Նշվեց, որ ներկայացված փաստաթղթերի և գործող իրավակարգավորումների ուսումնասիրության արդյունքում՝ հիմք ընդունելով «Դպրոցական տարիքի երեխաներին հանրակրթության մեջ ընդգրկելու, սահմանված ժամկետից ուշ ընդգրկվող երեխաների կրթության կազմակերպման և հանրակրթական

ուսումնական հաստատությունից սովորողին այլ ուսումնական հաստատություն տեղափոխելու և ազատելու կարգի» 21-րդ, 22-րդ, 29-րդ և 30-րդ կետերի պահանջները, սովորողները ենթակա են ընդունման մեկ դասարան ցածր՝ համապատասխանաբար 7-րդ և 8-րդ դասարաններ՝ բնագիտամաթեմատիկական առարկաների ծրագրային պահանջների շրջանակում:

Զեկուցողը ընդգծեց, որ գործընթացի պատշաճ կազմակերպման նպատակով իրականացվել է սովորողների գիտելիքների մակարդակի գնահատում բնագիտական առարկաներից: Այդ նպատակով Մանե և Արթուր Դանիելյանները կատարել են գրավոր աշխատանքներ՝ համապատասխան դասարանների ուսումնական պլանով նախատեսված առարկաներից, որոնց արդյունքները ենթարկվել են մասնագիտական վերլուծության:

Նշվեց նաև, որ գործընթացի հաջորդ փուլը կազմակերպվել է վերոնշյալ կարգի 30-րդ կետի պահանջներին համապատասխան: Մասնագիտական խմբի կողմից ներկայացված գրավոր եզրակացության հիման վրա, որը վերաբերում է սովորողների առարկայական պատրաստվածությանը, կայացվել է որոշում նրանց համապատասխան դասարաններում ընդգրկելու վերաբերյալ:

Զեկուցողը հավելեց, որ անհրաժեշտ է հաստատել ուսումնական պլանով նախատեսված բնագիտամաթեմատիկական և հարակից առարկաների անհատական ուսումնական պլանները, ինչպես նաև լրացուցիչ դասընթացների կազմակերպման ժամանակացույցը: Այդ շրջանակում կիրականացվի նպատակային աջակցող ուսուցում՝ բաց թողնված ծրագրային նյութի արդյունավետ յուրացումն ապահովելու համար: Ընդգծվեց, որ մասնագիտական եզրակացությունը կազմվել է բոլոր առարկաներից իրականացված գրավոր ստուգումների արդյունքների համակողմանի ուսումնասիրության և վերլուծության հիման վրա՝ ապահովելով գործընթացի օբյեկտիվությունը, թափանցիկությունը և գործող կարգի պահանջների լիարժեք կատարումը:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները

Մասնախմբի անդամները քննարկեցին սովորողների կրթության շարունակականության հարցը և դրական կարծիք հայտնեցին ընդունելության կազմակերպման մակարդակից՝ փաստելով, որ այն եղել է օբյեկտիվ, կանոնակարգված ու բաց: Նշվեց, որ աշակերտների գիտելիքների նախնական գնահատումը ու դրան հաջորդած մեթոդական վերլուծությունը թույլ են տվել նախանշել ուսուցման հետագա արդյունավետ ուղիները: Ուսուցիչներն ընդգծեցին անհատական ուսումնական պլանների և հավելյալ դասընթացների կարևորությունը, քանի որ դրանք կօգնեն երեխաներին հաղթահարել ծրագրային տարբերությունները և արագ ինտեգրվել դպրոցական կյանքին: Հատուկ նշվեց, որ ընտանիք-դպրոց կապի ամրապնդումը կնպաստի նոր կրթական միջավայրին սովորողների սահուն հարմարվելուն և ուսումնական հաջողություններին:

Որոշեցին՝

- Հավանության արժանացնել 7-րդ դասարանների համար ուսումնական պլանով նախատեսված առարկաներից կազմված թեմաներից 7-րդ «Գ» դասարանի սովորող Մանե Դանիելյանի համար նախատեսված անհատական առարկայական պլանը (կցվում է էլեկտրոնային տարբերակով) և լրացուցիչ դասընթացների ժամանակացույցը (կցվում է) և ներկայացնել տնօրենին հաստատման:
- Հավանության արժանացնել 8-րդ դասարանների համար ուսումնական պլանով նախատեսված առարկաներից կազմված թեմաներից 8-րդ «Ա» դասարանի սովորող Արթուր Դանիելյանի համար նախատեսված անհատական առարկայական պլանը (կցվում է էլեկտրոնային

տարբերակով) և լրացուցիչ դասընթացների ժամանակացույցը (կցվում է) և ներկայացնել տնօրենին հաստատման:

Մ/Մ նախագահ՝ _____ Ա. Դաջունց

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ԲՆԱԳԻՏԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №11

«29» մայիս 2026թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին ՄՄ հետևյալ անդամները՝

1. Անուշ Դաջունց (մ/մ նախագահ)
2. Սիրուշ Բաղդասարյան
3. Արփինե Մարտիրոսյան
4. Ալլա Զեյնալյան
5. Հերմինե Ալավերդյան
6. Օլյա Ղուլյան
7. Արմանուշ Բակունց
8. Հայկ Օհանյան
9. Շահանե Ակլունց
10. Մերի Մկրտչյան
11. Մարետա Հարությունյան
12. Կարինե Արզումանյան
13. Ալեքսանդր Հայրապետյան

Նիստին ներկա էին տնօրենի Ժ/Պ Սերգեյ Ավանեսյանը, տնօրենի տեղակալ Արաքսյա Առստամյանը, ԿԱԴԱՀ Արմիդա Գևորգյանը:

Ո Ր Ա Կ Ա Ր Գ

1. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատում:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

2. Հաղորդում՝ Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

3. 2025-2026 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ընթացքում իրականացված նախագծային աշխատանքների հաշվետվությունների քննարկում:

(զեկուցողներ՝ Ա. Դաջունց, նախագծային աշխատանքների ղեկավարներ)

4. 2025-2026 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում տնօրենության կողմից տրվող գրավոր աշխատանքների արդյունքների ամփոփում:

(զեկուցող՝ Ա.Առստամյան)

5. 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի (ՈՒԴԱՏՊ) մայիս ամսվա իրականացված աշխատանքներ:

(զեկուցող՝Ա.Գևորգյան)

6. 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում էլեկտրոնային մատենավարության ստուգում:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

7. 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում իրականացված երկարօրյա ուսուցման խմբերի հաշվետվությունների քննարկում:

(զեկուցող՝ Ա. Գևորգյան)

Լսեցին 1. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Հաստատել 2025-2026 ուսումնական տարվա Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 11-րդ նիստի օրակարգը:

Լսեցին 2. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Օրակարգի երկրորդ հարցի շրջանակներում լսեցին Անուշ Դաջունցի զեկուցումը, ով մանրամասն ներկայացրեց նախորդ նիստում ամրագրված որոշումների և հանձնարարականների իրագործման արդյունքները: Զեկուցողն արձանագրեց, որ նախանշված բոլոր կազմակերպչական ու մեթոդական քայլերը կյանքի են կոչվել լիարժեքորեն և սահմանված ժամանակացույցին համապատասխան:

Անուշ Դաջունցն իր խոսքում ընդգծեց, որ որոշումների հետևողական կիրառումն անմիջականորեն նպաստել է կրթական միջավայրի բարելավմանը, ինչն իր հերթին դրական տեղաշարժ է ապահովել սովորողների ընթացիկ առաջադիմության և ուսումնառության որակական ցուցանիշների մեջ:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները

Մասնախմբի մանկավարժները, քննարկելով հնչեցված հաշվետվությունը, գոհունակություն հայտնեցին կատարված աշխատանքի վերաբերյալ և բարձր գնահատեցին ներդրված քայլերի արդյունավետությունն ու նպատակային ուղղվածությունը: Ելույթներում նշվեց, որ կիրառված մոտեցումները նկատելիորեն բարձրացրել են աշակերտների ներգրավվածությունն ու հետաքրքրությունը բնագիտական առարկաների և մաթեմատիկայի դասերին՝ նպաստելով բարդ ուսումնական նյութերի առավել պարզ, մատչելի և ամբողջական յուրացմանը:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին հաղորդումը:

Լսեցին 3. 2025-2026 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ընթացքում իրականացված նախագծային աշխատանքների հաշվետվությունների քննարկման հարցը:

(զեկուցողներ՝ Ա. Դաջունց, նախագծային աշխատանքների ղեկավարներ)

Մեթոդմիավորման նախագահն իր ելույթում ընդգծեց, որ գործնական-նախագծային մեթոդաբանությունը հանդիսանում է բնագիտամաթեմատիկական ուղղության զարգացման հիմնաքարը: Այն առանցքային դեր ունի աշակերտների վերլուծական մտածողության, կարողունակությունների, տվյալների մշակման, խնդիրներ լուծելու հմտությունների ձևավորման գործում: Նիստին ներկայացվեցին ՄՄ անդամների կողմից համակարգված բոլոր աշխատանքները, որոնք իրականացվել էին 7-րդ, 8-րդ և 9-րդ դասարանների («Ա», «Բ», «Գ») սովորողների կողմից՝ «Մաթեմատիկա», «Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն» և «Աշխարհագրություն» առարկաների շրջանակներում:

Զեկուցողը փաստեց, որ աշակերտները ցուցաբերել են հետազոտողին վայել պատասխանատվություն: Նրանք հաջողությամբ տիրապետել են գիտական տեղեկատվության հավաքագրմանը, փորձարարական տվյալների համադրմանն ու սեփական եզրահանգումների փաստարկված ներկայացմանը: Բոլոր թեմաներն ընտրված էին խնամքով՝ համապատասխանեցվելով պետական չափորոշչային պահանջներին, և աչքի էին ընկնում գործնական արդիականությամբ: Առանձնահատուկ ուշադրության արժանացան այն աշխատանքները, որոնք կամրջում էին մի քանի բնագիտական առարկաներ՝ սովորողների մոտ ձևավորելով

միասնական գիտական աշխարհայացք: Ցուցադրված պրոդուկտները եղել են չափազանց տպավորիչ, կիրառական ու բովանդակալից:
Ավարտին նախագծերի ղեկավարները հերթականությամբ պաշտպանեցին իրենց կատարողական հաշվետվությունները: Ակտիվ քննարկման ընթացքում ուսուցիչները վերհանեցին նաև փորձարարական ու տեխնիկական փուլերում հանդիպած բարդությունները և նախանշեցին դրանց հաղթահարման արդյունավետ մեթոդները ապագայի համար:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները:

Նիստի մասնակիցներն առանձնակի ուշադրություն դարձրին նախագծերի նախապատրաստական և կազմակերպչական փուլերին: Ըստ նրանց՝ հենց այս մեկնարկային շրջանում է ձևավորվում սովորողների մոտիվացիան, բացահայտվում են նրանց թաքնված կարողություններն ու թիմում աշխատելու հմտությունները: Ուսուցիչները կիսվեցին գործնական հնարքներով և առաջարկեցին մեթոդական լուծումներ՝ հետագա հետազոտական աշխատանքներն առավել անխոչընդոտ ու կազմակերպված դարձնելու համար: Միահամուռ փաստվեց, որ բնագիտական նախագծերի հաջողությունը կախված է թեմաների արդիականությունից, ինչպես նաև սովորողների տարիքային ու ֆիզիկական հնարավորությունների ճշգրիտ գնահատումից: Խոսքում մատնանշվեց 2025-2026 ուսումնական տարում ի հայտ եկած մարտահրավերները, որոնք կապված էին դպրոցի շենքային պայմանների և լաբորատոր սահմանափակումների հետ: Նա ընդգծեց, որ բնագիտական փորձարարական նախագծերը պահանջում են հետևողական կառավարում և համապատասխան նյութատեխնիկական միջավայր՝ շոշափելի ու տեսանելի վերջնարդյունքներ ստանալու համար: Միևնույն ժամանակ, կարևոր ձեռքբերում համարվեց խմբերի ձևավորման նոր մոտեցումը. այս տարի աշխատանքային թիմերում ընդգրկվել է առավելագույնը 7 աշակերտ: Այս փոփոխությունը թույլ է տվել ուսուցչին ավելի շատ ժամանակ տրամադրել յուրաքանչյուր խմբի համակարգմանը և իրականացնել թիրախային, անհատական խորհրդատվություններ: Ադրադարձ կատարվեց միջառարկայական նախագծերի ներդրմանը՝ այն որակելով որպես արդյունավետ նորարարություն: Նմանատիպ ձևաչափը սովորողներին հնարավորություն է տվել կիրառական հմտություններ զարգացնել տարբեր ճշգրիտ առարկաների հատման կետում: Աշակերտները կատարել են լաբորատոր հետազոտություններ, վիճակագրական տվյալների մշակում ու վերլուծություն, ինչը նպաստել է նրանց մտածողության և ինքնուրույն խնդիրներ լուծելու ունակության հղկմանը: Ելույթ ունեցողները նաև փաստեցին, որ գործնականում (հատկապես փորձարարական փուլում) ամեն ինչ չէ, որ ընթանում է ըստ նախնական ծրագրի: Նման իրավիճակներում առանցքային է դառնում ուսուցչի՝ որպես մենթորի և ուղղորդողի դերը, ով օգնում է սովորողներին հաղթահարել նախագծի ընթացքում ծագած անսպասելի գիտական կամ տեխնիկական խնդիրները:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ընթացքում իրականացված նախագծային աշխատանքների հաշվետվությունները:

Լսեցին 4. 2025-2026 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում տնօրենության կողմից տրվող գրավոր աշխատանքների արդյունքների ամփոփման հարցը:

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Օրակարգի այս հարցի շրջանակներում ելույթ ունեցավ Արաքսյա Առստամյանը՝ ներկայացնելով երկրորդ կիսամյակում տնօրենության հսկողությամբ անցկացված գրավոր աշխատանքների համակողմանի վերլուծությունը: Զեկուցողը փաստեց, որ ստուգումներն իրականացվել են

նախապես սահմանված ժամանակացույցին համապատասխան, և դրանց նպատակն էր գնահատել աշակերտների ընթացիկ գիտելիքների մակարդակն ու պարզել պետական չափորոշչային պահանջների ապահովման աստիճանը: Այս փուլում տնօրենության կողմից ստուգողական աշխատանքներ են հանձնարարվել «Մաթեմատիկա», «Հանրահաշիվ», «Երկրաչափություն» առարկայից: Արաքսյա Առստամյանն իր խոսքում ընդգծեց արձանագրված արդյունքների մանրակրկիտ քննարկման դերն ու նշանակությունը: Նա հատկապես կարևորեց սովորողների՝ ինքնուրույն մտածելու և խնդիրներ լուծելու ունակությունը, ինչպես նաև ուսուցիչների կողմից աշխատանքների օբյեկտիվ գնահատումը, քանի որ անաչառ վերլուծությունը հնարավորություն է տալիս հստակորեն վեր հանել ուսումնական գործընթացում առկա բացթողումներն ու դժվարությունները:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները, Ս. Ավանեսյանը

Միտք հայտնողներն արձանագրեցին, որ բնագիտամաթեմատիկական մտածողության և գրագիտության բարձրացման համար անհրաժեշտ է դասապրոցեսում ներդնել այնպիսի մեթոդական հնարներ, որոնք ոչ միայն կբարձրացնեն դասի արդյունավետությունը, այլև կխթանեն աշակերտների վերլուծական ու առանց կողմնակի աջակցության աշխատելու կարողությունների զարգացումը: Սերգեյ Ավանեսյանն իր հերթին շեշտեց, որ այս ուղղությամբ աշխատանքները պետք է կրեն շարունակական բնույթ ողջ տարվա ընթացքում: Նա կարևորեց տարաբնույթ առաջադրանքների միջոցով աշակերտների հաշվողական հմտությունների, տրամաբանության զարգացումն ու թեստային աշխատանքներին վարժվելու պատրաստակամությունը:

Որոշեցին՝ Ի գիտություն ընդունել 2025-2026 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում տնօրենության կողմից «Մաթեմատիկա», «Հանրահաշիվ», «Երկրաչափություն» առարկաներից տրված գրավոր աշխատանքների արդյունքների ամփոփիչ վերլուծությունը (կցվում է):

Լսեցին 5. 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի (ՈՒԴԱՏՊ) մայիս ամսվա իրականացված աշխատանքների մասին հարցը:

(զեկուցող՝Ա. Գևորգյան)

Օրակարգի հերթական հարցի շրջանակներում լսեցին Արմիդա Գևորգյանի հաղորդումը, ով ներկայացրեց 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների պլանով նախատեսված՝ մայիս ամսվա կատարողական հաշվետվությունը: Զեկուցողն արձանագրեց, որ ամսվա ընթացքում նախանշված բոլոր ուսումնական գործընթացները հաջողությամբ իրագործվել են, ենթարկվել ստուգման և ամփոփվել սահմանված կարգով: Հաշվետու ժամանակահատվածում բնագիտամաթեմատիկական մեթոդական միավորման կողմից իրականացվել են հետևյալ աշխատանքները.

Ուսումնական ծրագրերի կատարողականի ստուգում. իրականացվել է առարկայական թեմատիկ պլանների կատարողականի վերջնական վերահսկում և ժամանակացույցի համապատասխանության ապահովում:

Գիտելիքների ընթացիկ ստուգում. կազմակերպվել և անցկացվել են տնօրենության հսկողական գրավոր աշխատանքներ, ինչպես նաև կիսամյակային ամփոփիչ ստուգումներ՝ հստակեցնելու սովորողների ուսումնառության արդյունքները:

Մեթոդական դիտարկումներ. իրականացվել է փոխադարձ դասալսումների և դասերի ընթացքի մոնիտորինգ՝ ուղղված դասավանդման որակի բարձրացմանը:

Առաջադիմության և հաճախումների հսկողություն. հատուկ ուշադրության կենտրոնում է պահվել աշակերտների ուսումնական առաջընթացի դինամիկան և դասերից բացակայությունների վերահսկումը:
Քննական փուլի նախապատրաստություն. լիարժեքորեն ամփոփվել և ավարտին են հասցվել փոխադրական և ավարտական քննությունների կազմակերպչական ու կառուցվածքային նախապատրաստական աշխատանքները:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները

Ելույթ ունեցողներն արժևորեցին հաշվետու ամսում կատարված ծավալուն աշխատանքը՝ ընդգծելով, որ նշված բոլոր դրույթների հետևողական կիրառումը անմիջականորեն նպաստում է կրթական ու դաստիարակչական միջավայրի արդյունավետության բարձրացմանը, ինչպես նաև հիմք է ստեղծում ուսումնական տարին հաջողությամբ եզրափակելու համար:

Որոշեցին՝ Ի գիտություն ընդունել 2025-2026 ուսումնական տարվա ՈւԴԱՏՊ-ով նախատեսված՝ բնագիտամաթեմատիկական մասնախմբի մայիս ամսվա կատարած աշխատանքների հաշվետվությունը և այն գնահատել բավարար:

Լսեցին 6. 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում էլեկտրոնային մատենավարության ստուգման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Օրակարգի հերթական հարցի շուրջ զեկուցմամբ հանդես եկավ բնագիտամաթեմատիկական մեթոդմիավորման նախագահ Անուշ Դաջունցը: Նա ներկայացրեց 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում էլեկտրոնային դասամատյանների վարման որակի և հայտնաբերված բացթողումների մանրամասն վերլուծությունը: Զեկուցողը գոհունակությամբ նշեց, որ մասնախմբի ուսուցիչների կողմից հիմնական գրանցումները, թեմատիկ պլանավորման համապատասխանությունն ու սովորողների գնահատումը կատարվել են ժամանակին և սահմանված պահանջներին պատշաճ: Մասնավորապես, բնագիտամաթեմատիկական առարկաների շրջանակներում իրականացված նախագծային աշխատանքների թեմաներն ու դրանց արդյունքների հաշվառումը ևս մատյաններում արտացոլվել են ըստ գործող կարգի: Ամփոփելով ստուգման արդյունքները՝ փաստվեց, որ կիսամյակային և տարեկան կտրվածքով արձանագրվող վրիպակներն ու թերություններն էապես նվազել են՝ արձանագրելով դրական դինամիկա առաջին կիսամյակի համեմատությամբ:

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը, Ա. Առստամյանը:

Ելույթ ունեցողները շեշտադրեցին, որ թվային հարթակում ճշգրիտ և հետևողական մատենավարումը յուրաքանչյուր մանկավարժի անհատական պատասխանատվության և մասնագիտական պարտաճանաչության արդյունքն է: Նրանք նշեցին, որ չնայած գրանցված դրական տեղաշարժին՝ ընթացիկ վերահսկողության ժամանակ դեռևս նկատվում են որոշակի անհամապատասխանություններ: Ուստի կարևոր համարվեց ամենօրյա աշխատանքի նկատմամբ մշտադիտարկման ուժեղացումը, որպեսզի ծագող խնդիրները վաղ փուլում հայտնաբերվեն, քննարկվեն և անհապաղ շտկվեն՝ բացառելով դրանց կրկնությունը հետագայում:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում էլեկտրոնային մատենավարության ստուգման մասին զեկուցումը:

Լսեցին 7. 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում իրականացված երկարօրյա ուսուցման խմբերի հաշվետվությունների քննարկման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Գևորգյան)

Զեկուցողը նշեց, որ 2025-2026 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացքում՝ հոկտեմբերից դեկտեմբեր ամիսներին, կազմակերպվել է երկարօրյա ուսուցման խմբակ 2-4-րդ և 5-րդ, 7-րդ դասարանների աշակերտների համար։ Աշակերտների ընդգրկումը երկարօրյա խմբերում իրականացվել է Հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում երկարօրյա ուսուցման կազմակերպման կարգի 16-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերի հիման վրա։ Ըստ սահմանված կարգի՝ 2-4-րդ, 5-րդ, 7-րդ դասարաններից ընդգրկվել են այն աշակերտները, որոնք առաջադիմության բնութագրող գնահատման, ձևավորող և ամփոփիչ գնահատման հիման վրա, ինչպես նաև ուսուցիչների դիտարկման արդյունքում ցուցաբերել են ցածր արդյունքներ։

Զեկուցողը հավելեց, որ իր կողմից պարբերաբար իրականացվել են ընթացիկ դիտարկումներ, և արձանագրված աշխատանքների արդյունքները գնահատվում են գոհացուցիչ։

Բացի այդ, զեկուցողը ներկայացրեց նաև 2025-2026 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում՝ փետրվարից մայիս ամիսներին, իրականացված աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն՝ ընդգծելով դասապրոցեսի պատշաճ կազմակերպման, արդյունավետ անցկացման և արդյունքների կարևորությունը։ Կարևորվեց նաև երկարօրյա ուսուցման խմբերի ուսուցիչների կողմից ներկայացված հաշվետվությունների դերը, որոնց շնորհիվ ամփոփվեցին իրականացված աշխատանքներն ու արձանագրված արդյունքները ողջ ուսումնական տարվա ընթացքում։

Ներկայացվեց, որ ուսումնական տարվա ավարտին ԿԶՆԱԿ-ի կողմից իրականացվել է երկարօրյա խմբակի կազմակերպման և իրականացման գործընթացի վերահսկողություն, ուսումնասիրվել են կիրառվող փաստաթղթերը, հրամանները։ Արդյունքները գոհացուցիչ էին, իրականացված աշխատանքները՝ ըստ չափորոշչային պահանջների (կցվում է 2025-2026 ուսումնական տարվա երկարօրյա ուսուցման կազմակերպման աշակերտների անվանացանկը (հոկտեմբեր-մայիս))։

Արտահայտվեցին՝ Երկարօրյա ուսուցման խմբերի ուսուցիչները

Երկարօրյա ուսուցման խմբերի ուսուցիչները հանգամանալից ներկայացրին 2025–2026 ուսումնական տարվա ընթացքում իրականացված աշխատանքների հաշվետվությունները՝ անդրադառնալով խմբակների գործունեության հիմնական ուղղություններին, իրականացված ծրագրերին և գրանցված արդյունքներին։ Նրանք ներկայացրին սովորողների մասնակցության ակտիվությունը, ձեռքբերումները, արձանագրված առաջընթացը, ինչպես նաև ուսուցման գործընթացում կիրառված մեթոդներն ու արդյունավետ աշխատանքային փորձը։

Երկարօրյա ուսուցման խմբերի ուսուցիչները ներկայացրին գործունեության ընթացքում ի հայտ եկած կազմակերպչական և կրթական բնույթի որոշ դժվարություններ՝ նշելով դրանց հաղթահարման ուղղությամբ իրականացված քայլերը և հետագա աշխատանքների բարելավման հնարավորությունները։ Ընդգծվեց, որ երկարօրյա ուսուցման խմբերի գործունեությունը նպաստել է սովորողների գիտելիքների ամրապնդմանը, ստեղծագործական, ճանաչողական և սոցիալական կարողությունների զարգացմանը, ինչպես նաև նրանց ազատ ժամանակի արդյունավետ և նպատակային կազմակերպմանը։

Ամփոփելով՝ խմբերի ուսուցիչները փաստեցին, որ իրականացված աշխատանքներն ընդհանուր առմամբ եղել են արդյունավետ, ապահովել են նախատեսված նպատակների իրականացումը և դրական ազդեցություն ունեցել սովորողների կրթական ու անձնային զարգացման վրա։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում իրականացված երկարօրյա ուսուցման խմբերի ուսուցիչների հաշվետվությունները և ներկայացնել տնօրենին՝ հաստատման (կցվում է էլեկտրոնային տարբերակով)։

Մ/Մ նախագահ՝ _____ Ա. Դաջունց

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ԲՆԱԳԻՏԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №12

«26» հունիս 2026թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին ՄՄ հետևյալ անդամները՝

1. Անուշ Դաջունց (մ/մ նախագահ)
2. Սիրուշ Բաղդասարյան
3. Արփինե Մարտիրոսյան
4. Ալլա Զեյնալյան
5. Հերմինե Ալավերդյան
6. Օլյա Ղուլյան
7. Արմանուշ Բակունց
8. Հայկ Օհանյան
9. Շահանե Ակլունց
10. Մերի Մկրտչյան
11. Մարետա Հարությունյան
12. Կարինե Արզումանյան
13. Ալեքսանդր Հայրապետյան

Նիստին ներկա էր տնօրեն՝ Սերգեյ Ավանեսյանը, ԿԱԴԱՀ Արմիդա Գևորգյանը, ուսուցչի օգնական՝ Արփինե Ծատրյանը, հումանիտար ուղղվածությամբ խմբակների ղեկավարներ, տնօրենի տեղակալ Արաքսյա Առստամյանը:

Ո Ր Ա Կ Ա Ր Գ

1. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատում:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

2. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին զեկուցում:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

3. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման մասնախմբի քննությունների արդյունքների ամփոփում:

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

4. 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի (ՈՒԴԱՏՊ) հաշվետվությունների քննարկում:

(զեկուցող՝ Ա. Գևորգյան)

5. «Ծրագրերի կատարողականի ստուգում ըստ թեմատիկ պլանի» ՆԴՎ արդյունքների ամփոփում:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

6. 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում իրականացված միջոցառումների, բաց դասերի, բաց դաս-միջոցառումների կատարողականի քննարկում:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

7. 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում իրականացված դասալսումների ամփոփում:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

8. Հանրակրթության ոլորտում ընդունված իրավական նոր կարգավորումները և փոփոխությունները:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

9. ԱՈՒՊ-ներով և դիտարկման թերթիկներով իրականացված աշխատանքների ամփոփում:

(զեկուցող՝ Ա. Ծատրյան)

10. 2026-2027 ուսումնական տարվա ուսումնական պլանով սահմանված դասաժամերի նախնական բաշխում և առաջարկություն դպրոցի տնօրենին:
(զեկուցողներ՝ Ա. Դաջունց)
11. 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում իրականացված արտադասարանական խմբակների կատարողականների քննարկում:
(զեկուցող՝ Ա. Գևորգյան, խմբավարներ)
12. 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում իրականացված աշխատանքների հաշվետվությունների քննարկում:
(զեկուցող՝ ՄՄ անդամներ)
13. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդական միավորման անվան փոփոխություն:
(զեկուցող՝ Ա. Դաջունց)
14. «ԹԳՀԳ» առարկայի դասաժամերի ընթացքում դասարանների խմբերի բաժանում:
(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Լսեցին 1. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատման մասին հարցը:
(զեկուցող՝ Ա. Դաջունց)
Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Հաստատել 2025-2026 ուսումնական տարվա Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 12-րդ նիստի օրակարգը:

Լսեցին 2. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին հարցը:
(զեկուցող՝ Ա. Դաջունց)
Օրակարգի առաջին հարցի շրջանակներում լսեցին Անուշ Դաջունցի զեկուցումը, ով մանրամասն ներկայացրեց նախորդ նիստում ամրագրված որոշումների և հանձնարարականների իրագործման արդյունքները: Զեկուցողն արձանագրեց, որ նախանշված բոլոր կազմակերպչական ու մեթոդական քայլերը կյանքի են կոչվել լիարժեքորեն և սահմանված ժամանակացույցին համապատասխան:
Անուշ Դաջունցն իր խոսքում ընդգծեց, որ որոշումների հետևողական կիրառումն անմիջականորեն նպաստել է կրթական միջավայրի բարելավմանը, ինչն իր հերթին դրական տեղաշարժ է ապահովել սովորողների ընթացիկ առաջադիմության և ուսումնառության որակական ցուցանիշների մեջ:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները
Մասնախմբի մանկավարժները, քննարկելով հնչեցված հաշվետվությունը, գոհունակություն հայտնեցին կատարված աշխատանքի վերաբերյալ և բարձր գնահատեցին ներդրված քայլերի արդյունավետությունն ու նպատակային ուղղվածությունը: Ելույթներում նշվեց, որ կիրառված մոտեցումները նկատելիորեն բարձրացրել են աշակերտների ներգրավվածությունն ու հետաքրքրությունը բնագիտական առարկաների և մաթեմատիկայի դասերին՝ նպաստելով բարդ ուսումնական նյութերի առավել պարզ, մատչելի և ամբողջական յուրացմանը:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին հաղորդումը:

Լսեցին 3. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման մասնախմբի քննությունների արդյունքների ամփոփման մասին հարցը:
(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Լսեցին հաղորդումը՝ 2025-2026 ուսումնական տարվա քննությունների արդյունքների վերաբերյալ: Զեկուցողը նշեց, որ «Մաթեմատիկա» և «Աշխարհագրություն» առարկաներից արձանագրված քննական արդյունքները գոհացուցիչ են, և աշակերտները ցուցաբերել են պատշաճ պատրաստվածություն: Ելնելով դպրոցի պայմաններից և առկա հնարավորություններից՝ 2025-2026 ուսումնական տարում բնագիտական առարկաների քննությունը կազմակերպվել և անցկացվել է «Աշխարհագրություն» առարկայից:

Արտահայտվեցին՝ Ա. Զեյնալյան, Ա. Մարտիրոսյան, Ս. Բաղդասարյան, Հ. Ալավերդյան

Արտահայտվողներն իրենց ելույթներում վերլուծեցին սովորողների ցուցաբերած արդյունքները՝ անդրադառնալով քննական առաջադրանքների բովանդակությանը, կառուցվածքին և գնահատման չափանիշներին: Նրանք առանձնացրին ինչպես սովորողների կողմից հաջողությամբ յուրացված թեմաները, այնպես էլ այն ուսումնանյութը, որը լրացուցիչ ամրապնդման և նպատակային կրկնության անհրաժեշտություն է ունեցել ուսումնական տարվա ընթացքում:

Ելույթ ունեցողներն ընդգծեցին, որ ուսուցիչների հետևողական աշխատանքի, սովորողների պատասխանատու վերաբերմունքի և ծնողների հետ արդյունավետ համագործակցության շնորհիվ հնարավոր է եղել ապահովել սովորողների բավարար պատրաստվածությունը պետական ավարտական քննություններին: Նշվեց, որ, չնայած առանձին դժվարություններին և քննական առաջադրանքների բարդության աստիճանին, սովորողների գերակշիռ մասը հաղթահարել է քննական շեմը և արձանագրել գոհացուցիչ ու սպասված արդյունքներ:

Միաժամանակ առաջարկվեց շարունակել առարկայական գիտելիքների համակարգված ամրապնդմանն ուղղված աշխատանքները, առավել մեծ ուշադրություն դարձնել գործնական և վերլուծական կարողությունների զարգացմանը, ինչպես նաև ուսումնական գործընթացում կիրառել այնպիսի մեթոդներ, որոնք կնպաստեն պետական ավարտական քննությունների արդյունքների շարունակական բարելավմանը:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 9-րդ դասարանների ավարտական քննությունների արդյունքների մասին տեղեկատվությունը (կցվում է ամփոփագիրը):

Լսեցին 4 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի (ՈւԴԱՏՊ) հաշվետվությունների քննարկման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Գևորգյան)

Զեկուցողը ներկայացրեց 2025–2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանով (ՈւԴԱՏՊ) իրականացված աշխատանքների հաշվետվությունը՝ ամփոփ ներկայացնելով ուսումնական տարվա ընթացքում կատարված գործունեության հիմնական ուղղությունները, ձեռքբերումներն ու արդյունքները:

Նշվեց, որ հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են տարեկան պլանով նախատեսված ուսումնադաստիարակչական միջոցառումները, առարկայական և դաստիարակչական նախաձեռնությունները, բաց դասերը, առարկայական շաբաթները, նախագծային աշխատանքները, հայրենասիրական, մշակութային, մարզական, բնապահպանական և ճանաչողական միջոցառումները: Կազմակերպվել են նաև տարաբնույթ մրցույթներ, հանդիպումներ, արշավներ, կրթական այցելություններ և այլ նախաձեռնություններ, որոնք նպաստել են սովորողների բազմակողմանի զարգացմանը և դպրոցական կյանքի ակտիվացմանը:

Զեկուցողը նշեց, որ առանձնահատուկ ուշադրություն է դարձվել սովորողների արժեհամակարգի ձևավորմանը, քաղաքացիական և հայրենասիրական դաստիարակությանը, ազգային և համամարդկային արժեքների պահպանմանը, ինչպես նաև առողջ ապրելակերպի, բնապահպանական մտածողության և անվտանգության մշակույթի ձևավորմանը: Իրականացվել են նաև նպատակային աշխատանքներ սովորողների ուսումնական առաջադիմության բարձրացման, ստեղծագործական և հետազոտական կարողությունների զարգացման, նախաձեռնողականության, ինքնուրույնության և կրթական գործընթացում ակտիվ մասնակցության խթանման ուղղությամբ:

Ընդգծվեց, որ տարեկան պլանով նախատեսված միջոցառումների գերակշիռ մասն իրականացվել է սահմանված ժամկետներում և արդյունավետ համագործակցության պայմաններում՝ դպրոցի վարչակազմի, մանկավարժական անձնակազմի, դասղեկների, աշակերտական և ծնողական խորհուրդների, ինչպես նաև գործընկեր կազմակերպությունների մասնակցությամբ: Իրականացված աշխատանքներն ընդհանուր առմամբ ապահովել են ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետ կազմակերպումը և նպաստել դպրոցի կրթական միջավայրի շարունակական զարգացմանը:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները

Արտահայտվողներն իրենց ելույթներում բարձր գնահատեցին 2025–2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանով նախատեսված միջոցառումների իրականացումը՝ նշելով, որ տարվա ընթացքում կազմակերպված աշխատանքներն ունեցել են նպատակային, համակարգված և արդյունավետ բնույթ:

Նրանք ընդգծեցին, որ իրականացված առարկայական, դաստիարակչական, մշակութային, հայրենասիրական, ճանաչողական և մարզական միջոցառումները նպաստել են սովորողների բազմակողմանի զարգացմանը, արժեհամակարգի ձևավորմանը, ստեղծագործական և հետազոտական կարողությունների բացահայտմանը, ինչպես նաև կրթական գործընթացում նրանց ակտիվ ներգրավվածության ապահովմանը:

Արտահայտվողները կարևորեցին ուսուցիչների, դասղեկների, աշակերտական և ծնողական խորհուրդների, ինչպես նաև գործընկեր կառույցների միջև ձևավորված արդյունավետ համագործակցությունը՝ նշելով, որ համատեղ և հետևողական աշխատանքի շնորհիվ հնարավոր է եղել լիարժեք իրականացնել տարեկան պլանով նախատեսված միջոցառումների գերակշիռ մասը և ապահովել դրանց բարձր արդյունավետությունը:

Միաժամանակ նշվեց, որ հաջորդ ուսումնական տարում նպատակահարմար է շարունակել և ընդլայնել նախագծային ուսուցման, սովորողակենտրոն նախաձեռնությունների, կրթական այցելությունների և համայնքային համագործակցության շրջանակները՝ առավել ակտիվ ներգրավելով սովորողներին դպրոցական կյանքի կազմակերպման և տարբեր ծրագրերի իրականացման գործընթացներում:

Ամփոփելով՝ արտահայտվողները փաստեցին, որ ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի իրականացումը կարելի է գնահատել արդյունավետ, քանի որ այն նպաստել է դպրոցի կրթադաստիարակչական միջավայրի հարստացմանը, սովորողների գիտելիքների, կարողությունների և արժեքային համակարգի զարգացմանը, ինչպես նաև դպրոցի առջև դրված կրթական և դաստիարակչական նպատակների իրագործմանը:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա ՈւԴԱՏՊ աշխատանքների հաշվետվությունները, կատարված աշխատանքների արդյունքները (կցվում է էլեկտրոնային տարբերակով):

Լսեցին 5. «Ծրագրերի կատարողականի ստուգում ըստ թեմատիկ պլանի» ՆԴՎ արդյունքների մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Լսեցին մեթոդմիավորման նախագահ Անուշ Դաջունցի հաղորդումը՝ 5-9-րդ դասարաններում իրականացված ներդպրոցական վերահսկողության (ՆԴՎ) արդյունքների մասին: Զեկուցողը ներկայացրեց էլեկտրոնային մատյանների վարման, ինչպես նաև ուսումնական ծրագրերով նախատեսված գրավոր, գործնական և լաբորատոր աշխատանքների կատարողականի ստուգման արդյունքները. Փաստվեց, որ 5-9-րդ դասարաններում դասավանդող ուսուցիչների կողմից մատենավարությունը հիմնականում իրականացվում է սահմանված կարգին համապատասխան: Թեմաները, բացակայություններն ու գնահատականները գրանցվում են ժամանակին: Ըստ առարկայական ծրագրերի՝ նախատեսված թեմատիկ գրավոր և գործնական աշխատանքները կատարվել են ըստ ժամանակացույցի: Կատարված աշխատանքները հիմնականում համապատասխանում են չափորոշչային պահանջներին, սակայն անհրաժեշտ է ավելի մեծ ուշադրություն դարձնել սովորողների կողմից թույլ տրված սխալների վերլուծությանը (սխալների ուղղման աշխատանքներին):

Լաբորատոր աշխատանքների իրականացման հետ կապված արձանագրվեց, որ բնություն, ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն և աշխարհագրություն առարկաներից լաբորատոր ու փորձարարական աշխատանքները կատարվել են հնարավորության սահմաններում՝ դպրոցի նյութատեխնիկական բազայի և առկա պայմաններին համապատասխան: Կարևորվեց աշակերտների կողմից լաբորատոր տետրերի կանոնավոր վարումը:

Արտահայտվեցին՝ Մասնախմբի ուսուցիչները:

Քննարկման ընթացքում արձանագրվեց, որ ուսուցիչների գերակշիռ մասը ուսումնական գործընթացը կազմակերպել է հաստատված թեմատիկ պլաններին համապատասխան՝ պահպանելով ուսումնական ծրագրերի պահանջները: Նշվեց, որ դասամատյաններում հիմնականում պահպանվել են թեմաների տրամաբանական հերթականությունը, նախատեսված ժամաքանակները, գնահատման ձևերն ու ուսումնական գործընթացի պատշաճ փաստաթղթավորումը:

Մեթոդական միավորման նախագահ Արաքսյա Առստամյանը նշեց, որ առանձին դեպքերում արձանագրվել են թեմաների ուսուցման ժամկետների որոշակի շեղումներ, որոնք պայմանավորված են եղել դասաժամերի կորստով, ոչ աշխատանքային օրերով, ինչպես նաև սովորողների կողմից առանձին թեմաների առավել խորքային ուսումնասիրման և լրացուցիչ ամրապնդման անհրաժեշտությամբ: Նա ընդգծեց, որ նման փոփոխությունները բոլոր դեպքերում ժամանակին և ամբողջությամբ չեն արտացոլվել թեմատիկ պլաններում և էլեկտրոնային դասամատյաններում, ինչը հետագայում կարող է դժվարություններ առաջացնել ուսումնական գործընթացի վերահսկողության և փաստաթղթերի համապատասխանության ապահովման տեսանկյունից:

Քննարկման ընթացքում անդրադարձ կատարվեց նաև գնահատման գործընթացին: Նշվեց, որ ուսուցիչների մեծ մասը գրավոր, բանավոր և գործնական աշխատանքների արդյունքները սահմանված ժամկետներում մուտքագրել է էլեկտրոնային դասամատյան, պահպանել գնահատման գործող կարգի պահանջները և ապահովել սովորողների առաջադիմության

շարունակական գնահատումը: Միաժամանակ արձանագրվեց, որ առանձին դեպքերում թեմատիկ պլաններում կատարված փոփոխությունների վերաբերյալ համապատասխան նշումները բացակայել են կամ կատարվել են ուշացումով:

Ամփոփելով՝ մեթոդական միավորման անդամները կարևորեցին թեմատիկ պլանների, էլեկտրոնային դասամատյանների և փաստացի իրականացված դասավանդման միջև լիարժեք համապատասխանության ապահովումը՝ այն դիտարկելով որպես ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպման, ներքին վերահսկողության բարձրացման և մանկավարժական փաստաթղթերի պատշաճ վարման կարևոր նախապայման: Ընդգծվեց նաև, որ անհրաժեշտ է հետևողականորեն ապահովել թեմատիկ պլաններում կատարվող բոլոր փոփոխությունների ժամանակին արձանագրումը և էլեկտրոնային դասամատյաններում դրանց ամբողջական արտացոլումը:

Որոշեցին՝ 1.Արձանագրել, որ «Ծրագրերի կատարողականի ստուգում ըստ թեմատիկ պլանի» ներդպրոցական վերահսկողության արդյունքներով ուսուցիչների մեծ մասը ուսումնական գործընթացը կազմակերպել է հաստատված թեմատիկ պլաններին համապատասխան:

2.Հանձնարարել ուսուցիչներին թեմատիկ պլաններում կատարված ցանկացած փոփոխություն և շեղում ժամանակին արձանագրել էլեկտրոնային մատյաններում և համապատասխան փաստաթղթերում:

3.Հանձնարարել մասնախմբի ղեկավարներին յուրաքանչյուր ամսվա ավարտին իրականացնել թեմատիկ պլանների և դասամատյանների համապատասխանության ընթացիկ վերահսկողություն:

4.Ուսումնասիրության արդյունքները համարել բավարար և ներկայացնել դպրոցի տնօրենի հաստատմանը:

Լսեցին 6. 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում իրականացված միջոցառումների, բաց դասերի, բաց դաս-միջոցառումների կատարողականի քննարկման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը ներկայացրեց 2025–2026 ուսումնական տարվա ընթացքում բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդական միավորման ուսուցիչների կողմից կազմակերպված բաց դասերի, բաց դաս-միջոցառումների և այլ մեթոդական նախաձեռնությունների կատարողականի ամփոփ հաշվետվությունը:

Նշվեց, որ ուսումնական տարվա ընթացքում նախատեսված բաց դասերի և բաց դաս-միջոցառումների կատարողականն ամբողջությամբ չի ապահովվել: Զեկուցողը փաստեց, որ դրա հիմնական պատճառներն եղել են դպրոցի շենքային պայմանները և երկհերթ ուսուցման կազմակերպումը, որոնք էապես սահմանափակել են միջոցառումների պլանավորման և իրականացման հնարավորությունները, ինչպես նաև ուսուցիչների և սովորողների ժամանակային արդյունավետ կազմակերպումը:

Միաժամանակ ընդգծվեց, որ իրականացված բաց դասերն ու բաց դաս-միջոցառումները կազմակերպվել են բարձր պատասխանատվությամբ և ունեցել են հստակ կրթական ու դաստիարակչական նպատակներ: Դրանք նպաստել են սովորողների գիտելիքների խորացմանը, քննադատական, ստեղծագործական և հաղորդակցական կարողությունների զարգացմանը, ազգային և համամարդկային արժեքների ձևավորմանը, լեզվամտածողության, ինքնուրույն աշխատանքի և համագործակցային հմտությունների կատարելագործմանը:

Զեկուցողը կարևորեց նաև բաց դասերի դերը մանկավարժական փորձի փոխանակման, արդյունավետ դասավանդման մեթոդների տարածման, ուսուցիչների մասնագիտական զարգացման և փոխադարձ համագործակցության ամրապնդման գործում: Նշվեց, որ անցկացված բաց դասերի ընթացքում կիրառվել են ժամանակակից մանկավարժական մեթոդներ, տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներ, սովորողակենտրոն ուսուցման ձևեր և գնահատման բազմազան գործիքներ:

Ամփոփելով՝ զեկուցողը նշեց, որ, չնայած առկա օբյեկտիվ դժվարություններին, իրականացված աշխատանքներն ունեցել են դրական ազդեցություն ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացման վրա: Միաժամանակ առաջարկվեց հաջորդ ուսումնական տարում, պայմանների բարելավման դեպքում, ապահովել բաց դասերի և բաց դաս-միջոցառումների տարեկան պլանի առավել լիարժեք իրականացումը՝ խթանելով մեթոդական փորձի փոխանակումն ու ուսուցիչների մասնագիտական շարունակական զարգացումը:

Արտահայտվեցին՝ Օլ. Ղուլյանը, Ս. Բաղդասարյանը:

Օլյա Ղուլյանն իր ելույթում ընդգծեց, որ, չնայած ուսումնական տարվա ընթացքում առկա կազմակերպչական դժվարություններին, իրականացված բաց դասերն ու բաց դաս-միջոցառումները կազմակերպվել են ժամանակակից մանկավարժական պահանջներին համապատասխան: Նրա խոսքով՝ դասերի ընթացքում կիրառվել են ակտիվ, համագործակցային և սովորողակենտրոն ուսուցման մեթոդներ, տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներ, ինչպես նաև բազմազան գնահատման գործիքներ, որոնք նպաստել են սովորողների ճանաչողական ակտիվության, ինքնուրույն մտածողության և հաղորդակցական կարողությունների զարգացմանը: Նա կարևորեց բաց դասերի դերը մանկավարժական փորձի փոխանակման, ուսուցիչների մասնագիտական աճի և դասավանդման արդյունավետության բարձրացման գործում:

Սիրուշ Բաղդասարյանն իր ելույթում նշեց, որ բաց դասերը և բաց դաս-միջոցառումները կարևոր հարթակ են մանկավարժների մասնագիտական համագործակցության, արդյունավետ փորձի տարածման և կրթական գործընթացի շարունակական կատարելագործման համար: Նա ընդգծեց, որ նման նախաձեռնությունները հնարավորություն են տալիս վերլուծելու կիրառվող մեթոդները, գնահատելու դրանց արդյունավետությունը և ներդնելու նորարարական մոտեցումներ ուսուցման գործընթացում: Սիրուշ Բաղդասարյանը կարևորեց նաև սովորողների ինքնագնահատման և փոխադարձ գնահատման գործընթացների կիրառումը՝ նշելով, որ դրանք նպաստում են սովորողների պատասխանատվության, ինքնավերլուծության, համագործակցային մշակույթի և սովորելու նկատմամբ գիտակցված վերաբերմունքի ձևավորմանը:

Արտահայտվողները միաձայն կարևորեցին հաջորդ ուսումնական տարում բաց դասերի և բաց դաս-միջոցառումների առավել լայն կազմակերպումը՝ ընդգծելով, որ դրանք հանդիսանում են ուսուցիչների մասնագիտական զարգացման, մեթոդական փորձի տարածման և կրթության որակի շարունակական բարձրացման արդյունավետ միջոց:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում իրականացված միջոցառումների, բաց դասերի, բաց դաս-միջոցառումների մասին զեկուցումը:

Լսեցին 7. 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում իրականացված դասալսումների ամփոփման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Լսեցին բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախագահ Անուշ Դաջունցի հաղորդումը՝ 1-ին և 2-րդ կիսամյակների ընթացքում մասնախմբի անդամների մոտ իրականացված դասալսումների, փոխադարձ դասալսումների և նպատակային դիտարկումների վերաբերյալ:
Զեկուցողն իր ելույթում ամփոփեց ուսումնական տարվա ընթացքում կատարված դասալսումների հիմնական միտումները, արձանագրված հաջողություններն ու բարելավման ենթակա կողմերը.
Դասալսումների նպատակայնությունը. ուսումնական տարվա ընթացքում դասալսումներն իրականացվել են ըստ պլանավորված ժամանակացույցի և ունեցել են տարբեր նպատակներ՝ նոր չափորոշչի ներդրման ընթացքի դիտարկում, երիտասարդ մասնագետների մեթոդական աջակցություն, ՏՀՏ գործիքների կիրառում բնագիտական դասերին և աշակերտակենտրոն ուսուցման ապահովում:
Արձանագրված դրական կողմերը. դիտարկումները ցույց են տվել, որ ուսուցիչների մեծ մասը տիրապետում է ժամանակակից մեթոդներին, դասապրոցեսում ապահովում է միջառարկայական կապեր, արդյունավետորեն կիրառում է խմբային և համագործակցային աշխատանքի ձևերը: Դասալսումների ընթացքում առանձնակի ուշադրություն է դարձվել նաև ձևավորող գնահատման գործիքակազմին:
Բարելավման ենթակա խնդիրներ. որպես ընդհանրական թերություն՝ զեկուցողը նշեց դասի փուլերի ժամանակի ոչ ճիշտ բաշխումը (հատկապես դասի ամփոփման և անդրադարձի փուլերում), ինչպես նաև որոշ դասարաններում աշակերտների ոչ համաչափ ներգրավվածությունը դասապրոցեսին:

Արտահայտվեցին՝ Մասնախմբի անդամները
Արտահայտվողներն անդրադարձան իրականացված փոխադարձ դասալսումներին: Նրանք նշեցին, որ գործընկերների դասերին ներկա գտնվելը մեծապես նպաստել է առաջավոր փորձի փոխանակմանը, մեթոդական զինանոցի հարստացմանն ու սեփական բացթողումների վերագնահատմանը: Ուսուցիչները կարևորեցին նաև դասալսումից հետո կատարվող կառուցողական քննարկումներն ու վերլուծությունները:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում իրականացված դասալսումների արդյունքների ամփոփման մասին զեկուցումը (կցվում է ամփոփագիրը):

Լսեցին 8. Հանրակրթության ոլորտում ընդունված իրավական նոր կարգավորումների և փոփոխությունների մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը ներկայացրեց 2026–2027 ուսումնական տարվա նախապատրաստական աշխատանքների հիմնական ուղղությունները՝ անդրադառնալով հանրակրթության ոլորտում կատարված օրենսդրական փոփոխություններին և Հանրակրթության պետական նոր չափորոշչի (ՀՊՉ) շրջանակում սահմանված նոր կարգավորումներին:
Նշվեց, որ 2026–2027 ուսումնական տարվա կազմակերպումը պետք է իրականացվի գործող իրավական ակտերի և հանրակրթության ոլորտում իրականացվող բարեփոխումների պահանջներին լիարժեք համապատասխան՝ ապահովելով կրթական գործընթացի արդյունավետ, շարունակական և որակյալ կազմակերպումը:
Զեկուցողը մանրամասն ներկայացրեց Հանրակրթության պետական նոր չափորոշչով սահմանված ուսումնական բնագավառների կառուցվածքը՝ ընդգծելով դրանց փոխկապակցվածությունը, միջառարկայական ինտեգրման հնարավորությունները և սովորողների կարողունակությունների

զարգացմանն ուղղված հիմնական սկզբունքները: Կարևորվեց, որ ուսումնական գործընթացի պլանավորման, թեմատիկ պլանների մշակման և գնահատման ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել չափորոշչային պահանջներով՝ ապահովելով գիտելիքների, հմտությունների, արժեքների և կարողունակությունների համաչափ զարգացումը:

Անդրադարձ կատարվեց նաև 2026 թվականի ընթացքում ընդունված ՀՀ կառավարության և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության մի շարք նոր որոշումներին ու հրամաններին, որոնցով փոփոխություններ և լրացումներ են կատարվել հանրակրթության կազմակերպման, ուսումնական պլանների, գնահատման, մանկավարժական գործունեության, ներառական կրթության, դպրոցների անվտանգության ապահովման, ինչպես նաև կրթության կառավարման առանձին գործընթացները կարգավորող իրավական ակտերում:

Զեկուցողը հատուկ ուշադրություն հրավիրեց հանրակրթական ուսումնական հաստատությունների անվտանգության ապահովման նոր չափանիշների ներդրմանը՝ նշելով, որ յուրաքանչյուր աշխատակից պարտավոր է ծանոթ լինել սահմանված պահանջներին և իր գործունեությունը կազմակերպել դրանց համաձայն:

Նշվեց նաև, որ բոլոր մանկավարժները պետք է մինչև ուսումնական տարվա մեկնարկը մանրամասն ուսումնասիրեն ընդունված իրավական ակտերը, անհրաժեշտության դեպքում վերանայեն թեմատիկ պլանները, դասավանդման մեթոդներն ու գնահատման գործիքները՝ դրանք համապատասխանեցնելով գործող կարգավորումներին և Հանրակրթության պետական չափորոշչի պահանջներին:

Զեկուցողը կարևորեց նաև ուսուցիչների շարունակական մասնագիտական զարգացման, մեթոդական համագործակցության և փորձի փոխանակման անհրաժեշտությունը՝ ընդգծելով, որ կրթական բարեփոխումների արդյունավետ իրականացումը հնարավոր է միայն միասնական և համակարգված աշխատանքի պայմաններում:

Արտահայտվեցին՝ Մասնախմբի անդամները

Արտահայտվողներն իրենց ելույթներում կարևորեցին հանրակրթության ոլորտում իրականացվող բարեփոխումների հետևողական ներդրումը՝ նշելով, որ ընդունված իրավական ակտերը միտված են կրթության որակի բարձրացմանը, սովորողակենտրոն կրթության զարգացմանը և ուսուցման գործընթացի առավել արդյունավետ կազմակերպմանը:

Նրանք ընդգծեցին, որ Հանրակրթության պետական նոր չափորոշչի պահանջների լիարժեք իրականացումը պահանջում է ուսուցիչների շարունակական ինքնակրթություն, մասնագիտական վերապատրաստումների ակտիվ մասնակցություն, ինչպես նաև մեթոդական միավորումների շրջանակում արդյունավետ համագործակցություն և փորձի փոխանակում:

Արտահայտվողները կարևորեցին ուսումնական բնագավառների միջև միջառարկայական կապերի ամրապնդումը, կարողունակահեն ուսուցման սկզբունքների հետևողական կիրառումը, ժամանակակից գնահատման մեթոդների ներդրումը և ուսուցման գործընթացում տեղեկատվական տեխնոլոգիաների արդյունավետ օգտագործումը:

Առանձնակի ուշադրություն դարձվեց նաև հանրակրթական հաստատությունների անվտանգության ապահովման նոր չափանիշներին՝ նշելով, որ յուրաքանչյուր մանկավարժ պետք է իր գործունեության ընթացքում առաջնորդվի սահմանված պահանջներով և նպաստի դպրոցում անվտանգ, առողջ և ներառական կրթական միջավայրի պահպանմանը:

Արտահայտվողները համոզմունք հայտնեցին, որ օրենսդրական փոփոխությունների և չափորոշչային պահանջների պատշաճ կիրառումը կնպաստի կրթության որակի շարունակական բարձրացմանը և 2026–2027 ուսումնական տարվա արդյունավետ կազմակերպմանը։

Որոշեցին՝

1. Ընդունել ի գիտություն 2026–2027 ուսումնական տարվա նախապատրաստման վերաբերյալ ներկայացված զեկույցը։
2. Ապահովել ուսումնական գործընթացի կազմակերպումը Հանրակրթության պետական նոր չափորոշչի, գործող ուսումնական պլանների և հանրակրթության ոլորտը կարգավորող իրավական ակտերի պահանջներին համապատասխան։
3. Հանձնարարել մանկավարժներին վերանայել և անհրաժեշտության դեպքում համապատասխանեցնել թեմատիկ պլանները, գնահատման ձևերն ու դասավանդման մեթոդները գործող իրավական կարգավորումներին և Հանրակրթության պետական նոր չափորոշչի պահանջներին։
4. Ուժեղացնել աշխատանքները հանրակրթական ուսումնական հաստատությունների անվտանգության նոր չափանիշների ներդրման, ներքին կարգապահական պահանջների պահպանման և անվտանգ կրթական միջավայրի ապահովման ուղղությամբ։
5. Խթանել մանկավարժների մասնագիտական շարունակական զարգացումը, փորձի փոխանակումը և մեթոդական համագործակցությունը՝ կրթական բարեփոխումների արդյունավետ իրականացման նպատակով։

Լսեցին 9. ԱՈՒՊ-ներով և դիտարկման թերթիկներով իրականացված աշխատանքների ամփոփում։

(զեկուցող՝ Ա. Ծատրյան)

Զեկուցողը ներկայացրեց 2025–2026 ուսումնական տարվա ընթացքում բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդական միավորման կողմից կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ԿԱՊԿՈՒԻ) սովորողների հետ իրականացված աշխատանքների արդյունքները՝ անդրադառնալով անհատական ուսուցման պլանների (ԱՈՒՊ) կատարմանը, սովորողների առաջընթացի մշտադիտարկմանը և մասնագիտական համագործակցության արդյունավետությանը։

Զեկուցողը հանգամանորեն ներկայացրեց յուրաքանչյուր ԿԱՊԿՈՒԻ սովորողի համար սահմանված կրթական նպատակների իրականացման ընթացքն ու ձեռք բերված արդյունքները։ Նշվեց, որ անհատական ուսուցման պլաններում ամրագրված նպատակներն ու խնդիրները մշակվել են սովորողների կրթական կարիքներին և հնարավորություններին համապատասխան, իսկ դրանց իրականացումը եղել է հետևողական և համակարգված։

Անդրադառնալով ԱՈՒՊ-ների կատարողականին՝ զեկուցողը նշեց, որ բնագիտամաթեմատիկական առարկաների շրջանակում յուրաքանչյուր սովորողի համար նախատեսված անհատական ուսուցման պլաններն ու իրականացված հարմարեցումները հիմնականում ծառայել են իրենց նպատակին։ Ուսուցիչների, ուսուցչի օգնականների, հատուկ մանկավարժների և աջակցող թիմի համատեղ աշխատանքի շնորհիվ սովորողները կարողացել են յուրացնել իրենց կարողություններին համապատասխան նվազագույն չափորոշչային պահանջները, արձանագրել դրական առաջընթաց և ակտիվորեն ներգրավվել ուսումնական գործընթացում։

Խոսելով դիտարկման թերթիկների վարման մասին՝ զեկուցողը կարևորեց դրանց կանոնավոր, հետևողական և պատշաճ լրացումը՝ նշելով, որ դրանք

հնարավորություն են տվել համակարգված կերպով արձանագրելու յուրաքանչյուր սովորողի ուսումնական առաջընթացը, մասնակցության ակտիվությունը, վարքային առանձնահատկությունները, սոցիալական փոխհարաբերությունները և մոտիվացիոն փոփոխությունները: Ընդգծվեց, որ դիտարկման արդյունքները հիմք են հանդիսացել հետագա աշխատանքների պլանավորման, անհատական մոտեցումների ընտրության և անհրաժեշտ աջակցությունների կազմակերպման համար:

Անդրադառնալով աջակցող թիմի հետ համագործակցությանը՝ զեկուցողը բարձր գնահատեց առարկայական ուսուցիչների, ուսուցչի օգնականների, հատուկ մանկավարժների, հոգեբանի և մյուս մասնագետների միջև ձևավորված արդյունավետ համագործակցությունը: Նշվեց, որ փոխադարձ խորհրդատվությունների, համատեղ դիտարկումների և պարբերական քննարկումների շնորհիվ հնարավոր է եղել յուրաքանչյուր սովորողի համար ստեղծել անվտանգ, ներառական և ընդունող կրթական միջավայր, ապահովել անհատական կրթական կարիքներին համապատասխան աջակցություն և նպաստել նրանց կրթական ու սոցիալական զարգացմանը:

Ամփոփելով՝ զեկուցողը նշեց, որ ԿԱՊԿՈՒՀ սովորողների հետ տարվող աշխատանքներն ընդհանուր առմամբ եղել են արդյունավետ և նպատակային:

Միաժամանակ ընդգծվեց, որ անհրաժեշտ է շարունակել անհատականացված ուսուցման, միջմասնագիտական համագործակցության և ներառական կրթության սկզբունքների հետևողական կիրառումը՝ յուրաքանչյուր սովորողի կրթական առաջընթացն ու լիարժեք ներառումն ապահովելու նպատակով:

Արտահայտվեցին՝ Մասնախմբի անդամները

Արտահայտվողներն իրենց ելույթներում բարձր գնահատեցին կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ԿԱՊԿՈՒՀ) սովորողների հետ իրականացված նպատակային և հետևողական աշխատանքները՝ ընդգծելով, որ անհատական ուսուցման պլանների (ԱՈՒՊ) արդյունավետ իրականացումը կարևոր նախապայման է յուրաքանչյուր սովորողի կրթական առաջընթացի և ներառական կրթության ապահովման համար:

Նշվեց, որ առարկայական ուսուցիչների, ուսուցչի օգնականների, հատուկ մանկավարժների, հոգեբանի և աջակցող թիմի մյուս մասնագետների միջև ձևավորված համագործակցությունը նպաստել է սովորողների անհատական կրթական կարիքների առավել արդյունավետ գնահատմանը, համապատասխան մանկավարժական մոտեցումների կիրառմանը և ուսումնական գործընթացում նրանց ակտիվ մասնակցության ապահովմանը:

Արտահայտվողները կարևորեցին անհատական ուսուցման պլանների նպատակային իրականացումը և դիտարկման թերթիկների կանոնավոր ու բովանդակային վարումը՝ նշելով, որ դրանք հնարավորություն են տալիս շարունակաբար գնահատել սովորողների կրթական առաջընթացը, արձանագրել ձեռքբերումներն ու դժվարությունները, ինչպես նաև ժամանակին վերանայել կիրառվող մանկավարժական մոտեցումներն ու աջակցության ձևերը:

Ելույթ ունեցողներն ընդգծեցին, որ ներառական կրթության արդյունավետ իրականացումը պահանջում է բոլոր մասնակիցների՝ վարչակազմի, առարկայական ուսուցիչների, դասղեկների, ուսուցչի օգնականների, հատուկ մանկավարժների, հոգեբանի և ծնողների համակարգված ու շարունակական համագործակցություն: Նշվեց նաև, որ կարևոր է պահպանել յուրաքանչյուր սովորողի նկատմամբ անհատական մոտեցումը, ստեղծել աջակցող և ընդունող կրթական միջավայր, ինչպես նաև շարունակաբար կատարելագործել ներառական կրթության կազմակերպման մեթոդներն ու գործիքները:

Ամփոփելով՝ արտահայտվողները փաստեցին, որ 2025–2026 ուսումնական տարվա ընթացքում ԿԱՊԿՈՒՀ սովորողների հետ իրականացված աշխատանքները եղել են արդյունավետ և նպաստել են նրանց կրթական, սոցիալական և անձնային զարգացմանը: Առաջարկվեց հաջորդ ուսումնական տարում ևս շարունակել և ընդլայնել միջմասնագիտական համագործակցությունը, ապահովել անհատական ուսուցման պլանների որակյալ իրականացումը և հետևողականորեն զարգացնել ներառական կրթության արդյունավետ փորձը:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում ԱՈՒՊ-ներով և դիտարկման թերթիկներով իրականացված աշխատանքների մասին տեղեկատվությունը:

Լսեցին 10. 2026-2027 ուսումնական տարվա ուսումնական պլանով սահմանված դասաժամերի նախնական բաշխման և տնօրենին առաջարկություն ներկայացնելու մասին հարցը:

(զեկուցողներ՝ Ա. Դաջունց)

Զեկուցող Անուշ Դաջունցը ներկայացրեց 2026–2027 ուսումնական տարվա դասաժամերի նախնական բաշխման նախագիծը՝ նշելով, որ այն մշակվել է հաստատության ուսումնական պլանի, դասարանների համալրվածության, ուսումնական բեռնվածության, առարկայական ժամաքանակների, մանկավարժների մասնագիտական որակավորման և գործող իրավական ակտերի պահանջների հիման վրա:

Զեկուցողը նշեց, որ դասաժամերի նախնական բաշխման նախագիծը կազմվել է՝ հիմք ընդունելով դպրոցի կանոնադրության 87-րդ կետի 10-րդ ենթակետի և հանրակրթական ուսումնական հաստատության կանոնադրության օրինակելի ձևում կատարված փոփոխությունների 93-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջները, որոնց համաձայն մանկավարժական խորհուրդը քննարկում է դասաբաշխման նախագիծը և ներկայացնում առաջարկություններ՝ մինչև դրա վերջնական հաստատումը:

Ընդգծվեց, որ դասաժամերի բաշխման ընթացքում պահպանվել են արդարության, թափանցիկության, արդյունավետության և մանկավարժական նպատակահարմարության սկզբունքները: Նախագիծը կազմելիս հաշվի են առնվել ուսուցիչների մասնագիտական պատրաստվածությունը, որակավորման համապատասխանությունը, նախորդ տարիների աշխատանքային փորձը, ուսումնական ծանրաբեռնվածության համաչափ բաշխումը, ինչպես նաև ուսումնական գործընթացի անխափան և արդյունավետ կազմակերպման անհրաժեշտությունը:

Անուշ Դաջունցը նշեց, որ ներկայացված նախագիծը նախնական բնույթ է կրում, քանի որ այն կարող է փոփոխության ենթարկվել՝ պայմանավորված 2026–2027 ուսումնական տարվա ուսումնական պլանների վերջնական հաստատմամբ, դասարանների կազմավորման գործընթացով, մանկավարժական կադրերի փոփոխություններով, ինչպես նաև հանրակրթության ոլորտում ընդունված նոր իրավական կարգավորումներով:

Զեկուցողը տեղեկացրեց, որ Հանրակրթության պետական նոր չափորոշչի ներդրման հաջորդ փուլի շրջանակում 2026–2027 ուսումնական տարում նախատեսվում են փոփոխություններ 2–9-րդ դասարանների ուսումնական պլաններում, որոնք կարող են վերաբերել ինչպես առանձին առարկաների ժամաքանակներին, այնպես էլ առարկայացանկին: Այդ հանգամանքով պայմանավորված՝ առաջարկվեց 2–9-րդ դասարանների դասաժամերի վերջնական բաշխումը քննարկել նաև մանկավարժական խորհրդի օգոստոսյան առաջին նիստում՝ բոլոր իրավական և կազմակերպչական հիմքերի վերջնական հստակեցումից հետո:

Ամփոփելով՝ զեկուցողը նշեց, որ ներկայացված նախագիծը նպատակ ունի նախապես կազմակերպել նոր ուսումնական տարվա աշխատանքները, ապահովել ուսուցիչների հավասարակշռված ծանրաբեռնվածությունը և ստեղծել անհրաժեշտ պայմաններ 2026–2027 ուսումնական տարվա կազմակերպված մեկնարկի համար։

Արտահայտվեցին՝ Մասնախմբի ուսուցիչները

Արտահայտվողներն իրենց ելույթներում անդրադարձան ներկայացված դասաժամերի նախնական բաշխման նախագծին՝ նշելով, որ այն կազմվել է գործող իրավական ակտերի, հաստատության ուսումնական պլանի և ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպման սկզբունքներին համապատասխան։ Նրանք կարևորեցին դասաժամերի հավասարակշռված և արդար բաշխումը՝ ընդգծելով, որ այն նպաստում է մանկավարժների աշխատանքային ծանրաբեռնվածության արդյունավետ կազմակերպմանը և ուսումնական գործընթացի անխափան իրականացմանը։

Ելույթ ունեցողները բարձր գնահատեցին դասաբաշխման նախագծի մշակման ընթացքում կիրառված սկզբունքները՝ մասնավորապես հաշվի առնելով ուսուցիչների մասնագիտական պատրաստվածությունը, առարկայական համապատասխանությունը, նախորդ տարիների փորձը և հաստատության շահերը։ Նշվեց, որ նման մոտեցումը նպաստում է կրթության որակի բարձրացմանը և սովորողների համար առավել արդյունավետ ուսումնական միջավայրի ձևավորմանը։

Արտահայտվողները նաև ընդգծեցին, որ ներկայացված նախագիծը կրում է նախնական բնույթ, և դրա վերջնական տարբերակը կարող է ճշգրտվել՝ հաշվի առնելով 2026–2027 ուսումնական տարվա ուսումնական պլանների վերջնական հաստատումը, 2–9-րդ դասարանների առարկայացանկում և ժամաքանակներում նախատեսվող փոփոխությունները, ինչպես նաև նոր ուսումնական տարվա ընթացքում առաջացող կազմակերպչական անհրաժեշտությունները։

Միաժամանակ առաջարկվեց 2–9-րդ դասարանների դասաժամերի վերջնական բաշխումը քննարկել նաև մանկավարժական խորհրդի օգոստոսյան առաջին նիստում՝ բոլոր իրավական և կազմակերպչական հիմքերի հստակեցումից հետո։ Արտահայտվողները համոզմունք հայտնեցին, որ վերջնական դասաբաշխումը պետք է ապահովի ինչպես ուսուցիչների ծանրաբեռնվածության ողջամիտ բաշխումը, այնպես էլ ուսումնական գործընթացի կայուն, արդյունավետ և որակյալ կազմակերպումը։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2026-2027 ուսումնական տարվա դասաժամերի նախնական բաշխումը և տնօրենին ներկայացնել առաջարկություն (կցվում է)։

Լսեցին 11. 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում իրականացված արտադասարանական խմբակների կատարողականների քննարկման մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Գևորգյան, խմբավարներ)

Զեկուցողը ներկայացրեց 2025–2026 ուսումնական տարվա ընթացքում իրականացված արտադասարանական խմբակների գործունեության ամփոփ արդյունքները՝ անդրադառնալով խմբակների կազմակերպման, կատարված աշխատանքների արդյունավետության, փաստաթղթավորման և վերահսկողության արդյունքներին։

Արմիդա Գևորգյանը կարևորեց արտադասարանական խմբակների դերը սովորողների նախասիրությունների բացահայտման, ստեղծագործական, ինտելեկտուալ, մարզական և գեղարվեստական կարողությունների զարգացման, ինչպես նաև նրանց ազատ ժամանակի արդյունավետ կազմակերպման գործում։ Նա նշեց, որ խմբակների գերակշիռ մասն

իրականացրել է իր առջև դրված նպատակներն ու խնդիրները՝ նպաստելով սովորողների ակտիվ մասնակցությանը և բազմակողմանի զարգացմանը։
Միաժամանակ զեկուցողն արձանագրեց, որ ուսումնական տարվա ընթացքում եղել են դեպքեր, երբ առանձին խմբավարներ խմբակային պարապմունքները չեն իրականացրել հաստատված ժամանակացույցին համապատասխան կամ չեն ապահովել դրանց կանոնավոր անցկացումը։ Նշվեց, որ նման դեպքերը բացասաբար են անդրադարձել խմբակների արդյունավետության և սովորողների շարունակական մասնակցության վրա։
Արմիդա Գևորգյանն անդրադարձավ նաև խմբակային գործունեության փաստաթղթավորման գործընթացին՝ նշելով, որ ինչպես ընթացիկ մշտադիտարկումների, այնպես էլ ուսումնական տարվա ավարտին իրականացված ամփոփ ուսումնասիրությունների ընթացքում արձանագրվել են խմբակների մատենավարման հետ կապված մի շարք թերություններ։ Մասնավորապես, առանձին դեպքերում մատյանները լրացվել են ոչ ամբողջական կամ ուշացումներով, չեն պահպանվել անհրաժեշտ գրառումների ամբողջականությունն ու ձևաչափային պահանջները։ Ընդգծվեց, որ խմբակային փաստաթղթերի պատշաճ վարումը յուրաքանչյուր խմբավարի անմիջական պարտականությունն է և ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպման կարևոր բաղադրիչներից մեկը։
Խմբավարները ներկայացրին 2025–2026 ուսումնական տարվա ընթացքում իրականացված աշխատանքների հաշվետվությունները՝ անդրադառնալով խմբակների գործունեության հիմնական ուղղություններին, կազմակերպված միջոցառումներին, արձանագրված ձեռքբերումներին, սովորողների մասնակցության ակտիվությանը, ինչպես նաև գործունեության ընթացքում հանդիպած դժվարություններին և դրանց հաղթահարման ուղղությամբ կատարված աշխատանքներին։
Զեկուցողը ներկայացրեց նաև ուսումնական տարվա ընթացքում խմբակների գործունեության նկատմամբ իրականացված դիտարկումների և ներքին վերահսկողության արդյունքները։ Նշվեց, որ խմբակների մեծ մասում պարապմունքներն իրականացվել են նպատակային, բովանդակալից և արդյունավետ, իսկ սովորողները ցուցաբերել են ակտիվ մասնակցություն և կայուն հետաքրքրվածություն։ Միաժամանակ արձանագրվեց, որ առանձին խմբակներում աշխատանքների կազմակերպման մակարդակը չի համապատասխանել ակնկալվող չափանիշներին, ինչն արտահայտվել է մասնակցության ցածր ակտիվությամբ, ծրագրային աշխատանքների թերի իրականացմամբ կամ կազմակերպչական բացթողումներով։
Ամփոփելով՝ Արմիդա Գևորգյանը նշեց, որ 2026–2027 ուսումնական տարվա արտադասարանական խմբակների ձևավորման և ժամաբաշխման գործընթացում նպատակահարմար է հաշվի առնել ընթացիկ տարվա դիտարկումների արդյունքները, յուրաքանչյուր խմբավարի աշխատանքի արդյունավետությունը, սովորողների հետաքրքրվածության աստիճանը և խմբակների փաստացի պահանջարկը՝ ապահովելով արտադասարանական կրթության առավել արդյունավետ կազմակերպումը։

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը

Սերգեյ Ավանեսյանն իր ելույթում կարևորեց 2025–2026 ուսումնական տարվա ընթացքում իրականացված արտադասարանական խմբակների գործունեության արդյունքները՝ նշելով, որ դրանք նպաստել են սովորողների հետաքրքրությունների բացահայտմանը, ստեղծագործական, ճանաչողական և սոցիալական կարողությունների զարգացմանը, ինչպես նաև դպրոցական կյանքի ակտիվացմանը։
Նա ընդգծեց, որ յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին անհրաժեշտ է իրականացնել խմբակների գործունեության համակողմանի վերլուծություն՝

գնահատելով դրանց արդյունավետությունը, սովորողների ներգրավվածության մակարդակը, իրականացված աշխատանքների արդյունքները և կազմակերպչական գործընթացները: Նրա խոսքով՝ նման վերլուծությունը հնարավորություն կտա բացահայտելու առկա խնդիրներն ու թերությունները, պարզելու դրանց առաջացման պատճառները և նախանշելու դրանց հաղթահարման արդյունավետ ուղիները:

Սերգեյ Ավանեսյանը կարևորեց նաև, որ 2026–2027 ուսումնական տարվա խմբակների պլանավորման և ժամաբաշխման ընթացքում հաշվի առնվեն ընթացիկ տարվա դիտարկումների և վերլուծությունների արդյունքները: Նա նշեց, որ անհրաժեշտ է մշակել հստակ մեխանիզմներ՝ կազմակերպչական բացթողումները բացառելու, խմբակների արդյունավետությունը բարձրացնելու և ապահովելու, որպեսզի արձանագրված խնդիրները հետագա ուսումնական տարիներին չկրկնվեն:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում իրականացված արտադասարանական խմբակների կատարողականների մասին զեկուցումը:

Լսեցին 12. 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում իրականացված աշխատանքների հաշվետվությունների քննարկման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Դաջունց, ՄՄ անդամներ)

Զեկուցողը ներկայացրեց 2025–2026 ուսումնական տարվա ընթացքում մեթոդական միավորման գործունեության տարեկան հաշվետվությունը՝ ամփոփելով իրականացված աշխատանքները, ձեռքբերումները, արձանագրված խնդիրներն ու հետագա անելիքները:

Նշվեց, որ մեթոդական միավորման անդամներն իրենց գործունեությունը կազմակերպել են տարեկան աշխատանքային պլանին համապատասխան՝ նպատակ ունենալով ապահովել ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպումը, դասավանդման որակի շարունակական բարձրացումը, Հանրակրթության պետական չափորոշչի պահանջների իրականացումը և մանկավարժների մասնագիտական համագործակցության զարգացումը:

Զեկուցողը հանգամանորեն ներկայացրեց ուսումնական տարվա ընթացքում իրականացված աշխատանքները՝ անդրադառնալով մեթոդական միավորման նիստերին, բաց դասերին, փոխադարձ դասալսումներին, թեմատիկ և ընթացիկ քննարկումներին, սովորողների գիտելիքների ստուգման և գնահատման գործընթացներին, առարկայական միջոցառումներին, ինչպես նաև ուսուցիչների մասնագիտական զարգացմանն ուղղված աշխատանքներին: Առանձնացվեցին իրականացված նախաձեռնությունների դրական արդյունքները, արձանագրված հաջողությունները և այն ուղղությունները, որոնցում առկա են կատարելագործման կարիքներ:

Նշվեց, որ ուսումնական տարվա սկզբում հաստատված տարեկան ժամանակացույցով նախատեսված աշխատանքների գերակշիռ մասն իրականացվել է սահմանված ժամկետներում: Միաժամանակ արձանագրվեց, որ առանձին միջոցառումներ և մեթոդական նախաձեռնություններ ամբողջությամբ չեն իրականացվել՝ պայմանավորված կազմակերպչական, ժամանակային և օբյեկտիվ այլ հանգամանքներով: Զեկուցողը կարևորեց հաջորդ ուսումնական տարում այդ բացթողումների վերացմանն ուղղված առավել նպատակային և համակարգված աշխատանքի իրականացումը

Արտահայտվեցին՝ Մասնանախմբի անդամները:

Մեթոդական միավորման անդամ ուսուցիչները ներկայացրին իրենց անհատական հաշվետվությունները՝ ամփոփելով ուսումնական տարվա ընթացքում իրականացված մանկավարժական գործունեությունը, դասավանդման ընթացքում կիրառված մեթոդներն ու նորարարական

մոտեցումները, սովորողների առաջադիմության արդյունքները, արձանագրված դժվարություններն ու դրանց հաղթահարման ուղղությամբ իրականացված աշխատանքները։

Հաշվետվություններում առանձնահատուկ ուշադրություն դարձվեց կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ԿԱՊԿՈՒ) սովորողների հետ իրականացված աշխատանքներին։ Ուսուցիչները ներկայացրին անհատական ուսուցման պլանների կատարման ընթացքը, կիրառված հարմարեցումները, աջակցող մասնագետների հետ համագործակցության արդյունքները և սովորողների կրթական առաջընթացի վերաբերյալ դիտարկումները՝ ընդգծելով ներառական կրթության սկզբունքների հետևողական կիրառման կարևորությունը։

Ամփոփելով՝ մեթոդական միավորման անդամները կարևորեցին համագործակցային աշխատանքի, մասնագիտական փորձի փոխանակման, փոխադարձ աջակցության և մեթոդական քննարկումների դերը՝ որպես ուսուցման որակի բարձրացման և կրթական գործընթացի շարունակական կատարելագործման կարևոր գործոններ։ Ընդգծվեց, որ հաջորդ ուսումնական տարում անհրաժեշտ է շարունակել արդյունավետ համագործակցությունը, ներդնել նոր մանկավարժական մոտեցումներ և հետևողականորեն իրականացնել տարեկան աշխատանքային պլանով նախատեսված բոլոր միջոցառումները։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում մեթոդմիավորման անդամների կողմից իրականացված աշխատանքների հաշվետվությունների մասին զեկուցումը։

Լսեցին՝13. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման անվան փոփոխության մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը ներկայացրեց մեթոդական միավորման կազմակերպական կառուցվածքի վերաբերյալ կատարված փոփոխությունները՝ տեղեկացնելով, որ 2026 թվականին ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից իրականացված կարգավորումների շրջանակում վերանայվել է բնագիտամաթեմատիկական մեթոդմիավորման անվանումն ու գործունեության ոլորտային սահմանումը։

Նշվեց, որ կատարված փոփոխությունները պայմանավորված են հանրակրթության բովանդակության արդիականացման, ուսումնական բնագավառների հստակեցման և կրթության կազմակերպման նոր մոտեցումների ներդրման անհրաժեշտությամբ։ Նպատակն է առավել ճշգրիտ արտացոլել մեթոդմիավորման կազմում ընդգրկված առարկաների շրջանակը, դրանց փոխկապակցվածությունը և գործունեության հիմնական ուղղությունները։

Ըստ ներկայացված փոփոխությունների՝ 2026–2027 ուսումնական տարվանից բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորումը վերանվանվում է «Բնագիտական, տեխնոլոգիական, ճարտարագիտական, մաթեմատիկական» մեթոդմիավորում (այսուհետ՝ ԲՏՃՄ)։

Զեկուցողը նշեց, որ նոր անվանումը առավել համապարփակ է և ընդգրկուն կերպով արտահայտում է մեթոդմիավորման գործունեության բովանդակությունը՝ ներառելով ոչ միայն բնագիտական և մաթեմատիկական առարկաները, այլ նաև տեխնոլոգիական և ճարտարագիտական ուղղությունները, որոնք ժամանակակից կրթության համակարգում ունեն աճող կարևորություն։

Անդրադառնալով փոփոխության նպատակին՝ ընդգծվեց, որ այն ուղղված է մեթոդական աշխատանքի արդյունավետության բարձրացմանը,

առարկաների միջև միջառարկայական կապերի խորացմանը, ինչպես նաև սովորողների կարողունակությունների զարգացմանը STEM ուղղությամբ:
Ամփոփելով՝ զեկուցողը նշեց, որ անվանափոխությունը կրում է կազմակերպական և բովանդակային բնույթ և ենթադրում է մեթոդմիավորման գործունեության առավել համակարգված, ընդլայնված և ժամանակակից պահանջներին համապատասխանեցված իրականացում:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամներ

Արտահայտվողներն իրենց ելույթներում անդրադարձան մեթոդական միավորման անվանափոխությանը՝ նշելով, որ այն պայմանավորված է հանրակրթության բովանդակության արդիականացման գործընթացով և նպատակ ունի ավելի հստակ ու ամբողջական կերպով արտահայտել մեթոդմիավորման գործունեության ուղղությունները:
Նրանք ընդգծեցին, որ «Բնագիտական, տեխնոլոգիական, ճարտարագիտական, մաթեմատիկական» (ԲՏՃՄ) ձևաչափին անցումը կարևոր քայլ է ժամանակակից կրթական պահանջներին համապատասխանեցման տեսանկյունից, քանի որ այն հնարավորություն է տալիս ընդլայնելու առարկայական համագործակցությունը, խորացնելու միջառարկայական կապերը և զարգացնելու սովորողների գիտատեխնիկական մտածողությունը:
Արտահայտվողները կարևորեցին նաև այն հանգամանքը, որ նոր անվանումը առավել հստակ է ներկայացնում մեթոդմիավորման իրական բովանդակությունն ու գործունեության շրջանակը՝ ընդգրկելով ոչ միայն բնագիտական և մաթեմատիկական, այլև տեխնոլոգիական ու ճարտարագիտական ուղղությունները, որոնք ժամանակակից կրթության համակարգում ունեն առաջնային նշանակություն:
Միաժամանակ նշվեց, որ անվանափոխության գործընթացը պետք է ուղեկցվի բովանդակային աշխատանքի վերանայմամբ՝ ներառելով մեթոդական նոր մոտեցումներ, ուսումնական ծրագրերի կատարելագործում, STEM ուղղվածության զարգացում և ուսուցիչների շարունակական մասնագիտական վերապատրաստումներ:
Արտահայտվողները համոզմունք հայտնեցին, որ կատարված փոփոխությունները կնպաստեն մեթոդմիավորման աշխատանքի արդյունավետության բարձրացմանը, ուսումնական գործընթացի արդիականացմանը և սովորողների կարողունակությունների զարգացմանը՝ համապատասխանելով կրթության ժամանակակից պահանջներին:

Որոշեցին՝

1. Ընդունել ի գիտություն Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման անվան փոփոխությունը
2. Հետագա գործունեության ընթացքում առաջնորդվել նոր անվամբ՝ «Բնագիտական, տեխնոլոգիական, ճարտարագիտական, մաթեմատիկական» մեթոդմիավորում (այսուհետ՝ ԲՏՃՄ):

Լսեցին՝ 14. «ԹԳՀԳ» առարկայի դասաժամերի ընթացքում դասարանների խմբերի բաժանման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը ներկայացրեց 2026–2027 ուսումնական տարում «ԹԳՀԳ» առարկայի դասաժամերի ընթացքում դասարանների խմբային ուսուցմամբ կազմակերպելու անհրաժեշտությունն ու նպատակահարմարությունը՝ հիմնվելով ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացման և սովորողների անհատական ներգրավվածության ապահովման պահանջի վրա:
Նշվեց, որ դասարանների խմբային բաժանումը հնարավորություն է տալիս առավել արդյունավետ կազմակերպել ուսումնական գործընթացը՝

ապահովելով յուրաքանչյուր սովորողի ակտիվ մասնակցությունը, ուսուցման անհատական մոտեցման կիրառումը և ուսումնառության որակի բարձրացումը: Զեկուցողը ընդգծեց, որ փոքր խմբերով ուսուցման պայմաններում ուսուցիչը կարողանում է առավել նպատակային վերահսկել սովորողների աշխատանքը, անհատապես աջակցել նրանց և ապահովել ուսումնական նյութի առավել խորքային յուրացում:

Առանձնահատուկ կարևորվեց «ԹԳՀԳ» առարկայի գործնական բաղադրիչի արդյունավետ կազմակերպումը փոքր խմբերում, քանի որ առկա նյութատեխնիկական պայմանները՝ մասնավորապես համակարգչային դասասենյակում համակարգիչների սահմանափակ քանակը, դժվարություններ են ստեղծում բարձր խտությամբ դասարաններում լիարժեք ուսուցում իրականացնելու համար: Նման պայմաններում խմբային ուսուցումը դիտարկվում է որպես առավել նպատակահարմար և արդյունավետ լուծում:

Զեկուցողը առաջարկեց 2–9-րդ դասարաններում, այն դեպքերում, երբ դասարանում սովորողների թիվը կազմում է 20 և ավելի, դասարանը բաժանել երկու հավասար խմբի՝ «ԹԳՀԳ» առարկայի դասաժամերի շրջանակում: Այս մոտեցումը հնարավորություն կտա ապահովել առավել որակյալ ուսուցում, բարձրացնել սովորողների ակտիվ ներգրավվածությունը դասապրոցեսին, զարգացնել նրանց գործնական հմտությունները և խթանել հետաքրքրությունը առարկայի նկատմամբ:

Ամփոփելով՝ զեկուցողը նշեց, որ խմբային ուսուցման ներդրումը «ԹԳՀԳ» առարկայի շրջանակում կնպաստի ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացմանը, սովորողների կարողունակությունների զարգացմանը և կրթական արդյունքների բարելավմանը՝ ներառյալ առարկայական մրցույթներում և կրթական նախաձեռնություններում նրանց հաջող մասնակցությունը:

Զեկուցողը նշեց նաև, որ 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում հանրակրթական հիմնական (ընդհանուր (այդ թվում՝ ազգային փոքրամասնությունների սովորողների համար ուսուցում կազմակերպող), մասնագիտացված եվ հատուկ) պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 1-11-րդ դասարաններում ուսումնական գործընթացի կազմակերպման ուղեցույցի 5-րդ կետի համաձայն հաստատության 2-9-րդ դասարաններում «Օտար լեզու»-1, «Օտար լեզու»-2, 2-11-րդ դասարաններում «Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն» (այսուհետ՝ ԹԳՀԳ) (համակարգչային դասարանի առկայության դեպքում), ինչպես նաև 7-11-րդ դասարաններում «Հայոց լեզու» առարկաների դասաժամերին դասարանը կարելի է բաժանել երկու խմբի, եթե սովորողների թիվը 20 և ավելի է:

6-րդ կետի համաձայն «Տեխնոլոգիա» առարկայի (5-6-րդ դասարաններ) պարապմունքներին դասարանը կարելի է բաժանել երկու խմբի, եթե սովորողների թիվը 20 և ավելի է:

Արտահայտվեցին՝ Մասնախմբի անդամները

Արտահայտվողներն իրենց ելույթներում ընդգծեցին, որ դասարանների խմբային բաժանումը «ԹԳՀԳ» առարկայի շրջանակում կնպաստի սովորողների գիտելիքների առավել խորքային և համակարգված յուրացմանը, ինչպես նաև ուսուցչի կողմից յուրաքանչյուր սովորողի առաջադիմության, կրթական կարիքների և անհատական առանձնահատկությունների նկատմամբ առավել նպատակային ուշադրության ապահովմանը:

Նշվեց, որ խմբային ուսուցման պայմաններում հնարավոր է դառնում դասապրոցեսի առավել արդյունավետ կազմակերպումը, սովորողների ակտիվ ներգրավվածության բարձրացումը, ուսումնական նյութի գործնական

կիրառման ընդլայնումը և դասի ընդհանուր արդյունավետության զգալի բարելավումը։

Օլյա Ղուլյանը իր ելույթում ընդգծեց, որ խմբային ուսուցման կազմակերպումը հատկապես կարևոր է «ԹԳՀԳ» առարկայի գործնական աշխատանքների իրականացման տեսանկյունից՝ հաշվի առնելով նաև համակարգչային լաբորատորիայի տեխնիկական ապահովվածությունը և սարքավորումների սահմանափակ քանակը։ Նրա խոսքով՝ փոքր խմբերով աշխատանքը հնարավորություն է տալիս առավել արդյունավետ օգտագործել առկա տեխնիկական միջոցները և ապահովել յուրաքանչյուր սովորողի գործնական ներգրավվածությունը։

Մեթոդմիավորման անդամները նշեցին, որ ներկայացված առաջարկությունը հիմնավորված է և արդիական, իսկ տարիների մանկավարժական փորձը վկայում է, որ նման կազմակերպման ձևը նպաստում է ուսուցման որակի բարձրացմանը, սովորողների հետաքրքրվածության աճին և առարկայի նկատմամբ կայուն մոտիվացիայի ձևավորմանը։

Ամփոփելով՝ արտահայտվողները կարևորեցին առաջարկության գործնական նշանակությունը և դրա ներդրումը դիտարկեցին որպես ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացման կարևոր քայլ։

Որոշեցին՝ 1. Հիմք ընդունելով գործող կարգավորումներն ու ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպման անհրաժեշտությունը՝ 2026-2027 ուսումնական տարում «ԹԳՀԳ» առարկայի դասաժամերի ընթացքում խմբերի բաժանել այն դասարանները, որոնցում սովորողների թիվը կազմում է 20 և ավելի։

2. Ներկայացնել համապատասխան առաջարկությունը մանկավարժական խորհրդի նիստի ընթացքում։

Մ/Մ նախագահ՝ _____ Ա. Դաջունց

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Առարկայական մեթոդական միավորման արձանագրությունների ամփոփման

2025-2026 ուսումնական տարվա ընթացքում *Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորումը* գումարել է *12 նիստ*, որոնց համար կազմվել է *12 արձանագրություն:*

Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նիստերի տվյալները՝ ստորև.

№	ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐԸ	ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՄՍԱԹԻՎԸ	ՔՆՆԱՐԿՎԱԾ ՕՐԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԱՐՑԵՐԻ ՔԱՆԱԿԸ
1	1	21.08.2025թ	13
2	2	26.09.2025թ	6
3	3	22.10.2025թ	7
4	4	26.11.2025թ	6
5	5	23.12.2025թ	16
6	6	30.01.2026թ	8
7	7	25.02.2026թ	10
8	8	25.03.2026թ	6
9	9	29.04.2026թ	9
10	10	05.05.2026թ	2 (արտահերթ)
11	11	29.05.2026թ	7
12	12	26.06.2026թ	14

Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման սույն արձանագրությունների մատյանը կազմված է *103* էջից:

Մ/Մ նախագահ՝ _____ Ա. Դաջունց

«26» հունիսի 2026թ.